

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ե. Զ. ՌԱՍՈՒԵԼ

ԲՈՒՀԱՆԵՐԻ
ՍՆՆԴԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ՑԵՎ ՀՈԼԻ
ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ



ԳՅՈՒՂՅՈՒՆ

EDS. 88. S. 5

11

12

13

04 AUG 2010

22.08.2013

631

2-74

ug.

Ե. Զ. ՌՈՍՏԵԼ

ԲՈՒՅՈՒՐԻ ՍՆՆԴԱՌՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵԿ

ՀՈՂԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1006
28369

2856



ԳՅՈՒՂՀԱՆԱ

1934



Е. Дж. Рёссель

отечественные химические
способы и результаты

ПИТАНИЕ РАСТЕНИЙ
и
УРОЖАЙНОСТЬ

PLANT NUTRITION
and
CROP PRODUCTION

By
E. J. Russell

ՏԵՂԻՆԱԿԱՆ ԿԱՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Գ. ՍԱՐՋԱՆԻ կը Ա. ՀԱԿՈԲՅԱՆԻ

PLANT PROPAGATION

ԱՐԺԱԿԱԿԾԵՐ

PLANT PROPAGATION

CROP PRODUCTION

ԲԱՐԵՎԱՐԴԱՐ

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ

ՀԱՅԵՐԵՆ ՊԱՐԳՈՒԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԵՎ

FOREWORD

I take great pride in knowing that this book of mine should be translated into Armenian [REDACTED] and I hope it may prove useful in interesting students in the wonderful science of plant growth.

It was with peculiar delight I visited your country in 1930 and saw the places of which I had so often read: when I saw also the efforts now being made to rebuild your country, keeping the best of its ancient culture and adding to it the best of the new.

Harpden, Harts.
July, 1933.

E. G. Russell

Ցես համակվեցի մեծ հպարտությամբ, յերբ իմացա, վոր [REDACTED] թարգմանել ե իմ գիրքը հայերեն, և հույս ունեմ, վոր նա կարող ե ոգտակար լինել բույսերի զարգանալի զարգացման խնդիրների ուսումնասիրության ժամանակ:

Ինձ առանձին հաճույք պատճառեց, յերբ 1930 թվին յես այցելեցի ձեր յերկիրը և տեսա այն տեղերը, վորոնց մասին յես այնքան շատ կարգացել եմ: Միաժամանակ տեսա, թե ինչպիսի լարված աշխատանքով դուք վերականգնում եք ձեր յերկիրը, պահելով ձեր հին կուլտուրայից լավագույնը՝ ավելացնելով նրան այն բոլոր նորը, ինչ նույնպես լավագույնն ե:

Ե. Զ. ՌՈՍՍԵԼԼ

Հարպենի, Հերթ
Հուլիս, 1933

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲՈՒՅԱԵՐԻ ՍՆՆԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս աղբյուրները, վորոնցից բույսերն առնում են իրենց նյութերը, բնագետների ուշադրությունը գրավել են եքսպերիմենտների գարաջրջանն սկսվելուց դեռ շատ առաջ: Այդ հին գիտնականների յերկու սպեկուլյացիաներն ապրեցին միքանի հարյուր տարի և խոր ազգեցնելուն արին բնագիտության վրա՝ հրաժարում սկզբնական շրջանում: Մրանցից մեկը՝ հնագույնը՝ վերագրվում է Թալեսին (600 տարի մեր գարաջրջանից առաջ), ըստ վորի բույսերն իրենց ամբողջ սնունդն ստանում և բոլոր նյութերն արտադրում են ջրից: Հստ յերկրորդի՝ բույսերը սնվում են հողի միջի բուսական և կենդանական մեղած նյութերից: սա հիմնվում եր այն սխալ սկզբունքի վրա, ըստ վորի՝ բույսերը, նյութ բոլոր ապրող եյակների նման, կարող են սնվել միմիայն իրենց բնույթի նյութերով և վոչ տարբեր բնույթի:

Բույսերի ջրով սնվելու տեսակետը փորձել և 1620 թվականի մոտեքը Փան Հելմոնտը և կարծես լրիվ կերպով ապացուցել և այդ, իր գեղեցիկ և համոզիչ փորձի միջոցով:

«Յես վերցրի մեկ կափե անոթ, վորի մեջ լցը 200 ֆունտ գառարանում չորացրած հող և նրա մեջ տնկեցի 5 փունտ կշռող ուռենու մի ճյուղ: Ուզիդ հինգ տարուց հետո ուռենին կշռում եր 169 ֆունտ և մոտ 3 ունցիա: Այդ ժամանակի ընթացքում անոթը բացի անձրկի կամ թորած ջրից, յերբ այդ անհրաժեշտ եր, ուրիշ վոչինչ չի ստացել, և նա մնում եր միշտ հողով լիքը, և փորպեսզի դրսից փոշի և այլ նյութեր ընկնեն հողի մեջ, յես անոթը ծածկեցի բարակ կլայեկած յերկաթե թիթեղով, վորի մեջ միքանի ծակոտիներ կային: Յես ուշագրություն չեյի դարձնում աշնանը թափող տերեների կշռի վրա: Վերջը յես հողը նորից չորացրի և կըուցի ու ստաց համարյա նույն 200 ֆունտը, վորից պահառում եր մոտ 2 ունցիա: Հետեապես 164 ֆունտ փայտը, ծառի կեղեղ և արմատներն առաջացել են միմիայն ջրից»:

Շատ քիչ փորձեր կան, վոր ավելի պարզ ցույց տային, քանի վերև բերածը, թե փորձերի հետեաճքները բացատրելու ժամանակ զգուշությունը վորքան և անհրաժեշտ: Փորձը միանգամայն լավ է, իսկ բացատրությունը միանգամայն սխալ: Փառ Հելմոնտը բույրովին ի նկատի չի ունեցել ողի դերը և այդ այն պատճառով,

վոր այն ժամանակվա բնագետներն առհասարակ ողն անտեսում եին: Նա և մի շարք նրա ժամանակակից գիտնականներ անհերքելի եյին համարում այն փաստը, վոր բույսերը կազմված են ջրից և հետեւապես ջրով ել սնվում են: Սակայն նրա փորձը վոչ մի ազգեցություն չունեցավ զյուղատնտեսության վրա: Յել իրոք, յեթե այն ժամանակվա զյուղատնտեսները լսեյին այդ փորձի մասին, չեյին հավատա, վորովհետեւ նրանք իրենց փորձից գիտեյին, վոր ջուրը չի հանդիսանում բույսերի միակ սնունդը: Առանց լավ հողի և լավ պարարտացման նրանք բերք չեյին ստանում:


Դրանից միայն 80 տարի հետո բնագիտությունը կարողացավ ապացուցել ֆան Հեմոնտի տեսակետի սխալ լինելը 1699 թ. Ուուդուուրու գրեց առաջին ջրային փորձը և ցույց տվեց, վոր անանուխի (Mentha spicata) աճեցողությունն անձրեաջրի մեջ ավելի թույլ ե (անձրեի ջուրը միակ մաքուր ջուրն եր, վոր նա ուներ իր ձեռքի տակ), քան կեղտու ջրում: ստացվում եր ամենալավ հետեւանքը, յերբ նա ջրին խառնում եր մի քիչ պարտեզի լավ հող:

Ցախուակ 1. Ուուդուուրտի փորձը 1699 թվին.


(*Phil. Trans.*, 1699. հատոր 21, յեր. 382)

Զ Բ Ի Մ Պ Ի Ջ Ո Ւ Բ Ը	Բ Ո Ւ Յ Ա Կ Բ Ի Ք Փ Ա Շ Ը		Հ Ա Վ Ե Լ Ո Ւ
	Մ Ա Կ Բ Ո Ւ	Վ Ե Լ Ո Ւ	
Անձրեի ջուրը	Գրան 28 ¹ / ₄	Գրան 45 ³ / ₄	Գրան 17 ¹ / ₂
Թեմզա գետի ջուրը	28	54	26
Հայդպարկի առվի ջուրը	110	249	139
Հայդպարկի առվի ջուրը + 1 ¹ / ₂ ունցիս պարտեզի հող	92	376	284


Այստեղից հետեւում ե, վոր բույսերի սնունդը կախված ե նաև հողից ստացվող վորոշ հավելյալ նյութերից: Այս տեսակետը համապատասխանում եր գյուղատնտեսների փորձերին: Ուրիշ գիտնականների փորձերը ցույց են տվել, վոր մի շարք հայտնի նյութեր ուժանդակում են բույսերի սննդառությանը, յեթե նույնիսկ ընդունենք, վոր նրանք անհրաժեշտ չեն բույսերի համար: Գլաւուր է լր 1656 թվին ցույց տվեց, վոր նիտրատներն ուժեղացնում են բույսերի աճեցողությունը: Հոսմը առաջին անգամ անոթների-




Զոգեվ Հեմբի Զիլբերտ
1817—1901



Զոն Բենեստ Լոոզ
1814—1900



Յուստուս Փոն Լիբիլս
1803—1873



Ժան Բավտիստ Ֆոնե Նիոդոնին
Բուսաբանը 1802—1887

ՊԱՏԿԵՐ 1.

մեջ գրած փոլձով ցույց տվեց աղերի արժեքը, մինչդեռ գրաֆ Դոնդոն ալ դը 1795 թվին ցույց տվեց, վոր ֆոսֆորներն ոգտակար են:

Տախտակ 2. Յրենակա Հոռմի փորձերն անորներում (1755 թ.)
(Principles of Agriculture and Vegetation)

Գարու հասկերի թիվը	
Հարուստ հող	Աղքատ հող
Հող առանց պարարտացման	17 .. 10
» + սալպիտեր	15 .. 11 (լավագույն հասկեր)
» + թթու գինեթթվի կալիում	29 ..
» + K_2SO_4	— .. 13 (սալպիտե- րին հավասա- ր)
» + ձիթապտղի յուղ	9 (շատ մեծ) ..
» + կեր + ամմոնիակ + ձի- թապտղի յուղ	— .. 16 (ամենալա- վեր)

Սակայն այս արդյունքներն այնպես եյին խճճված սխալ և կողմնակի բացատրություններով, վոր վոչ մի գյուղատնտես չել- կարող ոգտագործել այդ և վոչ մի հիմք ել չկար սխալ յեզրակա- ցություններից ճշմարիտն ընտրել:

18-րդ դարը գիտությունների տրամաբանական զարդացման շրջանը չեր: Ընդհակառակը, այն ժամանակ կարծում եյին, վոր գյուտերն արվում են պատահարար և անփորձ մարդկանց ձեռ- քով, առանց հատուկ պատրաստություն և կահավորման, վոր ան- հրաժեշտ ե համարվում մեր ժամանակ: Զոգեփ Պրիստլեյը, իր ժամանակի ամենանշանավոր մարդկանցից մեկը, գրում է.

«Յես կարծում եմ, վոր եքսպերիմենտալ բնագիտության համար նվազա- ցուցիչ չե՞ն համեմատել այն, ինչպես յես այդ հաճախ անում եմ, վորսի հետ, ուր յերբեմն պատահում ե, վոր այն վորսորդները, վորոնք տեղի և վորսի քա- նակի հետ շատ լավ ծանոթ են, վոչինչ չեն վորսում, մինչդեռ պատահական անցորդները հրաշալի վորս են անում»:

Յեկ վորպես կոնկրետ որինակ, նա իր «Ելեկտրականության պատ- մությունը» գրքում բերում է հետևյալը.

«Նա գիտության և փորձառության մեծ պաշար չի պահանջում, այնպես վոր ամեն վոր, ով փոքր ի շատե ծանոթ ե ելեկտրականության հետ, կարող և ամենափորձած մասնագետի հետ կանգնել միենույն մակարդակի վրա... Վորոշ տգետ բախտախնդիրների հաջողվել և նույնպիսի հռչակ ձեռք բերել ինչ վոր- մեծագույն բնագետներին»:

Զնայած դրան, առաջադիմությունը հաստատուն քայլերով առաջ եր ընթանում, և 18-րդ դարի վերջում՝ պարզվում ե ողի գերը բույսերի կյանքում: Ագրոնոմիական առաջին պլորեմի լուծման սկիզբն արդեն դրվել եր, և 1804 թվին լույս ե տեսնում գե Սոսսյուրի փարպետորեն կատարած գործ^{*)}: Սակայն հետաքրքրական փաստ ե, վոր վոչ վոք չնկատեց այդ աշխատանքի գյուղատնտեսության համար ունեցած նշանակությունը: Մրանից հարյուր տարի առաջ ագրոբիմիկասները բույսերի սննդառությունը ուսումնասիրելու համար չելին կարողանում ոգտագործել այդ աշխատանքը: Այդ խնդիրն ըստ յերեսութիւն համարվում եր ակադիկ և գործնական կյանքից հեռու: Այն ժամանակվա մի գիտնականի տեսակետները և աշխատանքի արդյունքները հականում ելին մյուսին: Թվում-եր, թե դրությունն անհուսալի յէ և փորձեր ել չելին արվում այդ դրությանը վերջ տալու: Գյուղատընտեսները և գիտնականներն այն կարծիքին ելին, վոր գոմաղը հանդիսանում ե բույսերի համար սնունդ, թեև ընդունվում եր նաև, վոր այլ նյութեր ևս բույսերի սննդառությանն ոժանդակում են՝ կենդանական ծագում ունեցող նյութեր, ինչպես վուկորը, արյունը, բուրդը կամ բուսական ծագում ունեցողներ՝ կոմպոստը, տորֆը և կամ հանքային նյութեր՝ աղը, կիրը, փայտի մոխիրը և այլն: Սակայն վոչ չգիտեր, թե ինչպես պետք ե այդ նյութերը գործածել: Վոչ վոք չեր կարողանում բացատրել այս նյութի բի գործածության հետ կապված բազմաթիվ անհաջողությունները և դրական արդյունքները:

Այն ժամանակի գիտությունը չեր ովնում գյուղատնտեսությանը և, ինչպես այդպիսի դեպքերում միշտ ել պատահում ե, եժպիրիզը խճճում եր սպեկուլացիայի հետ և բույսերի սննդառությունը մնում եր միստիկայով պատած մի գաղտնիք:

Կենդանական և բուսական նյութերն ըստ իրենց բնույթի նման են, բույսերին, և գիտնականների կարծիքն այն եր, վոր հենց այդ նյութերն են հանդիսանում բույսերի սնունդը, և վոչ այլ բնույթի նյութերը: Սակայն 1834 թվին Բուսսենգոն մացրեց գաշտային հեղակա փորձի մեթոդը: Նա առանձնացրեց խնամքով պարաբուացրած հողամասեր, կշռեց և անալիզի ինթարկեց տրված պարաբուացրած թերը և հողի բերքը և այդպիսով բաւանս կազմեց, վորտեղ ցույց տվեց, թե ինչ ե մտցրած հողի մեջ:

^{*)} Theodore de Saussure: Recherches chimiques sur la Vegetation (Paris, 1804).

և թե ինչ են վերցրել բույսերը հողից: Նա դաշտում կիրառեց ստատիստիկական այն մեթոդը, վոր այդքան հաջողությամբ կիրառել եր դը Սոսսյուրը բույսերի փիզիոլոգիայի մեջ և այդ ձևով հավաքեց մեծ քանակությամբ տվյալներ, վորոնք չեյին կարող վրիպել հարցի լուծումը տալու:

Տեղ ցանքագծառառույթան բալանսը

Տախտակ 3. Բաւսենգ, 1841 թիվ
(Ann. Chim. Phys. 1841, 3 առիք, I, յերես 208):

Կ 2 ի ո ւ ց ե ն տ ն ե ր ո ւ կ 1 հ ե կ տ ա ր ի ց	Հ ո ր ն յ ո ւ թ ե ր	ա ծ խ ա ծ ի ն	ա զ ո տ	հ ա ն ք ա յ ի ն
1. Ճակնդեղ	31.7	13.6	0.5	2.0
2. Ցորեն	30.0	14.3	0.3	1.6
3. Ցերեքնուկի խոտ .	40.3	19.1	0.8	3.1
Ցուրնելս (խողանաց.)	7.2	3.1	0.1	0.5
4. Ցորեն	42.1	20.0	0.4	2.3
5. Վարսակ	23.5	11.8	0.3	1.1
Ցանքաշրջանառութ.	174.8	81.9	2.4	10.6
Ցրված և պարաբուացան միջոցով	101.6	36.4	2.0	32.7
Ողից, անձրեց և հողից վերցրած	+73.2	+45.5	+0.4	-22.1


Նրա աշխատանքները պայման մտքի և պարզ բացատրության փայլուն որինակներ են և ցույց են տալիս 18-րդ և 19-րդ դարերի տեսակետների և աշխատանքի տարբերությունները: Նըրանք պետք ե կարգացվեն բոլոր այդ առարկան ուսումնասիրողների կողմից: Նրա «Դյուղատնտեսություն» գիրքը հանդիսանում ե մեր առարկայի վերաբերմամբ հեղինակություններից ամենահետաքրքրականը: Սրան հետեւց մի ավելի մեծ առաջադիմություն, վորը սակայն կատարեց վոչ բուսակայունություն:

1840 թվականից սկսվում ե ագրոնոմիական գիտության պատմության մի նոր դարագլուխութեա: Այդ ժամանակ լիքի ի խն իմի հավաքեց մի շաբաթ ցրված դիտողություններ և անհամատեղելի համարվող ու բաժան-բաժան մասնիկները միացրեց մի ներդաշնակ ամբողջության մեջ: Ավելի պարզ քան վորեւե մի ուրիշը նրանից առաջ, նա ցույց տվեց բույսերի սննդառության եյությունը:

և այն ազդեցությունը, վոր անում են ֆոսֆատները, կալիումի աղերը և ամմոնիումի աղերը բույսերի դարձացման վրա: Նա համարձակ հայտարարեց, վոր բույսերի սնունդը կազմում են վհչ մեռած բուսական և կենդանական մնացորդները և վոչ ել գոմաղը, այլ բույսերի մոխիրը՝ կալիումը, նատրիումը, մագնիումը և կալցիումը և ողի վորոշ մասերը՝ ածխաթթուն և ամմոնիակը: Ողային սննդանյութերը գտնվում են բույսերի տրամադրության տակ անսահման քանակությամբ, իսկ մոխրայինը՝ վոչ: Մշակության հետևանքով այդ նյութերը հեռանում են հողից և հողը դառնում և անբերրի: Ցեթե հողին ենք վերադարձնում նրանից վերցրած մոխրային մասերը, ապա նա նորից և վերականգնում եր բերքատվությունը: Հայտնի յե, վոր գոմաղը լավ ազդող պարարտանյութ և, սակայն վոչ թե նրա համար, վոր նա բույսերի նման կազմություն ունի, այլ վորովհետև նա իր մեջ մոխրային նյութեր և պարունակում: Գոմաղը գործածությունը նրա կարծիքով բոլորպիին անհրաժեշտ չե: Երա գործածությունը մի դժվարին ճանապարհ և հողի մեջ անհրաժեշտ կալիում, կիր և մագնիում մտցնելու համար: Լիբիսի գիրքն աչքի յե ընկնում մեծ հանձարին հատուկ աշխատության պարզությամբ: Հետադարձ հայցք նետելով անցյալի վրա, զարմանալի յե, թե ինչու այդպիսի գյուտն այդքան ուշ և կատարվել, սակայն յեթե խնդրին մոտենանք 1840 թվականի տեսանկյունից, յերբ գոմաղը նշանակությունը գերազնահատվում եր, վորոշ չափով հասկանալի յե դառնում խնդրի ճիշտ լուծման դժվարությունը:

Լիբիսի գործը կրկնակի նշանակություն ունի: Գիտական տեսակետից նա հանդիսանում է նյութի մատչելիացման և սինթեզի մի փայլուն որինակ: Այսուեղ նա վերջ և տալիս այն հին նախապաշարման, ըստ վորի բույսերը կարող են մնվել համանման բնույթի նյութերով և զրա տեղը դնում և այն հասարակ և ել ավելի զարմանալի տեսակետը, ըստ վորի բույսերը սնվում են պարզ ազերով և գաղային նյութերով և զրանցից կազմում են իրենց մարմնի շատ բարդ նյութերը: Ամբողջ պրոբլեմն այսպիսով ուսումնասիրության համար մատչելի յե դառնում:

Գործնական տեսակետից այդ աշխատության կարևորությունն այն է, վոր նա հնարսվոր և դարձնում կատարելագործել հողի պարարտացման գործը: Այն ժամանակ հիմնական պարարտանյութը գոմաղըն եր, սակայն անկարելի յեր այդ այնպիսի քանակությամբ ստանալ, վորպեսզի հողի բերքը բարձրացվեր նորա-



ՊԱՏԿԻՆ 2. ԽՈՐԱՍՏ. ԶԵՆ ԲԵՆԱՅ ԼՈՒՅԻ ՏՈՒՆԸ

գույն ազրիկուլտուր սխտեմների և զարգացած հասարակակարգի առաջադրած հնարավորությունների համապատասխան։ Յեթե լիբիսի տեսակետը ճիշտ է, ապա կարելի յեր գոմաղբի փոխարեն գործածել նրա մեջ գանվող աղերը։ Քիմիկոսները կարող են անալիզի միջոցով գտնել այդ աղերը և այդպիսով պարարտացման համար ցույց տալ նոր ուղիները։ Հետագայում լիբիսը տեսավ, վորանհրաժեշտ չե միշտ հողի մեջ մտցնել բոլոր մոխրային նյութերը։ Նա ցույց տվեց, վոր բերքի քանակը վորոշում և նվազագույն չափով գտնվող սննդանյութը և բերքը պակասում կամ ավելանում և ճիշտ նույն չափով, ինչ չափով պակասում և ավելանում և նվազագույն քանակով գտնվող սննդանյութը։ Կարճ ասած՝ պարարտացումը քիմիայի սովորական կիրառումն է։

Իր գյուտի գործնական նշանակությունը զարգացնելու նպատակով լիբիսը պատրաստեց մի արհեստական պարարտանյութ, վորը և ապահովեց պատեհառություն այս գեպքում անհաջողության հանդիպեց։ Սակայն այս գեպքը զիտնականների համար հանդիսացավ վորպես նախազգուշացում։ Թե հաղվագյուտ գեպքերում և միայն հնարավոր լաբորատորական աշխատանքների արժեքավոր հետեւնքներն անմիջապես գործնական կյանք փոխադրել։ Լաբորատորական աշխատանքների արդյունքները կյանքում կիրառելու համար անհրաժեշտ և կատարել միջանկյալ ուսումնասիրություններ։ Ամերիկացիք այդ միջանկյալ ուսումնասիրությունն անվանում են «սոգրոնոմիա», մի խոսք, վորն Անգլիայում գործածության մեջ և արդեն 100 տարուց ավելի։

Ինչեւ, լիբիսի գործը զրագեց Զոն Բենն ետ Լոռոգի ուշադրությունը՝ Ոքսֆորդի համալսարանը նոր ավարտած մի անգլիացի յերիտասարդի, վորն ուներ գիտնականի սուր միտք, միացած ֆերմերի գործնական բնազդի հետ։ Նա ծնվել է 1817 թվին, յերբ Յեվրոպան նոր եր զարդար առել յերկարաժի կործանարար պատերազմներից, վոր այնտեղ կարծես տեղի յեւնենում հարյուր տարին մեկ տնգամ։ Նրա մանկությունը և յերիտասարգությունն անցել ե հետպատերազմյա այն շրջանում, վոր գեռ կրում եր պատերազմի կործանարար հետևանքները։ Պետք ե ասել՝ վորքան հնարավոր և համեմատություններ անելը, վոր այն պատերազմների հետևանքներն ավելի սոսկալի ելին, քան ներկա պատերազմի, համենայն գեզս այդ կարելի յեւ առել Անգլիայի նկատմամբ, ուր շատ Փերմերներ սնանկացան և առհասարակ

գյուղատնտեսությանն սպառնում եր կատարյալ կործանում: Լոռոզը տեսավ, վոր իր տոհմական կալվածքը, վորն Անգլիայի այն ժամանակավ ամենալավ տնտեսություններից մեկն եր և դաշնավում եր գեղեցիկ Հերֆորդշայր դքսության մեջ մի անտառապատվայրում:—կարող եր պահպանվել միմիայն այն դեպքում, յեթե նա կարողանար իր հողերից ավելի մեծ բերք ստանալ: Դրա համար ել նա սկսեց պարարտացման փորձեր կատարել բերքը բարձրացնելու համար և տարբեր տեսակի վոչխարներ պահել, տեսնելու համար, թե նըսոնցից վորն ե ավելի արագ գիրանում: Դաշտային յերկու պարզ փորձեր վորոշեցին նրա համբավը և բախտը: Նա տուրնեպսի (վոչխարների համար շատ կարևոր կերպույս) համար գործադրեց վոսկրի ալյուր, սակայն անբավարար արդյունք ստացավ: Շատ ֆերմերների նման նա գիտեր, թե բազմաթիվ հողերի համար վորքան ոգտավետ ե վոսկրի ալյուրը, սակայն նա դիտեր նաև այն, ինչ չգիտեյին ուրիշ ֆերմերներ և կալվածառերի: Նա այնքան քիմիա գիտեր, վոր կարող եր պարզել, թե վոսկրի մեջ յեղած և չլուծվող կալցիում ֆոսֆատը յեթե վերամշակենք թթուներով՝ կրառնա լուծվող: Այն ժամանակ այդ կոչվում եր կը ուղղակի ուղղակի ալյուրը գործածել վորովես պարարտանյութ: Պարզվեց, վոր այս նոր պրոդուկտն ավելի լավ եր, քան չմշակված վոսկրը:

Հետագայում լոռոզը պարզեց, վոր ուրիշ ծագում ունեցող կալցիում ֆոսֆատը նույնպես կարող է վերածվել լուծվող սուլֆեր-ֆոսֆատի և այսպիսով նա իր փորձերի մեջ մտցրեց նաև հանքային կալցիում ֆոսֆատ և բավարար արդյունքներ ստացավ*: Այս փորձն այն ժամանակ շատ փոքր արժեք ուներ, վորովինետև ըգալի շափերով կալցիում ֆոսֆատ միմիայն վոսկրներից կարելի ուր ստանալ, քանի վոր հանքային ֆոսֆատների մեծ պաշարներ դեռևս չելին հայտնաբերված: Ինչպես կտևսնենք, այս դյուտի գործնական կիրառումը հետո կատարվեց:


Լոռոզի գաշտային յերկրորդ փորձն անմիջապես ներշնչված եր լիբիւի գործից: Պարզ է, վոր լոռոզը բերքի համար ընդունում եր

*) Լոռոզի գործերից մեկի արդյունքները հետեւալն եր.

	տուրմանապահի բերք
առանց ֆոսֆատի	2.2 տոնն ակրից
ապատիտ	3.05 > >
ապատիտ + H ₂ SO ₄	6.8 > >

միներալների կամ մոխրային նյութերի անհրաժեշտությունը, սակայն նա բոլորիվին չեր համաձայնվում լիբիւի այն դրույթի հետ, թե աղոտային սնունդը բույսերն ամբողջովին ողից են ստանում: Բոլորովի գաշտի ցորենի մի շարք փորձերի միջոցով նա ցույց տվեց, վոր միայն մոխրային նյութերով պարարտացրած ցորենի բերքը չպարարտացրածից ավելի չե: Սակայն մոխրային նյութերով և ամմոնիում սուլֆատով պարարտացրած ցորենի բերքը գերազանցում է նույնիսկ գոմաղրով պարարտացրածին (տես պատկեր 4ա և նկ. 1):

2856 1006
98369



Զալարարտաց-
րած 14 տոնն
գոմաղրի գոմաղրի
մոխրը սուլֆերֆոսփ. կա-
լիումի աղեր և այլն
նկ. 1. Ռոդամասներ. Լոռօդի առաջին փորձը յորենի վրա, 1843

Այս փորձերը բացատրեցին այն շփոթեցնող հակառակությունը, վոր դաժան իրականության մեջ գոյություն ուներ լիբիւի փայլուն վարկածի և բերքատվության մեջ: Լոռոզ ցույց տվեց ֆոսֆատների և ալկալիների արժեքը բույսերի սննդառության համար, վորոնց վրա այնքան շեշտակի մատնացուցյ եր արել լիբիւը, նա միաժամանակ ցույց տվեց նաև լիբիւի այն սիսակը, յերբ նա բույսերի աղոտային սննդառությունը բոլորովին հաշվի չեր առնում: Բոլորովի հոչակավոր փորձերը տեսեցին յերկուր տարիներ, վորոնց ընթացքում մեծ քանակությամբ գյուղատնտեսեցուրսաներ համոզվեցին հանքային պարարտանյութերի և աղոտային պարարտանյութերի արժեքի մեջ:

Բույսերի ամթառությունը յել հոգի բերքատվարյունը
ՀԽՍՀ Ա. Անտոնյան
Ա. Ավագյանի մակարածը


Լոռզը լրիվ կերպով ոգտագործեց իր գյոււտի նաև առնարական կողմը: Նա սկսեց պատրաստել «պատենտային պարարտանյութեր», ոկզբում իր տնտեսության մարագում (պատկ. 4 թ.), հետագայում Դեպտֆորդում հիմնելով մի գործարան՝ մեծ քանակությամբ պարարտանյութեր, արտադրելու համար: Միաժամանակ նա գյուղատնտեսական լայնածավալ փորձեր կազմակերպեց վորոնք ամբողջ աշխարհին հայտնի յեն վորպես Ռոդա մատեղի փորձեր: Լոռզը շուտով համոզվեց, վոր այս կրկնակի գործունեյությունը մի մարզու ուժերից վեր և և համոզեց յերիտասարդ քիմիկոս Զիլրերին՝ ոգնել իրեն (1843 թ.):

Զիլրերի ընտրությունը ցույց ե տալիս լոռզի իրեն համար ոգնականներ ընտրելու բացառիկ ընդունակությունը, մի հատկություն, վոր շատ կարևոր ե ամեն մի ձեռնարկության վարչի համար: Լոռզը հանդիսանում եր մեծ նախագծերի հեղինակ, բայց մանրամասնությունների մեջ խորանալու հակում չուներ: Զիլրերտն՝ ընդհակառակը, հանդես եր բերում մանրամասնությունները մանրազնին ուսումնասիրելու հակումներ, սակայն նա մեծ ծրագրեր մշակելու ընդունակություններ չուներ: Այս տարրերությունը կարելի յե լավ նկատել նրանց ծոցատերերից (պատկ. 5): Լոռզի տեսքը պարունակում ե իր մեջ փորձերի ուրվագծեր, ուր մեծ պարզությամբ ընդդված են հիմնական դրույթները, սակայն մանրամասնությունների համար թողած աղատ տեղերը մեծ մասմբ դատարկ են մնացել, մինչդեռ Զիլրերի գրքույկում այնքան հաշիվներ կան, վոր անհնար ե հասկանալ թե դրանք վոր փորձերին են վերաբերում: Նրանք լրացնում եյն մեկը մյուսի թերին, այդ իսկ պատճառով նրանք ստացան այնպիսի արդյունքներ, վորպիսին առանձին անհատն ստանալ չեր կարող: Նրանց գործը հանդիսանում ե գյուղատնտեսական դիտության մեջ կողմեկտիվ աշխատանքի ամենալավ որինակը: Մինչև 1855 թիվը նրանք այնպես պարզեցին զիտության նշանակությունը գյուղատնտեսության համար, վոր բրիտանական ֆերմերներն ոկսեցին փող հավաքել կառուցելու համար լարորատորիա, ուր լոռզը և Զիլրերը կարողանային աշխատել մինչև իրենց կյանքի վախճանը:

Չեռնարկության մրցյունարերական և առևտրական մասում Զիլրերը վոչ մի մասնակցություն չուներ: Դրանով զբաղվում եր միայն լոռզը, վորն ոկզբում մեծ տակտ հայտնաբերեց (1843 թ. Չեռնումնը կաշկանդված եր մի շարք ձեւականություններով): Որինակի համար բերենք նրա առաջին հայտարարությունը՝ գըր-



ՊԱՏԿԵՐ ՅԱՐՈՂԻ ՖՈՏՈԳՐԱՓԻ ՑՈՐԵՆԻ ԴԱՏԸ



ՊԱՏԿԵՐ ՅԱՐՈՂԻ ՖՈՏՈԳՐԱՓԻ ՊԱՅԵԱԾ ՎԵՐԱԾՎԱԾ ԼՍԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՅԵՎ ԱՅՍԹԵՍ ՈԳՏԱԳՈՐԾՎԱԾ 1842-Ի 8 ՄԻՆՉԵՎ 1852 ԹԻՎԸ

ված զուսպ լեղվով և սեփական արժանապատվության դգաց-
մունքով:

Ս.յգեգործի բռնիկա, 1 հուլիսի 1843 թ.

ՎԱՃԱՌՎՈՒՄ Ե ամենալուս տեսակի ներմուծված գուա-
նո, անտահանափակ խանակով. կարիդի յե ստանալ Լի-
վերպուլի յեվ Լոնդոնի մեջ պահեստներից. նայել Զիլիա-
կան սալպետը: Դիմել Ռուսնդվեյտ յեվ ընկ. 6 Կիր-
սոր. Լիվերպուլ:

Զ. Բ. ՂՈՅԶԻ ՊԱՏԵՇՍԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԻՒՆ բաղկա-
ցած կրի սուպերֆուսֆատից, ամենիում սուլֆատից,
կալիում սիլիկատից յեվ այն. վաճառում ե ճրա գործա-
րանը, դեպտֆորդկրիկ, լոնդոն. Բուշելը 4 շնկինգ յեվ 6
պինա: Այս հյուրերը կարիդի յե նայել զնել առանձին-
առանձին: Կրի սուպերֆուսֆատը հանձնարարվաւմ ե գո-
մագրի. հեղուկների յեվ այնի ամենիակը կլանելու հա-
մար. Բուշելի արթեքը 6 շ. յեվ 6 պ.

Մ. ԽՆՏՈՇ «ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ» նոր
երատարակություն մի հատորում. պարունակում ե իր
մեջ պտղատու այգիների, ծաղկանցների, ջերմոցների
յեվ այնի մշակներյան նորագույն փորձագծ մերադներ...

Առաջին սուպերֆուսֆատը պատրաստվում եր վոսկրի մոխ-
րից, վոր այն ժամանակ կալցիում ֆոսֆատի միակ մատչելի աղ-
բյուրն եր: Ֆերմեններն արգեն մեծ չափերով գործ հյին ածում
վոսկորը, ուստի լոոզի գյուտը. չեր ավելացնի պարարտանյութե-
րի քանակը, յեթե վոսկը մնար ֆոսֆատների միակ աղբյուրը:
Սակայն լոոզի այն գյուտը, վոր այլ կալցիում ֆոսֆատներ ևս
կարող են հաջողությամբ գործ ածվել, շուտով գործնական կյան-
քում լայն կիրառում գտավ: Նոր արդյունաբերության կազմա-
կերպումից հետո անմիջապես հայտնագործվեցին կալցիում ֆոս-
ֆատի հանքեր: Յեվ լոոզը այդ ֆոսֆորիտներն ոգտագործելու
լայն հնարավորություններ ուներ: Այդ ֆոսֆորիտներն այլ կերպ
անպետք հյին պարարտացման համար: Նա ընդունակ և տաղան-
դավոր գործարար եր. քանի հետո նրա գործարանի ար-
տադրանքը հասագ տարեկան 200,000 տոննի, վորը վաճառվում
եր ձեռնատու գնով՝ տոննը 7 ֆունտ ստերլինգով: Ազուային պա-
րարտանյութերի գործածությունը նույնպես մեծացավ: Այս զար-
գացման հետևանքով ֆերմեններն սկսեցին պարարտացնել իրենց
ցանքերի մի մասը կամ ամբողջովին, և ավելացած բերքը Անգ-

լիային հնարավորություն տվեց կերակրելու իր որ ավուր աճող հնդուստրիալ ազգաբնակությունը, մի բան, վոր այլ պայմաններում միանգամայն անհնար եր: Նման հետևանքներ ստացվեցին նաև խիտ ազգաբնակություն ունեցող յերկրոպական այլ յերկրներում: Շատ խիստ չեր լինի, յեթե ասելինք, վոր արհեստական պարարտանյութերի հայտագրքում և արտադրության զարգացումը ներկա Յեվրոպայի զարգացման հիմնական գործոններից մեկն ե հանդիսանում:

Գյուղատնտեսության բնագալառում սա քիմիայի առաջին մեծ հաջողությունն եր: Մրան շուտով պետք ե հետևեր մի ուրիշը: Աղոտի մեծագույն նշանակությունը նույնպես ճանաչվեց, սակայն դեռևս պարզ չեր, թե աղոտի պաշարը յերկար ժամանակ կրավի արդյոք պարարտացման կարիքը ծածկելու համար, թե վոչ, ուստի հեռատես մարդիկ սկսեցին այդ ուղղությամբ աշխատանքներ կատարել: Այս անհնանգտությունը 1898 թվականին արտահայտեց սըր Ուիլիամ Կրուկսը, վորը Բրիտանական Ասսոցիացիայի Բրիտանի նիստում իր նախագահական ճառում ասաց.

«Անդիւն և բոլոր կուլտուրական յերկրները կանգնած են ուտելու բան: չունենալու գտանքի առաջ: Հողը սահմանափակ մեծություն ե և ցորեն տվող հողերը բացարձակորեն կախված են բնության դաժան քմահաճույքներից: Յեն ստիպված եմ առել, վոր ցորենի հողերի բերքատվությունը չի համապատասխանում մեր պահանջնի: Հաց ուտողների քանակն ավելանում ե յերկրաչափական հարաբերությամբ, իսկ ցորենի տարածություններն այդ չեն անում»:

Այնուհետև այդ «հակայական դիլեմման» ուրվագծելուց հետո, նա ցույց տվեց դրա լուծելու ուղին՝ միջնորդային աղոտից ելեկտրականության միջոցով աղոտային պարարտանյութեր պատրաստելլ: Քիմիկոս տեխնոլոգները մշակեցին միջնորդա աղոտի ոգտագործման մեթոդները և այժմ այդ ասպարիգում գործադրը վում են յերեք ձև. 1) աղոտի և թթվածնի միացումը Վոլտյան աղեղի մեջ, ըստ վորի ստացվում են նիտրատներ. 2) կալցիում կարբիդի և աղոտի միացումը, վոր տալիս ե կալցիում ցիանամիդ. սա յելիք հերթին վեր ե ածվում աղոտային այլ միությունների և 3) ջրածնի և աղոտի միացմամբ ամմոնիակ ստանալը (Հարերի և Կոռդի պրոցեսով), վորն ոքսիդացնելով. Ուստի վալդի յեղանակով տալիս ե աղոտական թթու: Այս մեթոդները հաջողությամբ կիրառվում են այն յերկրներում, ուր ջրային

և հներգիան եժան ե և այժմ ամեն տեղ Յեվրոպայում և Ամերիկայում ջրվեժների մոտ կառուցված են համապատասխան ձեռնարկություններ, վորոնք լատ ժամանակակից կուլտուրայի սովորության խորած են բնության գեղեցկությունը (պատկ. 6): Յեվրեանոր մեթոդների կիրառման առաջին պտուղը մեծ պատերազմի դաժանությունն ու յերկարատևությունն եր, այնուամենայնիվ աղոտի պարագանեցման գործադրության ոգուտները շատ մեծ են:

Տախտակ 4. Պարարտանյութերի համաշխարհային արտադրությունը* միլիոն տոնները

	1913	1922
Հում փոսֆատներ . . .	7.18	5.97
Սուլփիփոսֆատ	11.3	8.84
Թոմասալալ	4.41	2.80
Կալիումի աղեր	11.6	14.4
Նատրիում սալպետեր (Զելիական)	2.77	1.06
Ամմոնիում սուլֆատ . .	1.39	2.24
Աղոտի սինթետիկ միություններ	0.26	0.72

Իմ նպատակն արհեստական պարարտանյութերի պատմության գրելը չե: Մա մի զարմանալի պատմություն ե, վորի վորոշ գլուխները կարգացվում են վորպիս վեպ: Կուլտուրական յերկրներում գործածվող արհեստական պարարտանյութերի քանակը բերված ե 4-րդ տախտակում, վորն ի միջի այլոց ցույց ե տալիս պատերազմի աղդեցությունը պարարտանյութերի գործածության չափի վրա: Ֆոսֆատների գործածությունը խիստ պական է, մանավանդ Միջին Յեվրոպայում, վորովհեակ ֆոսֆորիտների մեծ մասը բերվում ե Միացյալ Նահանգներից և Հյուսիսային Աֆրիկայից, իսկ յեվրոպական յերկրների վալյուտայի

*) Production et consommation des engrais chimiques (Inst. International d'Agr. Rome, 1924).

**) Տոնն այստեղ գործ ե ածվում անդիւնական տոնների իմաստով, վոր հավասար ե 2240 ֆունտի=1016 կիլոգրամ սակայն գրքի մեջ յերեմն գործ ե ածվում նաև Ամերիկայում ընդունված տոններ՝ 2000 ֆունտ=907 կիլոգրամ:

արժեքն ընկել է, վորով և ուժեղ չափով նվազել ե նրանց գնողունակությունը: Թե այդ ինչպես և անդրադարձել սննդանութերի արժեքի, մանավանդ յերեխանների առողջության վրա, դա հետո կերեա: Նատրիում նիտրատի գործածությունը նույնպես պակասել է, դարձյալ վայուտային նկատառություններով: Ընդհակառակ՝ ամմոնիում սուլֆատի և կալիումի աղերի սպառումը մեծացել է, վորովհետև առաջինն ստացվում ե Անգլիայում և այլ յերկրներում վորպես արդյունաբերության կողմանակի պրոդուկտ, իսկ յերկրորդն ստացվում է ֆրանսիայի և Գերմանիայի հանքերից և այս բոլոր յերկրներն ել շահագրգոված են իրենց արտադրանքի վաճառմամբ:

Տախտակ 5. Ամենիում սուլֆատի ազդեցությունը բերքի վրա:


Բերքի հավելումը 1 անգ. ցենտներ (50.8 կգր.) պարարտանյութից մի ակրիֆ:

(Բրիտանական փորձերի արդյունքներ):

	Բոլոր ժամանակների և հողերի միջինը	1922	1923	Ազումի ոգտագործումը 0/0 0-ով
Ցորեն, հատիկ (բուշել)	4.5	3.25	—	39.0
» ծղուտ (ցենտներ)	5.0	3.25	—	
Գարի, հատիկ (բուշել)	6.5	5.6	4.5	47.5
» ծղուտ (ցենտներ)	6.5	—	—	
Վարսակ, հատիկ (բուշել)	7.0	—	8.3	46.5
» ծղուտ (ցենտներ)	6.0	—	7.5	
Կարտոֆիլ (ցենտներ)	20.0	22	22-25	50.0
Շաղգամ (ցենտներ)	20.0	20	25	35.0

Տեսական գիտությունների բնագավառում յերր վորմեացուտ հանձնվում ե տեխնիկային, դրանով ել հարցը փակվում է, իսկ ազըռնոմիական գիտության մեջ այդ գեպքում մի նոր գլուխ և սկսվում: Հենց վոր ֆերմերներն սկսեցին արհեստական պարարտանյութերի գործածությունը, առաջ յեկան մի շարք դժվարություններ, վորոնք իրենց հերթին՝ գիտնականների կողմից ուսումնասիրվելու ընթացքում յերեան բերին մի շարք գիտական հետաքրքրություն և տեխնիկական կարևորություն ունեցող պրոբլեմներ:

Գուցե ամենից հաճախ տեղի ունեցող յերեալին այն է, վոր արհեստական պարարտանյութերի եփփեկտը փոխվում է ըստ հո-




ՊԱՍԿԵՐ 4. ԶՈՉԵՑ ՀԵՆՐԻ ԶԻԼՖԵՐԻ (ԶԱ) ՅԵՎ ԶՈՆԻ ԲԵՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ (ԱՀ) ԾՈՅԱՏԵՐԻ ՏԻՐԻԿ ՅԵՐԵՍՆԵՐ

զերի և տարվա յեղանակների; Վորոնեցարձր արժեքավոր պարաբանյութ մի տնտեսության մեջ և վորոշ կլիմայական պայմաններում, մեծ հֆեկտ ե տալիս, մի ուրիշ տեղ՝ վոչ: Անգիանյում ամենից քիչ տատանումներ տալիս են ազոտային պարաբանյութերը, ուստի Անգիայի ազրանումները կարող են ազոտային պարաբանյութերի ոգտավետությունն առաջուց վորոշել: Բայց առիկ գեղքերում վորոշ հողեր հֆեկտ չեն տալիս չնորհիլ իրենց առանձնահատկությունների: Ազոտային պարաբանացման հետեւ վանքով բերքի բարձրացումն ավելի քիչ տատանումներ ե տալիս, քան կարելի յեր սպասել, մի փաստ, վոր մեծ հետաքրքրություն և ներկայացնում բույսերի ֆիզիոլոգների համար (տախտ. 5): Ֆոսֆատները և կալիումի աղերն ընդհակառակը՝ տարբեր պայմաններում նկատելի տատանումներ են հայտնաբերում (նկ. 2). Փոսֆատը համարյա միշտ ավելացնում ե շաղկամի և տուրնեպի

Ավագ (Ուռուուրն)

Կավ (Ուռումատեղ)



Լրիվ պարաբանյութը	Առանց կամ լիումի	Առանց ֆոսֆատի	Լրիվ պարաբանյութը	Առանց կամ լիումի	Առանց ֆոսֆատի
-------------------	------------------	---------------	-------------------	------------------	---------------

Նկ. 2. Ֆոսֆատի պարաբանացման ազդեցուրյունը գարու վրա ավազային յել կալային հողերում.

բերքը. Նա քիչ քանակությամբ անհրաժեշտ է կարտոֆիլի համար, սակայն շատ զործածելու դեպքում բերքը կարող է պակասեցնել: Ծանր հողերում, խօնավ ու ցուրտ կլիմայական պայմաններում նա լավ է ազդում հացահատիկների վրա. ավագային

հողերում, չոր ու տաք յեղանակներին նա կամ աղղեցություն չի անում, կամ նույնիսկ բերքը պականցնում եւ վորոշ գիտողություններ ցույց են տալիս, վոր ֆոսֆատների յուրացմանը նպաստում են լուծվող օիլիկատները, կալիումի աղերը սովորաբար ավելացնում են ճակնդեղի և կարտոֆիլի բերքը (տախտ. 6), հաճախ նաև հնդավորների բերքը, իսկ մյուս բույսերինը՝ վոչ, բացառությամբ թեթև ավաղային և կավիճային հողերի:



Այս հարցի ուսումնասիրության համար ոգտագործեցին յերկու մեթոդ: Ընդունվում եր, վոր եփփեկտ չտվող հողերն այնքան

Տախտ. 6. Կալիումի աղղեցությամբ կարտոֆիլի վրա:

Ո ո դ ա մ ս տ ե դ

	Տոնն ակրից		
	1921	1922	1923
Լրիվ արհեստական պարատանյութեր գոմաղբով	3.94	9.55	12.45
Լրիվ արհեստական պարատանյութեր առանց գոմաղբի	3.76	8.30	12.25
Բերքի նվազումը կալիում շտալա դեպքում			
Արհեստական պարատանյութեր + գոմաղբ, բերքը պակասում ե . . .	0.31	1.52	0.79
Արհեստական պարատանյութեր առանց գոմաղբի	2.41	5.83	2.53

Են հարուստ այս կամ այն սննդանյութով, վոր ավելորդ և դրանով հողը պարարտացնելը: Այդ պատճառով կատարեցին մի շարք քիմիական անալիզներ հողերի ֆոսֆորաթթվով և կալիումով պարարտացնելու կարիքը վորոշելու համար: Սակայն այդ փորձերը լրիվ չարդարացրին նրանց վրա դրած հույսը, նրանք միայն այլ ճանապարհով ցույց տվին այն փաստը, վոր բերքի հավելում չի ստացվում: Սակայն հողի անալիզի դիագնոստիկ նշանակությունը շատ մեծ է: Հողի անալիզները շատ անգամ հանգում ենին փաստին, վոր միենույն հողում կուլտուրաների բերքը միենույն պարարտանյութերի աղղեցության տակ յերբեմն ավելանում է, յերբեմն՝ վոչ, ինչպես այդ ցույց և տալիս 3-րդ նկա-




ՊԱՏԿԵՐ 5.

Վերեվը. Գործարան ֆյորդի վրա. Նորվեգիա.
Ներքենը. Նիտրատի արտադրությունը ոգից.

րը, ուր բերված են պարարտանյութերի գարու բերքի վրա ունեցած ազդեցությունը, ըստ 1922 և 1923 թ. թ. Ռողամստեղի փորձերի: Այստեղ արտահայտվում են վորոշ կլիմայական ազդեցություններ, ըստ վորում 1922 թվին կլիմայական պայմաններն այսպես են տարբերում 1923 թվի պայմաններից, վոր կալիումի պարարտանյութերն առաջին տարին ավելի յենանհրաժեշտ դառնում, քան յերկրորդ տարին: Մյուս որինակը հանդիսանում է կարտոֆիլի ցանքը (տախտ. 6): Այստեղից միանգամայն պարզ է, վոր հողը, կլիման և բույսը՝ պետք ե գիտել վորպես մի սերտորեն կապակցված սիստեմ, և վոր պարարտանյութերի ազդեցությունը կախված ե վոչ միայն հողային, այլ նաև կլիմայական պայմաններից:

Գարու բերքը, Ռողամստեղ
1922 1923




Նկ. 3. Յեղանակի ազդեցությունը կախումի յել ֆուֆորային պարարտանյութերի եփիկտության վրա (Ռողամստեղ, գարի).

Այս փաստի հայտնաբերումը հանգեց պարարտանյութերի ազդեցության ուսումնասիրության մի այլ մեթոդի: Գտնված ե, վոր պարարտանյութերը փոխում են բույսի աճեցողության ձևը կամ նրանց կազմությունը, վորն իր հերթին փոփոխության և յենթարկում բույսերի սեակցիան՝ արտաքին տարբեր պայմանների

նկատմամբ: Այսպէս՝ ֆոսֆորային պարարտանյութերը բույսի զարգացման սկզբնական շրջանում նպաստում են արմատների ուժեղ աճանք, մի հանգամանք, վոր հատկապես կարենը և շաղկամի և տուրնեպսի համար (պատկ. 7): Անգլիայում ամեն բարի մեծ քանակությամբ սուպերֆոսֆատ են գործ ածում այդ բույսերի սկզբնական աճեցողությունն արագացնելու համար, վորի հետևանքով և հնարավոր և լինում նրանց բերքն ավելի շուտ հավաքել: Յերկրորդ՝ ֆոսֆատները նպաստում են հացահատիկների թփակալմանը (պատկ. 8): Այս յերկուսն ել ծանր հողերում շատ կարենը են հացահատիկների համար: Բույսերի զարգացման վերջին շրջանում ֆոսֆատն արագացնում են բույսերի հասունանալը՝ մի կարենը հանգամանք ծանր կավային հողերում և ցուրտ ու խոնավ կլիմայական պայմաններում մշակվող հացահատիկների համար: Բայց այս յերկությունը կարող է ոգուտ չըերել ավաղային հողերում աճող հացահատիկների համար, ուր արմատների զարգացման պայմանները նպաստավոր են կամ ուրչորային պայմանների շնորհիվ բույսերի վեգետացիան այնքան և սահմանափակ, վոր նրանց հասունանալու պրոցեսն արագացնելը կարող է բերքը պակսեցնել (տախտ. 6): Նման պարագոքսալ եֆֆեկտ ազոտային պարարտանյութերից ստացվում է նաև ջերմոցներում աճող տոմատի նկատմամբ*): Ազոտային պարարտանյութերն ուժեղացնում են տերեների և ցողունների աճեցողությունը, սակայն բերքը չեն ավելացնում, ընդհակառակը՝ նրանք դանդաղեցնում են ծաղիկներ առաջանալու պրոցեսը և պակսեցնում են պտուղի քանակը: Անթների փորձերի միջոցով գտնվել ե ազոտի այն մաքսիմալ չափը, վորից ավելացնելու դեպքում ազոտը բույսի աճեցողության վրա չի ազդում (պատկեր 14 ա):

Պարարտանյութերի ազգեցությունը բույսերի կազմության վրա ավելի հեշտ է վորոշել անուղղակի կերպով. քան անմիջական քիմիական անալիզի միջոցով: Մի դգլատոնը կոկլոպարկի փորձերով ցույց է տվել, վոր ֆոսֆատներն ավելացնում են խոտի կերարժեքը, այնպես վոր ֆոսֆատով պարարտացրած խոտի մի առնը վոչխարների կենդանի քաշն ավելի յէ մեծացնում, քան չպարարտացրած խոտը: Այս արդյունքն ապացուցվում է նաև այլ կերարույսերի նկատմամբ, սակայն դիտված փորձերն այն-



ԹԱՏԿԵՐ 6. ՖՈՍՖԱՏՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՄԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ ԶԲԻՔԻ 1893 թ. ամերիկյան դասախոսաւրյան նից. վերիվի շարքը՝ չպարտացրած, միշին շարքը՝ սուպերֆոսֆատ յիվ կալիում, ներմեվի շարքը՝ սուպերֆոսֆատ, կալիում յիվ ազոտ:

*) W. F. Bewley: Cheshunt Exper. Station, Reports 1—7 (1914—21):

քան ել բաղմաթիվ չեն: Ոորդամստեղի*) փորձերը ցույց են տվել: վոր կալիումի պարարտացումը գարու ածիկացման հատկությունները յավացնում են, ավելացնում են եկատրակտի քանակը և զիաստատիկ ուժը, միաժամանակ սաստկացնելով գարեջրի թնդությունը: Պարարտանյութների աղղեցության տակ առաջացող այս փոփոխություններն ունեն նաև այլ հետևանքներ. ֆոսֆատների աղղեցությամբ գարու արագ հասունանալը վերջինիս պաշտպանում և կանաչողիկից (goat fly): Վերջինս իր ձվերը դնում է մատղաշ բույսի տերեկի ծայրին և նրանցից զուրս յեկած վօրդերն իջնում են դեպի ներքեւ, և յեթե նրանց ճանապարհին հանդիպում են սաղմային տերեներ, ապա նրանք ուտում և վոչնչացնում են, իսկ յեթե ֆոսֆատի աղղեցության տակ տերեն արդեն կոշտացել են բույսն ազատվում և վասպելուց: Բյուլեյը ցույց է տվել վոր կալիումի պարարտանյութերն ուժեղացնում են տոմատի՝ բծավոր բակտերիոզին (Bact. lathyri) գիմարելու ուժը: Նույնը ցույց է տվել են գրյուռ սը թեյի թփի նկատմամբ, ըստ վորում կալիումի պարարտացումը մեծացնում է նրա տերեների զիմարությունը Helopeltis միջատին: Դա վիճակը ցույց է տվել, վոր հնարավոր և ուժեղացնել հնդավորների զիմարությունը շիրային:

Մննդանյութերի եֆֆեկտը միայն վերը բերված գործոններից չի կախված (նրանց բնույթն ու քանակը, հողը և կլիման), այլ նաև այն հանգամանքից, թե բույսերի աճման վեր շրջանումն են նրանք հողի մեջ գտնվում: Ազոտային պարարտանյութերը շատ լավ տարրերություն են ցույց տալիս, նայած այն հանգամանքին, թե նրանք բույսի զարգացման սկզբում թե վերջում են հող մտցվել, իսկ Գերբեկն վերջերս ցորենի, բերքի մեծ հավելում է ստացել յերբ նա ֆոսֆատը տվել ե բույսի զարգացման սկզբնական շրջանում, իսկ վերջը՝ նորից հեռացը:

Ուսումնասիրության համար մի շարք այլ հարցեր են ծագում այն փաստից, վոր սննդանյութերը հողին առանձին չեն տրվում, այլ միացած են ուրիշ նյութերի հետ: Ազոտն իրականում հողին տրվում ե վորպես ամմոնիում սուլֆատ և նատրիում նիտրատ, կալիումը տրվում ե վորպես կալիում սուլֆատ և կալիումքլորիդ: իսկ ֆոսֆատը՝ վորպես կալցիում ֆոսֆատ: Այս նյութերի մյուս


*) Barley research scheme of the Institute of Brewing, Jour. Inst. Brew., 1924 vol. 30, P. 969.

բաղկացուցիչ մասերը նույնպես ազդում են հողի և բույսի վրա, վորպիսի ազգեցությունը կարող է գործնական մեծ նշանակություն ունենալ: Այս կողմանակի ազգեցությունների տեսակետից առաջ ուսումնասիրվել ե ամմոնիում սուլֆատը: Վ. ի լ ե ր ն*) այդ պարարտանյութը Ռոդ-Այլանդում գործածելիս դիտել ե, վոր վորոշ հողերում նա վնասում է կուլտուրաներին: Սա բացատրվում է հողի թթվության ուժեղացմամբ և կարող է վերանայ կրի պարարտացման միջոցով: Այս դիտողությունն անմիջական պատճառ հանդիսացավ Ռոդ-Այլանդի գործնական կայանում Հարտուր ելի և Պոմբերի կատարած հետաքրքրական աշխատանքին: Միքանի տարի հետո նույնը նկատեց նաև Ֆյուկերը**) Ռուբուրնի փորձնական տնտեսության մեջ: Ամմոնիում սուլֆատը այստեղ 25 տարի շարունակ գործ է ածվել միենույն հողում՝ միշտ գարու և ցորենի համար: Գարու բերքը պահպանվում եր վորոշ բարձրության վրա, սակայն միքանի տարի առաջ տեղի ունեցավ բերքի հանկարծակի անկում և այժմ այդ անկումը շարունակվում է (պատկ. 9): Ցորենն ավելի յերկար ժամանակ՝ պահպանեց բարձր բերքատվությունը, սակայն այժմ նա յել և ցուցաբերում բերքի անկման նշանները: Ամմոնիում սուլֆատի այս յերկարութեան գործածության բացասական ազգեցությունը վորոշ չափով մեղմանում է կալիում սուլֆատի և սուլֆերֆոսֆատի գործածությամբ և, ինչպես Ռոդ-Այլանդում, բոլորովին վերանում է կրի պարարտացմամբ: Այս յերեսությը գեռ մանրամասնորին չի ուսումնասիրված, ուստի հնարավոր չի առանձին ֆակտորների նշանակության մասին դատել:


Ամմոնիում սուլֆատը միանում է հողի կալցիումի հետ և տալիս է կալցիում սուլֆատ, վորն ընդունակություն չունի չեղոքացնելու հողի մեջ կուտակվող թթուները: Սակայն ամմոն-սուլֆատի ազգեցությունը յերբեմն ավելի ուժեղ է: Հուլիս յենթադրում ե, վոր ամմոնիում սուլֆատը հողում քայլայվում է սունկերի միջոցով, վորոնք յուրացնում են ամմոնիակը և արձակում ազատ ծծմբաթթուն: Այս տեսակետն ավելի յե համապատասխան իրականության, քան մյուսը, սակայն սրանով հարցը վերջնականապես լուծված համարել չի կարելի և գեռ ուսումնասիրության մեջ կարիք կա:

*) Wheeler, H. J. Rhode Island Exp. Station, Third Annual Report 1891, յեր. 53. նաև վերջին տեղեկագրերը:

**) Journ. Roy. Agr. Soc. 1897, յեր. 287 և հետեւալ տարիները:



ՊԱՏԿԵՐ 7.Ա ՌՈԴԱՄԱՍԱԴԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ, ՈՒՐ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՅԻՆ
ԼՈՌՁ ՅԵՎ ՁԻԼԵՐԸ:
Անհարմարության պատճառով բանդված 1914 թ.
Դարի Ռուզամետնդում




ՊԱՐԱՐՏԱՅՅՈՒԹԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԻ ԹՓԱԿԱԼՄԱՆ
ՅԵՎ ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ՎՐԱ.

8B. Վարդացման սկիզբը, SC. հետագա զարգացումը:

Անընդհատ գործածության դեպքում նատրիում նիտրատը դիասում և ծանր կավային հողերի ստրուկտուրային: Այս յերեւութը պարզելու համար առաջարկված են մի շարք բացատրություններ՝ վոր նատրիում նիտրատը միանալով կալցիում կարբունատի հետ տալիս և կալցիում նիտրատ և նատրիում կարբոնատ, վորը քայլայում և կավի կնձիկները: Ցերկորոգ՝ վոր նատրիում նիտրատը քայլայվում և բույսերի արմատների կողմից, վորոնք յուրացնում են նրա NО₃՝ յոնը, իսկ Նա յոնը ազատվում և գառնում կալբռնատ կամ բիկարոնատ, վորն արդեն ազդում և կավի վրա, ինչպես առաջին դեպքում: Ամենապարզ և իրականությանը համապատասխանող մեկնությունը Գեղրոյցինն և, վորի մասին կխոսենք զըքի վերջին գլխում:

Մի նորագույն պրոբեմ ել հանդիսանում և, ֆերմերների անտեսական դրության կապակցությամբ, նրանց նույն եփփեկան ստանալու համար եժանագին պարարտանյութեր մատակարարել: Ամմոնիումի և կալիումի թե՛ սուլֆատները և թե՛ քլորիդները մատչելի յեն ֆերմերներին, սակայն ազոտի և կալիումի մեկ միավորը քլորիդների ձեռք ավելի հժան և, քան սուլֆատների: Զուտ ֆիզիոլոգիական սկզբունքներից յենելով պետք և յենթադրել, վոր քլորիդները յերեմն կարող են վնասակար լինել, իսկ սուլֆատները՝ վոչ, հետևապես սուլֆատները պետք և լավ պարարտանյութեր համարվեն: Այսպիսի հետևանքներ ստացվել են նաև գաշտային փորձերի ժամանակը: Սակայն հակառակ հետևանքներ ել են ստացված, ըստ վորում քլորիդներն ավելի մեծ եփփեկտ են տվել, քան սուլֆատները: Ռողամստեղում տրված բրիտանական բազմաթիվ փորձերը բերված են ամմոնիում քլորիդի ազդեցության կորագծում (նկ. 4): Տարբերություններ առաջացնող ամենամեծ ֆակտոր հանդիսանում են անձրևները, քիչ անձրևների դեպքում քլորիդներն ավելի քիչ եփփեկտ են տալիս, քան սուլֆատները, շատ անձրևների դեպքում՝ ել ավելի քիչ: Հստ յերեսութին հողային ֆակտորը նույնպես կարեռ և, քլորիդներն ավազային հողերում պակաս եփփեկտ են տալիս, սակայն նրանց ազդեցությունը կավային հողերի վրա հավասար և, կամ քլորիդները նույնիսկ ավելի մեծ եփփեկտ են տալիս: Շատ գժվար և բացատրել այս յերեսութը, վորի համար Ռողամստեղում միասին փորձեր են կատարում մի ազգոնոմ, բույսերի մի ֆիզիոլոգ և մի եկոլոգ (Հ. Վ. Գարներ, դր. Ե. Զ. Մասկել և Տ. Եղիս), Այս հարցը շատ մեծ նշանակություն ունի:

Յեվրոպայի համար այն մի շաբթ խճված հարցերի առնչությամբ, վորոնք կապված են պարարտանյութերի պըռպկմի հետ: Կալիում քլորիդն ստացվում է Ելզասից և ֆրանսական արտադրություն և, կալիում սուլֆատն ստացվում և Ստասաֆուրտից և սա յել գեղմանական արտադրություն եւ Եքսպերտը պետք եւ ամենայն մանրամասնությամբ ձանոթ լինի պարարտանյութերի աղ-




Նկ. 4. Ամմոնիում քլորիդի թերքը, յերե հավասար քանակի ամմոնիումֆատինը ընդունենք 100. ամրաց թրիտանիայի միջնը 1923.

գեցության հետ, վորպեսզի ֆիրմերներն ընտրություն կատարելուց առաջ ճիշտ տեղեկություն ստանան:

Ամմոնիում սուլֆատի և ամմոնիում քլորիդի հարցը պակաս կարեղը չեւ: Անգլիայում անհրաժեշտ եւ մեծ չափերով աղոտի արդյունաբերություն ստեղծելու, այս պատճառը բացատրելու կարիք չկա: Խաղաղության ժամանակ նա կծառայի վորպես պարարտանյութ: Նա կարող է լինել ամմոնիում քլորիդ կամ ամմոնիում սուլֆատ, սակայն այդ հարցը պետք եւ լուծել նախքան արտադրության սկսելը:

Պըռը եմների մի խումբ ևս առաջանում է այն կարելիությունից, վոր բացի սովորաբար գործ ածվող աղոտից, ֆոսֆատից և կալիումից գուցե ուրիշ աննդատու նյութեր եւ կարեղը են: Բույսերի ֆիզիոլոգները ցույց են տվել, վոր անհրաժեշտ են ուրիշ շատ եւ մենատեր ևս, վորոնք կարող են միշտ պահանջված չափով հողում չգտնվել: Վաղուց արգեն Ռոդամսեղում պարզված



Աղը ամմոնիում սուլֆատի պայմանական սպառը մասնաւոր կարուսելի պատճեն է պայմանական սուլֆատի պայմանական սպառը մասնաւոր կարուսելի պատճեն է:

ե, վոր ֆոսֆատի պակաս ժամանակ լուծվող սիլիկատներն ավելացնում են գարու բերքը: Այս հարցն այժմ ուսումնասիրվում ե Գերմանիայում պարզելու համար, թե արդյոք հնարավոր չե՞ իմպուրային ֆոսֆատը վորոշ չափով փոխարինել տեղում պատրաստվող սիլիկատներով: Վ. Վ. Դարները և նրա աշխատակիցներն ուսումնասիրել են ծիսախոտի մի տարորինակ քլորոզ „Sand-drown“ և պարզել վոր դա առաջանում ե հողի մեջ անբավարար չափով մագնեզիում գանգելու հետեանքով: Հողը քիչ քանակությամբ մագնեզիում սուլֆատով պարաբացնելու դեպքում հիվանդությունը վերանում ե: Նույն աղը, ըստ Դյուրհամի փորձերի, տարբեր ազգեցություն ե արել կարտոֆիլի վրա:

Վերջին ժամանակների աշխատանքների մեջ ամենաանսպասելի եֆֆեկտ տվել են մի շարք ելեմենտներ՝ յերկաթ, բոր, մանգան և այլն, վորոնք քիչ քանակությամբ մտցվել են սննդատուլուծույթի մեջ: Բերթը բարանը գտել ե, վոր քիչ քանակությամբ մանգանը բույսերի զարգացման համար անհրաժեշտ ե: Բորի ուսումնասիրությունն սկսվել է Ռողամստեղում, ուր միջատաբանները մի շարք թույներ, նրանց թվում նաև բոր, եյին մըտցրել բակլա ցանած հողերը, վորպեսզի բույսերը դիմացկուն դառնան շիրայի գեմ: Բորը նկատելիորեն ուժեղացրել եր բույսերի աճեցողությունը, և յերբ բուսաբաններն սկսեցին ուսումնասիրել այդ խնդիրը՝ պարզվեց, վոր հին «լրիվ» մննդանյութերի մեջ բակլան նորմալ չի աճում, յեթե լուծույթի մեջ գոնե բորի հետքեր չկան: Մագեն (Փարիզի Պաստյորի ինստիտուտից) այդ նշանավոր ցուցակը լրացրեց միքանի այլ ելեմենտներով՝ յոր ցինկ, ալլումինիում և այլն: Այս խնդիրն ուսումնասիրում ենաև Ս. Բ. Լիպ մանը: Վիտամինների հետ անալոգիան այստեղ գայթակղեցուցիչ ե, սակայն անալոգիան զիտության մեջ ամենախաբուսիկ մեթոդն ե:

Այժմ կարող ենք մի հետազարձ հայացք ձգել իմ ներկայացրած նյութի վրա: Մենք տեսանք, թե ինչպես բույսերի սննդառության հարցի ուսումնասիրության սկզբում ֆան չելմոնտի և Ռուբուրտի միքանի լավ նախամտածված և պլանավորված փորձերը բավականին մեծ քանակությամբ տեղեկություններ, և մի պարզ և ըստ յերևույթին ամբողջ խնդրի լրիվ բացատրություն տվին: Մրան հետեւցին մեծ քանակությամբ տարբեր տեսակի և վորակի աշխատություններ, վորոնք հայտնաբերեցին բազմաթիվ նոր փաստեր, սակայն այդ ամբողջն այնքան եր հետո

խնդրի լուծումից, վոր նորից խճճեցին այն, ինչ վոր պարզ էր թվում: Այս, ըստ յերկույթին, անհստավի կերպով խճճած և բարդ հանգույցից հոչակավոր քիմիկոս Լիբիիը հանեց մի հասարակ ընդհանրացում, վորը Բուսսենդոյի, Լոողի և Զիլքերտի եքաղերիմենտալ հանձարի կողմից վորոշ փոփոխությունից և խորացումից հետո, ինչպես փորձերը ցույց տվին, հանդես յեկավ վորպես ամենավստահելին և ճշմարտության մոտ: Գործնական կիրառումը յեկավ հանկարծակի և անսպասելի:

Սրանով պատմությունը դեռ չի վերջանում: Լայն չափերով գործնական կիրառման ժամանակ հանդես յեկան մի շարք դժվարություններ և հակասություններ, վոր քերմերները չկարողունալով բացատրել՝ հանձնեցին ազդոնոմահետազոտողներին ուսումնասիրելու: Այս յերկույթներից շատերը ներկայիս գիտության համար գեռ անբացատրելի յեն: Այստեղից յերեսում ե, վոր հասարակ ընդհանրացումը գեպի ճշմարտություն տանող առաջին քայլն ե: Ամբողջ պրոբլեմը նորից առաքվում ե լաբորատորիա ուսումնասիրության համար, վորպեսզի յեթե հնարավոր ե, ճշմարտությանն ավելի մոտ բացամրություն գտնվի: Մենք կտեսնենք, վոր սա գիտության զարգացման սովորական ընթացքն ե: Առաջին աշխատողները մեծ քանակությամբ գիտելիքներ են ձեռքբերում, ապա գալիս ե մի շրջան, յերբ, ըստ յերկույթին, զարգացումը կանգ է առնում: Հանկարծակի գալիս ե ընդհանրացումը և վաղ կամ ուշ նաև համապատասխան գործնական կիրառումը: Հետո գալիս են լայն չափերով կատարվող գիտահետազոտական աշխատանքները և քննադատությունը և սրանց հետ միաժամանակ պրակտիկ ֆերմերների հետաքրքրական և անբացատրելի գիտողությունները: Մենք, փորձնական կայաններում աշխատողներս, շատ անգամ կանգնում ենք զայթակղության առաջ ընդունելու, վոր այդ գիտողությունները, վորոնց մենք ծանոթ չենք, ճշմարիտ լինել չեն կարող. սակայն նրանք հաճախ ճշմարիտ են և իրենց մեջ պարունակում են մեծ հետաքրքրություն ունեցող գիտական պրոբլեմների սաղմեր և շատ անգամ նույնիկակ հետագա զարգացման բանալին: Հետագայում կտեսնենք, թե ինչպես այս պատմությունը կրկնվում ե գիտության այլ բնագավառներում ևս: Սակայն առաջադիմությունը դանդաղ ե ընթանում և մենք չենք կարողանում ընության մեջ յերեսույթները գիտել իրենց ամբողջությամբ. ինչպես Բրաունինդն ե ասում, մենք պրատում ենք մոմով և վոչ թե ջահով:

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

ԴՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՃՇԳԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ

Վոչ մեջ գիտական հետազոտություն չի կարող վեջացած համարվել յեթե նրա արդյունքները քանակական արտահայտություն չեն գտնել: Միմիայն յերբ այս կատարվել ե, այն ժամանակ միայն գիտնականները կարող են ընդունել վոր տիրապետել են ճիշտ պերսպեկտիվը և արդեն գիտեն, թե նրանց վարկածը վոր չափով ե մոտեցել ճշմարտությանը: Իդեալական արտահայտության յերբեք չենք հասնում, վորովհետեւ յուրաքանչյուր գիտական պրոբլեմի մեջ ավելի բան կա, քան թե այդ ի վիճակի յե ըմբսնել մարդկային եյակը: Նույնիսկ բանաստեղծներն ընդունում են ճշգրիտ չափումների նշանակությունը, վորպես ամենաարժեքափոր այն բացարձությունը, վորին կարելի յե համար բնության մեծ պրոբլեմների ուսումնասիրության ժամանակ:

Շատ տարիներից ի վեր գիտնականները ցանկանում են մաթեմատիկորեն արտահայտել բույսերի սննդառության փաստերը, և այդ նպատակով կազմել են մի շարք մաթեմատիկական փորմուներ և կորագծեր, վոր մեծ մասսմբ սովորական ընթերցողների համար հետաքրքրական չեն, սակայն միշտ պետք ե ճիշել գ'Արսի Տոմազոնի խոսքերը, թե «յերբ գիտությունն սկսում է պարզ խոսել, նա խոսում ե մաթեմատիկայի լեզվով»: Թեև պետք ե խոսովվանել, վոր մինչև այժմ այժմ այնպիսի հաջողության չենք հասել, վորը համապատասխաներ այդ աշխատանքների կատարման և նրանց ընթերցանության վրա գործադրված ջանքերին, բայց և այնպես վերջին ժամանակի փորձերն ապագայի համար այդ ասպարիզում մեծ հաջողություն են խոստանում: Այդ պրոբլեմի լուծմանը մոտեցել են յերկու ճանապարհով: Մաքուր գիտության մեջ ընդունված ձեռվ կազմվել են կորագծեր և ապա սրանք արտահայտվել են հավասարություններով: Առաջին փորձը կատարել ե Լիբիիը, վորն ապացուցում եր, թե բույսերի զարգացումը հարաբերական ե հողի մեջ ամենանվազ քանակությամբ գտնվող սննդանյութին, ըստ այնմ ել բույսի զարգացման և սննդի

մեջ յեղած կապն արտահայտվում է ուղիղ գծով: Լոռզը և Զիլբերտը փոխեցին այս կորագիծը, ցույց տալով, վոր յերբ արված պարարտանյութի քանակը վորոշ սահմանի յե համառում՝ տեղի յե ունենում բերքի անկում, և արանով նրանք հիմք գրին պարարտացման ընթացքում տեղի ունեցող «նվազող հավելումների որենքին»:

Անկման պատճառների բացատրության համար կարելի յե ոգտագործել Բլեկմանի աեսակետը սահմանափակող ֆակտորների մասին, ըստ վորում ֆակտորի ավելացման հետևանքով տեղի ունեցող բերքի հավելումը սահմանափակվում է մի այլ ֆակտորի նկատմամբ, վորի ավելացումն իր հերթին մեծացնում է բերքը, բույսի զարգացման համապատասխան քանակությամբ: Սա արտահայտման շատ հասարակ ձև է կարող ենողի բերքատվության հարցերը լուծելու գործում շատ ոգտավետ լինել յերբ մի վորեւ ֆակտոր գերազանցող նշանակություն ե ստանում, և ըստ այնմ ել կարող ե սահմանափակող ֆակտոր հանդիսանալ: Սակայն հաճախ ե պատահում, վոր մեծ քանակությամբ գտնվող մի վորեւ ֆակտորի ավելացում նույնպես առաջացնում է բերքի հավելում և այդ տեսակետից յուրաքանչյուր ֆակտոր կարող ե վորպես սահմանափակող ընդունվել, բացառությամբ, ի հարկե, այն ծայրահեղ դեպքերի, յերբ նա վնասակար ազդեցություն ե անում բույսերի վրա:

Լիբիխի հասարակ հարաբերությունը լիովին չի համապատասխանում բույսերի զարգացման փաստին, թեև կարելի յե ընդունել, վոր նա բույսերի սննդանյութեր կլանելու խնդրում բավականին մոտ ե ճշմարտության: Շատ փորձեր են արված ճշմարտության մի ավելի մոտ արտահայտություն գտնելու. սրանցից ամենակարինորը պատկանում է Միչերիկին, վոր զարգացրել ե նա իր «Հողագիտություն» գրքի վերջին հրատարակության միջ: Այս գիրքը հանդիսանում է վերջերս նողի մասին գրամքներից ամենահետաքրքրականը: Նրա հիմնական յենթագրությանը հետեւյալն ե. վորեւ պարարտանյութ մտցնելու հետևանքով առաջացած բերքի հավելումը հարաբերական ե փաստացի ստացած բերքի և մաքսիմալ հնարավոր բերքի տարբերությանը: Մաքսիմալ բերք ասելով հասկացվում է այն բերքը, վոր ստացվում ե նողն այդ պարարտանյութով լրիվ ապահովելու դեպքում: Այստեղ հարաբերությունն արտահայտվում է վոչ թե ուղիղ գծով, ինչպես Լիբիխի մոտ, այլ լոգարիթմիկ




ՊԱՏԿԵՐ 9. ԲՈՐԱԲԹՎԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ ՁՐԱՑԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐՈՒՄ.

Յուրաքանչյուր շարքն ստացել է լրիվ պարարտացում. աջակողմյանը փոխեց չի ստացել: Այսից դեպի ձախ յուրաքանչյուր շարքն ստացել են այսել բորաբթվությունը: 1:500.000, 1:100.000, 1:50.000 յեկ վերջինը 1:5000 հարաբերությամբ: ԽՅՅՕՅ: (K. Warington, Annals of Botany, vol.

37 pp. 1—44, 1923:)

կորագծով (նկ. 5), վորոն արտահայտվում է հետևյալ հավասարությամբ.

Ամպոնիում սուլֆատ ցենտրու ակրին.



Պարաբոլային թերի քանակը¹
ցենտրու ակրին

Նկ. 5. Միջերկիխի կորագիծը, վոր ցույց է տալիս բայսերի զարգացման չափը մաքսիմումի տոկոսներով y/A , յերբ, վորպիս ազուրի աղբյուր, ամմոնիում սուլֆատ և գործ ածվում: Բոլոր փորձնական տվյալները ընկնաւմ են այս կորագծի վրա:

$$\frac{dy}{dx} = k(A - y)$$

կամ

$$\begin{aligned} \log_e(A - y) &= \log_e(A - a) - cx, \\ \text{այս հավասարությունը կարող է դրվել նաև հետևյալ ձևով}, \\ \log_e(A - y) &= \log_e A - c(x + b), \\ \text{ուր } x &= \text{մացվող ֆակտորի քանակը}, \\ b &= \text{նույն ֆակտորի քանակը հողում, մացնելուց առաջ}, \\ y &= \text{բերքի քանակը (բերքի կշիռն առանց սերմացվի), վոր} \\ &\text{ստացվում է } x \text{ ֆակտորը մացնելուց հետո,} \\ A &= \text{հարավոր մաքսիմալ բերքը (այլայ ֆակտորի անսահ-} \\ &\text{մանափակ քանակով դանվելու դեպքում),} \end{aligned}$$

$a = \rho b_r f_n$ առանց ֆակտորը մտցնելու,

$c = \text{կոնստանտ:$

Միջերլիխը պնդում է, վոր ս կոնստանտը բոլոր պարաբառանյութերի, բույսերի և հողերի համար միևնույն մեծությունն է և նա այդ անվանում ե ազդեցության ֆակտոր (Wirkungsfaktor): Այս ֆակտորի արժեքն ըստ Միջերլիխի հետեւյալն է.


	Ցենտներ հեկտարին
Ամմոնիում սուլֆատ	0.025
Նատրիում նիտրատ	0.02
Սուլֆերֆոսֆատ	0.08
40% անոց կալիումի աղ . .	0.13

Յեթե ազդեցության այս ֆակտորներն իրոք մշտական և մնայուն լինելին՝ հետազոտողը կարող էր միմիայն մի դաշտային փորձ գնելով նախագուշակել տարբեր քանակությամբ պարաբառանյութեր մացնելուց ստացվելիք բերքը. այս հետևանքը կունենաբ հսկայական գործնական նշանակություն:

Այս աշխատանքն առաջ բերեց մի ընդարձակ վիճաբանություն, վոր գյուղատնտեսական գրականության մեջ գրավեց համարյա ամենամեծ տեղը, ներառյալ Բառուի, Թրյոհիխի, Մայերի, Պֆայֆերի և Ռողենվալդի գործերը:


Սրա գեմ հանդես բերեցին հետեւյալ յերեք ամենալուրջ առարկությունները. առաջին՝ փորմուլան ցույց է տալիս, վոր քիչ և շատ սննդանյութ ստացած բույսերն իրականում նույնն են, վորովհետեւ միայն այս գեղագում կարող ե իրականանալ բերքի այն տարբերությունը, վոր արտահայտված ե Ա-ա փորմուլայի մեջ: Փաստորեն այդ ճիշտ չե, վորովհետեւ սննդանյութը վոչ միայն ուժեղացնում ե բույսի աճեցողությունը, այլև վորոշ չափով նրան փոփոխության ե յենթարկում:

Յերկրորդ առարկությունն այն է, վոր իրականում վերջնականապես Ա-ին համապատասխանող մաքսիմում գոյություն չունի, վորովհետեւ աճեցողության չափը վոչ միայն ուսումնասիրվող ֆակտորից ե կախված, այլև բոլոր մյուս մասնակցող ֆակտորներից: Այս վերջինն ընդունում ե նաև Միջերլիխը և այդ ուսումնասիրել ե նաև Բառուը, ըստ վորի բերքը վորոշվում ե վորպետքագմաթիվ բաղմապատկիչների արդյունք, վորոնք արտահայ-



ՊԱՏԿԵՐ 10ա. ԼՈՂԻ ՑԵՎ ԶԻԼԵՐՏԻ ՓՈՐՁԸ

Տրված ազդուային պարաբառայուրի հետապատասխան ցորենի բերքի մեծացումը, մյուսներն ստացել են ակրին մինչեւ 600 փուտ մեծացող բանակով ամմոնիումի ադ:



ՊԱՏԿԵՐ 10բ. Զ. Ա. ՊՐԵՍԿՈՏԻ ՄԱԿԵՐԵՍԸ

ցույց է տալիս յեզիստացորենի անեցողությունը տարբեր խտության ցանքի յել տարբեր բանակի ազդային պարաբառայման դիպում:

Sultanic Agr. Soc. Bull. 4 (1920).

տում են առանձին ֆակտորների ազդեցությունը։ Նա Միջերլի-
խի հավասարությանը հետեւյած ձևն է տալիս։

$$\frac{y}{A} = 1 - e^{-cx}$$

և ապա բերքը արտահայտում է հետեւյալ ֆորմուլայով։

$$P_{\text{երք}} = A (1 - e^{-c_1 x_1}) (1 - e^{-c_2 x_2}) (1 - e^{-c_3 x_3}) \dots \text{և } a_j \text{ այս }$$

\sum_j արտահայտության մեջ յենթաղբվում է յերեք բան՝

1. Բերքը և նրա հավելումը վորոշում են բույսի գարգացման
գործում մասնակցող բույսը ֆակտորները։

2. Վորեւ պարարտանյութ մացնելու կամ այլ ֆակտորի փո-
փոխության հետևանքով ստացված բերքի հավելման տոկոսը
սրանց հատուկ անփոփոխ մեծություն է և ննացած մյուս ֆակ-
տորներից անկախ (տես տախտակ 7 և նկ. 6)։

3. Սննդանյութի կամ այլ ֆակտորի ազդեցության ուժն ամ-
բողջովին վորոշվում են ազդեցության միավորով (Wirkungsmenge)
ի, վորը հավասար է

$$h = \frac{\log_e 2}{c} = \frac{0,7}{c},$$

$c = M_{\text{իջերլիխի}} \cdot \text{«ազդեցության ֆակտորին»}^*$)։

Յերրորդ առարկությունն այն է, վոր իրականում կղնստանա-
տը գտնեն անկարելի յեւ և միշտ A ստանալու համար պետք է
մեծ չափերով ստուգումներ կատարել։ Ավազային փորձերի ար-
դյունքները համոզիչ եյին ընթերցողի համար, սակայն յերբ $M_{\text{ի-}}$
 \cdot չերլիխը փորձերը դաշտ փոխադրեց և ցանկացավ հաշվել չ-ը
(ավելացրած պարարտանյութը) և զրանով գտնել հողի մեջ յե-
զած բույսին տրամադրելի և պարարտանյութից փաստորեն ոգ-
տագործած սննդանյութերի քանակի տարբերությունները՝ նա
մեզ միանդամայն դաշտամանեց։

Ի հարկե գիտնականներն այս մեթոդին դեմ արտահայտվե-
ցին, սակայն դեֆեկտների հետ միասին մենք չպետք են անտես


*) Վորպես «ազդեցության միավոր» պետք է հասկանալ ֆակտորի այն
չափը, վոր անհրաժեշտ է բերքի տվյալ պարարտանյութի ազդեցությամբ ստաց-
վող մաքսիմումի կեսն ստանալու համար, այսինքն՝

$$h = x, \quad j_{\text{երը}} \quad x \cdot c = \frac{1}{2} A$$

$$1 - e^{-ch} \text{հավասարվում է } k_{\text{եսի}} \frac{1}{2} \quad \text{և}$$

$$h = \frac{\log_e 2}{c} = \frac{0,7}{c}$$

գացավ Ուղամստեղի նոր ստատիստիկական բաժնում Ռ. Ա. Ֆիշերի զեկավարությամբ։ Սա մաթեմատիկայի այն կիրառումն է, վորից վիճակագիրները մեծ հաջողությամբ ոգտվում են ժողովրդագրության պրոբլեմները լուծելու ժամանակ։ Մըս առավելությունն այն է, վոր հաշվի յեւ առնում դաշտում ազդող բոլոր ֆակտորները։ Մեծաքանակ ավյալների դեպքում, այս հատուկ մեթոդի միջոցով հնարավոր եւ բազմաթիվ ֆակտորների ազդեցությունը տարրալուծել և այդպիսով դաշտային ամբողջ պրոբլեմը բաժա-



Հուգահեռ, ապա
պակասող հավե-
լում (ուղիղ գիծ)

Հավելման անընդ-
հատ անկում (լո-
ւարիթմիկ կորս-
գիծ)


Փոքր, ապա ու-
ժեղ և նորից ընկ-
դարիթմիկ կորս-
(սիդմուրալ կո-
րագիծ)

Նկ. 7. Պարարտանյալքերի ազդեցությունը բերքի
վրա ցուցաբերող յերեք տիպի կորագծեր։

նել մի շարք ֆատկորների պրոբլեմների արևպիսի ձևով, վոր շատ լավ ծանոթ եւ գիտնականներին։

Այս մեթոդով առաջին անգամ ուսումնասիրված են հոչակավոր Բրոդբուկի ավյալները, ուր 81 տարի անընդհատ ցորեն է մշակվել, 75 տարի մշակությունը վոչ մի փոփոխության չի յենթարկվել և այդ ժամանակի ընթացքում աշխատողների մեծ փոփոխություն տեղի չի ունեցել, ուստի և աշխատանքի մեթոդը նույնական մեծ տատանումների չի յենթարկվել։ Բոլոր ավյալները ինսամքով պահպել և այժմ թվերի մի հսկայական կույտ են կազմում, վորի առաջ սովորական մարդը կորցնում է գլուխը, իսկ վիճակագիրն իրեն շատ լավ է զգում։ Առանձին հողակտորների բերքը վոչ միայն բացարձակ, այլև հարաբերական փոփոխության և յենթարկում։ Անալիզները ցույց տվին, վոր բերքի

տատանման վրա ֆակտորների յերեք խումբ եւ աղղում՝ մեկն աղղում եւ անընդհատ առաջադիմելով միևնույն ուղղությամբ, առաջացնելով բերքի անկում: Յերկրորդն աղղում եւ նույնպես առաջադիմելով, սակայն մերժ մնել ուղղությամբ, մերթ՝ հակառակ, իսկ յերրորդի աղղեցությունը տատանվում է: Վիճակագիրները բերքի վրա այս ֆակտորների ունեցած աղղեցությանը քանակական արտահայտություն են տալիս, առանց պարզելու նրանց բնույթը: Կարելի յեւ համարձակորեն յենթապրել, վոր ա-



Նկ. 8. Բրոդրուկի փորձահոդամասի բերքը. պարարտացրած լրիվ արհեստական պարարտանյութերով յեւ գումարով յեւ համեմատած յերկրի միջին բերքի հետ:

առաջադիմող վնասակար ֆակտորը հողի փչացումն եւ, յերկրորդը, վոր նույնպես առաջադիմում եւ, սակայն կարճ ժամանակաշրջանուներով՝ մոլախոտերի բազմանալն եւ յերրորդը՝ տատանվողը, ինչպես բոլոր բըթանացիները հեշտությամբ կարող են ճանաչել՝ չեղանակներն են, վորոնք փոփոխվում են ընդհատումներով, առանց անցյալ տարիների հետ վորեւե կազ ունենալու:

Հետեւանքները (Նկ. 8 և 9) ցույց են տալիս, վոր գոմաղբով պարարտացրած հողակտորների բերքի տատանումներն ավելի թույլ են, քան մյոււներինը. ամենամեծ տատանումներ յերեւան են բերում վոչ լրիվ պարարտացրած հողակտորները: Անընդհատ առաջադիմող ֆակտորը՝ հողի հատկությունների վատացումը, բուրոր հողակտորների վրա յեւ հանդես եւ դալիս, սակայն շատ պարարտանյութ ստացած հողերի վրա՝ ավելի թույլ. նա հազիվ


նկատելի յեւ այն հողակտորների վրա, վորոնք գոմաղբ են ստացել և ամենից ուժեղ՝ վոչ լրիվ պարարտացրում ստացած հողակտորների վրա: Կալիումի պակասը շատ լուրջ եփփեկտ եւ տակիս Ռողամստեղի ծանր հողերի վրա, վորոնց մասին յենթադրությում եւ, թե նրանք կալիումով ապահովված են: Յեղանակների վնասակար աղղեցությունը գոմաղբով պարարտացրած հողամասե-

Դաշտաղ գորանակուրյուններ:

Հողի Փշացումը

Տարեկան Փոփուլությունը: Յեղանակ

Առանց
Կալիումի




Նկ. 9. Յօրենի բերքի տատանումները. բաւշել ակրից. Բրոդրուկ ըստ Ա. Ա. Ֆիշերի

ըի վրա ամենից քիչ եւ արտահայտվում, իսկ վոչ լրիվ արհեստական պարարտանյութեր ստացածի վրա՝ ամենից ուժեղ:

Բրոդրուկի ավագաներն անալիզի յեն յենթարկվել նաև անձրեների եփփեկտը վորոշելու համար: Վաղուց հայտնի յեւ, վոր այդ աղղեցությունը տատանվում եւ ըստ բույսերի զարգացման շրջանների, և յեվրոպական պայմաններում ձմեռն ավելի մեծ վնաս եւ պատճառում, քան ամառը: Բրոդրուկի դոշտերի բերքի վրա ունեցած աղղեցությունը կարելի յեւ արտահայտել մաթեմատիկորեն և նորմայից ավել յուրաքանչյուր դյույմ անձրել աղղեցությանը կարելի յեւ նախատեսել ըստ ամիսների (Նկ. 10):

Նման հետազոտություն կատարված եւ նաև Հուզփելդի գարուն կատամամբ. զարին այստեղ, ինչպես և ցորենը, անընդ հատ

մշակվել ե միենույն հողակտորի վրա յոթանասուն յարք տարի։ Յեթե ժամանակը ների, հետագայում պետք է ուսումնասիրվեն նաև նւորութնի թեթև ավաղաճողերի տվյալները, ուր ցորենը և գարին 55 տարի անընդհատ մշակվել են։ Հույս ունենք, վորայս և ուրիշ տվյալների ուսումնասիրությունից հետո մենք հնարավորություն կունենանք գերմեներին նախորոք խորհուրդներ




Նկ. 10. Նորմայից ավելի յեկա յուրաքանչյուր դյույմ անձեռի ազդեցությունը ցորենի բերքի վրա, բուշեներով ակրին (Բրոդբակ): 0-ից ցածրը ցույց ե տալիս բերքի պակասումը:

տա, կանխավ նախառեսելով, թե ինչ բերք կստանան նրանք այս կամ այն պարարտանյութերի խառնուրդը դորձածելու հետեանքով։ Անհնարին չե, վոր ազրոնոմները մոտիկ ապագայում հետևալ ձևով տախտակներ կազմեն։

տնտեսություն		
Հ Ա Ր	Յ Ե Պ Ա Կ	Յ Ե Պ Ա Կ
Տիպային միջինից ավելի կամ պակաս%	Միջինից ավել կամ պակաս	
	անձրել ջերմուր. յել այլն	
Ավագ	1 ամիս	
Տիղմ	2 ամիս	
Կավ	3 ամիս	

Վերը բերած պայմանների հետանկարներն այն են, վեր պարարտանյութերի հետեւալ խառնուրդը . . . բուշել բերքի հավելում կտա:

Ֆերմերը կհասկանա այս լեզուն և կարող կլինի վորոշել, թե արժեք արդյոք ոփակ անե՞ւ թե վոչ։ Ավելի մեծ կարեորություն ունի նաև այն փաստը, վոր այս ոփակը կարող և ապահովագրվել, վորովհետեւ նա հիմնավորված է։ Ներկայումս Անգլիայի բերքը չետապահովագրվում ձեռնտու գներով, մինչդեռ յեթե բերքը նախորդը վորոշող տախտակներ գոյություն ունենային, այն ժամանակ գործարար շրջաններում բերքի ապահովագրումը նույնպիսի արագությամբ կծալվալիք, ինչպես կանքի ապահովագրումը։ Զի-




Նկ. 11. Ցորենի բերքը, տախտական միջինը 1852—1922.
Բրոդբակի դաշտ, Մոդամունք:

կարելի սպասել, վոր դա շուտով տեղի ունենա. կյանքի ապահովագրման մանրամասնությունների մշակումը տեսեց հարյուր տարի, բերքի ապահովագրմանը գուցե ևս նույնքան տեիր։

Փորձերի տվյալների վիճակագրական վերամշակությունը հայտնաբերեց այն փաստը, վոր գոմաղբի ազգեցությունը տարբերվում է արհեստականից և վոր նա վերջինով փոխարինվել է Հ-

կարող: Ազգոքիմիկոսներն այս յեղբակացությանն են յեկել այդ առթիվ ծագած յերկար վեճերից հետո: Լոողի և Զիլբերտի բառաջին փորձերում արհեստական պարարտանյութերն ավելի լավ ելին ազդում, քան գոմաղբը, և թեև նրանք չելին պնդում, վոր առաջնաները յերկրորդից լավ են, սակայն նրանց աշակերտներն



Նկ. 12. Ռւոբարին, մշտական գարու դաշտի բերք, 1877—1922

անում ելին այդ, իրենց ուսուցիչներից առաջ անցնելով, մի հատկություն, վոր հատուկ է աշակերտներին: Ֆրամսացի հայտնի ազրոքիմիկոս Վիլին այնքան առաջ գնաց, վոր պնդում եր, թե գոմաղը միանգամայն ավելորդ է և կարող է տնտեսապես վոխարինվել արհեստական պարարտանյութերով:


Բրիտանացի պրակտիկները յերբեք չհամաձայնվեցին այս տեսակետի հետ և ընդունում ելին, վոր գոմաղըն ավելի լավ ե աղջում, քան արհեստական պարարտանյութերը, սրա համար ել նրանք իդուր տեղը մեղաղըլում ելին, վոր դեմ են նոր տեսակետներին և դիտական հայտնագործումներին: Յերկար ժամանակայի դրույթն ընդունվում եր վորակն գիտության և պրակտիկայի հակադրույթյան անխուսափելի գիծ, և յերբ յես, 17 տարի առաջ, առաջին անգամ ֆերմերներին դասախոսում ելի, իմ լարանի հասակավոր անդամները կարծում ելին, թե յես ևս կապարակեմ գոմաղըն և կղնդեմ այն տեսակետը, թե արհեստական պարարտանյութերի գործածությունը ճիշտ և բնական է:

Գյուղատնտեսության գիտության համար բարեբախտություն եր այն հանգամանքը, վոր Զիլբերտը, առողջ մտքի տեր մարդկանելով և մեծ սիրով վերաբերվելով 20-ամյա աշխատանքին, կարողացավ համոզել Լոողին Ռողամստեղի դաշտային փորձերն ավելի յերկար շարունակելու, քան թե այդ բավարար եր համարվում ըստ ծրագրի: Այս փորձերի շարունակությունն ապացուցեց, վոր արհեստական պարարտանյութերի առավելությունը տեսական չե: Արհեստական պարարտանյութերն սկզբում ավելացրին հողի բերքատվությունը, սակայն սիքանի տարի հետո բերքն սկսեց պակասել: Մյուս կողմից գոմաղըն հայտնաբերեց բերքի անկման ավելի փոքր տեսնենց, և թեև թե Ռոբորնում և թե Ռողամստեղում, փորձի սկզբնական շրջանում գոմաղըն բերքն ավելացնում եր նվազ չափերով, քան արհեստական պարարտանյութերը, վերջում, ընդհակառակը, գոմաղըն եփփեկտը շատ ավելի մեծ եր: Տարբերությունն այժմ խիստ ակնհայտ է (տես. նկ. 11, 12 և 13):

Գոմաղըի յերկրորդ առավելությունն այն է, վոր գոմաղըով պարարտացրած բույսերն ավելի քիչ են տուժում յեղանակի ֆակտորից, քան միմիայն արհեստական պարարտանյութեր ստացածները, այնպես վոր յեղանակի ավելցության հետևանքով տեղի ունեցող բերքի տատանումներն ավելի փոքր չափերով են արտահայտվում (նկ. 8):

Յերբորդ առավելությունը նոր և նշված և դեռ ևս լավ չի ուսումնասիրված: Վորոշ կուլտուրաներ, ըստ յերեսովյթին, ավելի լավ եփփեկտ են տալիս գոմաղըով պարարտացնելու դեպքում: Վորակն որինակ կարող է ծառայել յերեքնուկը, Բրիտանիայում մշակվող ամենահիմնական կուլտուրաներից մեկը: Նա ավելի լավ եփփեկտ է տալիս գոմաղըով պարարտացնելու, քան թե արհես-


տական պարաբունակութերի վորևե կոմբինացիայի դեպքում, և վրչ միայն ավելի լավ խոռ ե տալիս, այլև հողն ավելի յե հարստացնում և այդպիսով հետաղա բերքի վրա ավելի լավ ազգեցություն ե անում: Պիկերինզը ցույց ե տվել վոր հաղարջը զոմալրից ավելի լավ բերք ե տալիս, քան արհեստական պարաբունակութերից (նկ. 14): Նման արդյունք են տվել Ռիվերսայ-



Նկ. 13. Աւորաբ, մշտական ցորենի բերքը, 1877—1922.


դում (կամիզունիա) նաև ցիտրուսային կուլտուրաները: Այս և այլ փորձեր ապացուցում են, վոր գոմաղը կուլտուրաների զարգացման վրա կարևոր ազդեցություն ե անում, իսկ արհեստականները՝ վոչ այն չափով: Այս յեղբակացությունը վերաբերում է խոնավ (հումիգ) կլիմայական պայմաններին, իսկ չվոռոգվող չոր կլիմայական պայմաններում մշակվող կուլտուրաների վրա, ըստ յերեվայթին, նման ազդեցություն չի նկատվում:

Յերբ հարցը վերաբերում է այսպիսի գործնական նշանակություն ունեցող յեղբակացության՝ նպատակահարմար ե հետագա-



ՊԱՏԿԵՐ 12. ՈՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԻՄՈՒԼԱՏԻՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ
Lemma-3ի ՅԵՎ *Salvinia natans*-ի ԲԱԶԱՄԱՑՄԱՆ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՎՐԱ
(Bottomeley, Annals of Botany, vol. 34, p. 353, 1920)

գիտահետազոտական աշխատանքները բաժանել յերկու մասի՝
1) յերկույթի զուտ գիտական հետազոտություններ՝ փաստն ար-
ձանագրելու և նրա հիմքում գտնվող սկզբունքները պարզեցու
համար և 2) գյուղատնտեսական հետազոտություններ, վորոնց
նպատակը պետք է լինի ցույց տալ ֆերմերներին, թե ինչպես
ոգտագործել գիտության ձեռք բերած տվյալները, սակայն առանց



Նկ. 14. Հաղարքի պարարտացումը Ռուրուրնի պատգատու այգում
(Pickering).

այդ լուսաբանելու կամ նույնիսկ փաստը հասկանալու փորձեր աշ-
նելու։ Հատկապես այս շրջանում գյուղատնտեսական հետազո-
տության նպատակն է ցույց տալ ֆերմերներին, թե ինչպես ա-
վելացնել հողերին գոմաղթ մատակարարելը՝ կամ նրա արտա-
գրությունն ավելացնելու կամ կորուստները կրճատելու միջնորդ,
կամ թե գոմաղթը փոխարինող նյութեր գտնել ինչպես կանաչ
պարարտացումը, խոտի ու յերեքնուկի մնացորդների ոգտագոր-

ծումը և այլն, Այստեղից հետեւում են հետազոտության հարցերի չորս գլխավոր խմբերը՝

1. Գոմալը ստանալու, պահպանելու և ոգտագործելու ռուղիները:

2. Որգանական նյութերի ոգտագործումը՝ բրդի վերամշակության մնացորդները, քուսպերը, կոյուղու պարունակությունը և այլն:

3. Այնպիսի ցանքաշրջանառության կիրառելու, վոլուկավեցնի հողի որգանական նյութերի քանակը՝ ինչու խոտաբույսերի մշակությունը, առվույտի մշակությունը և այլն:


4. Կանաչ պարարտացման կիրառումը:

Այս ուղղությամբ գիտական աշխատանքները դեռևս անընդհատ առաջ են ընթանում. Նրանք սահմանափակվել են գոմալը հողի և բույսի վրա ունեցած ազդեցության ուսումնասիրությամբ: Գտնվել են, վոր գոմալըն ավելացնում և հողի ջուր պահելու ունակությունը (պատկ. 12, նկ. 15), փոքրացնում և հողի կպչունությունը և գութանի շարժման դիմադրությունը (նկ. 16) և, հավանորեն, դրա հետևանքով ել նպաստում ե արմատների զարգացմանը: Նույն հիմքեկտն արհեստական պարարտանյութերը կամ չեն հայտնաբերում կամ չնչին չափերով են հայտնաբերում և հենց այս ել կազմում ե գոմալը առավելության պատճառները: Ապա ուսումնասիրությունները պարզել են, վոր գոմալը այս ազդեցությունները յերևան են գալիս միմյաննրա քայլքայումից հետո, և դրանով ել բացատրվում է այն փաստը, վոր գոմալը չոր (արիդ) հողերում նույն յերկութները չի առաջացնում:

Սակայն թվում ե, թե որգանական նյութերն ուղղակի ազդում են նաև բույսերի սննդառության վրա, և այդ տարբերվում ե սովորական սննդանյութերի ազդեցությունից, սակայն վորքան այդ ցանկալի յե, այնքան ել հաստատապես պնդել չենք կարող: Վերջերս պրոֆ. Բոտառուլեյը հայտարարեց, վոր ազոտ պարունակող որգանական վորոշ նյութեր, վոր նա Auximones և անվանում, մեծապես ուժեղացնում են բույսերի աճեցողությունը, նույնիսկ յեթե քիչ քանակությամբ են արվում: Նրա փորձերը տեխնիկան անբավարար եին և նա չկարողացավ մյուսներին համոզել, սակայն նրա փորձերից մեկը համոզիչ է: Lemna ջրային փոքրիկ բույսը նա սննդառում եր սովորական սննդառու լուծությում, բաղկացած անորգանական աղերից, առանց վորսե որգա-

նական նյութի հետքերի, և բույսը կորցրեց իր բազմացման ընդունակությունը: Ազոտ պարունակող որգանական նյութերի հետքեր ավելացնելու դեպքում բույսերն սկսեցին արագորեն բազմանալ: Նույնը տեղի ունեցավ նաև *Salvinia natans*-ի հետ (պատկ. 13)*:

Ողգամատեղում նկատված ե բույսերի արմատների մի հետաքրքիր և անբացատրելի յերկույթ: Գոլորշիով մշակած հողերում ցանդած տոմատները մեծ քանակությամբ փնջածե արմատներ.



Նկ. 15. Գոմալը ազդեցուրյունը հողի խոնավության վրա:


առաջացրին, վորպիսին վոչ մի անորգանական սննդանյութի չի առաջացնում: Խավանական ե, վոր այդ առաջացել է մի շարք որգանական նյութերի պատճառով, վորոնք կազմվել են գոլորշու ազդեցությամբ տեղի ունեցող քայլքայման հետևանքով: Եեր գիտության ներկա զրությունը մեզ հնարավորություն չի տալիս բացատրելու այս արդյունքը, և հետագա փորձերը խիստ ցանկալի յեն: Տեղին ե հիշատակել նաև, վոր Շրայները և Սկինները գտել են, վոր վանիլինը հատուկ ստիմուլացիոն ազդեցություն և անում բույսերի զարգացման վրա և հավանական ե, վոր հողին արվող

*) Annals of Botany, vol. 34, յեր. 353 (1920). Այս արդյունքները ժխտում են Ա. Կարպե. Journ. Ind. Eng. Chem. 1924 vol. 16 յեր. 249.

գոմաղբի մեջ ևս գտնվում են նման նյութեր: Հավանողեն պիկրինյան թթուն և քլորպիկրինը նման ստիմուլյացիոն ազդեցություն են անում (պատկ. 14. բ.): Աղաղան կլուծի այն հարցը, թե ազրութիմիկուներին կհաջողվի՞ արդյոք յերբեն ալիքիսի նյութեր գտնել, վորոնց ազդեցությունը նմանվի *Lemna*-ի և տոմատի արձաների վրա յեղած ազդեցություններին և արդյոք կարող կլինեն նրանք այդ նյութերն այն չափով արտադրել, վոր հնարավոր լինի մատակարարել գյուղատնտեսության:

Այժմ հաստատապես կարող ենք ասել, վոր արհեստական պարտանյութերի և գոմաղբի կողմնակիցների մեջ տեղի ունեցող

ՉՊԱՐՈՒՄԱԿԱՆ ԿԱՐԱԳԱԿ



Նկ. 16. Ուժի գործառնությունը տարբեր պարարտացրած հողերը վարելու ժամանակ.


B. A. Keen և W. B. Haines, Խողանութեա:

վիճաբանությունը վերջացավ այնպես, ինչպես սովորաբար վեճերը վերջանում են՝ յերկու կողմերն ել վորոշ չափով արդարացի եյին, բայց վոչ լիիվ: Ագրոքիմիկուները դեռ պնդում են իշխանց արհեստական պարարտանյութերի վրա, բայց նրանք ընդունում են նաև գոմաղբի նշանակությունը ջրի կուտակման և մշակությունը հեշտացնելու գործում, միաժամանակ նաև ընդու-



ՊԱՏԿԵՐ 13ա. ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՃՈՂ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՊԱՐԱՐՏԱՑ-
ՐԱԾ ՏՈՄԱՏՆԵՐԻ

Անոր 47-չպարարտացրած, անոր 55-79-անող քանակներ, անեցողությունն ուժեղանում է մինչիլ 72-րդ անորը. 79 անորում, վոր շատ պարարտանյութ և ստացել, անեցողությունը բավարար է: 63-րդ անորը հայտնաբերում է պտուղների զարգացման ոպտիմալ պայմաններ:



ՊԱՏԿԵՐ 13բ. ՏՈՄԱՏԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ ԶՄԱԿՎԱԾ ՅԵՎ ԳՈԼՈՐԾԵՈՎ ՄԸ-
ՇԱԿՎԱԾ ՀՈՂՈՒՄ ՅԵՎ ՊԻԿՐԻՆՅԱՆ ԹԹՎՈՎ ՄՇԱԿՎԱԾ ՀՈՂՈՒՄ

Նելով, վոր գուցե գոմաղբն այլ ճանապարհներով ևս նպաստում ե բույսերի զարգացմանը։ Այժմ ֆերմերներին խորհուրդ ե տըր-վում բույսերի սննդառությունն ապահովելու համար գործ ածել արհեստական պարարտանյութեր, միաժամանակ հողերին նաև որդանական նյութեր տալ, վորպեսզի հնարավոր լինի ոգտագործել այն բոլոր բարիքները, վոր նրանք տալիս են։

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

ՈՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ ՅԵՎ ԿԵՆԴԱՆԻ ԲՈՒՅՍԸ

MORS JANUA VITAE

Հին ազբուքիմիկոսները պարզել են, վոր որդանական նյութերն անհրաժեշտ են հողի բերքատվության համար, գոնե այն խոնավ պայմաններում, վոր նրանք ուսումնասիրել են: Նրանք գիտեն նաև, վոր որդանական նյութերը պետք ե քայքայվեն, վորպեսզի հայտնաբերեն իրենց բարեբեր աղդեցությունը: Տասնեռութերորդ դարի լեզվով «քայքայվելը» (բառիս իսկական իմաստով) բույսերի մայրն ե»:

Այս փաստերը հեշտությամբ կարելի յէ ցուցաբերել անոթների հասարակ փորձի միջոցով, ինչպես այդ յերեսում ե պատկ. 15-ից, ուր յերկու անոթ լցված եյին համեմատաբար լավ հողով, իսկ յերկուս՝ ավագային ստերիլ յենթահողով: Ցուրաքանչյուր շարքից մեկականը ստացել ե խոտ և այլ բուսական մնացորդներ, վորը լավ խառնվել ե հողի հետ և ապա չորս անոթի միջանել են սերմեր: Առաջին հողից բուսական մնացորդներն անհետացել են՝ ավելացնելով նրա բերքատվությունը, իսկ յերկորդի հողի (ավագի կամ յենթահողի) բերքը նրանք պակաս չափով են՝ ավելացըրել և իրենք ել չեն անհետացել: Սա ցույց ե տալիս, վոր որդանական նյութերն այն ժամանակ են ավելացնում բերքը, յերբ իրենք քայքայվում են և վոր այս յերեսութը լավ հողում՝ ավելի հեշտ և կատարվում, քան վաս հողում: Այս փորձը բավական ճիշտ ձեռնություն վերաբարերում ե ֆերմերի աշխատանքը դաշտում, յերբ նա վարելով խողանը՝ հողի մեջ ե մտցնում ծղուտը և յերեքնուկի ու այլ խոտերի մնացորդներ: Իսկ բնության մեջ մեռած ցողունները, տերեները և այլն հողի մեջ են մտցնում՝ ճիռունները, մրջյունները և այլ կենդանիները:

Քայքայման անհրաժեշտությունը ֆերմերները լավ են ըմբռնել: Բույսերի մնացորդները և գոմաղբը կարող են վնաս բերել յեթե տեղի չի ունեցել նրանց քայքայումը: Ծղուտը, չքայքայված գոմաղբը և բուսական մնացորդները կարող են վնասել

1) Մահը կյանքի դուռն ե:

չոր հողերին, ավելացնելով սրանց գոլորշիացնող մակերեսույթը և նպաստել ջրի գոլորշիացմանը, վոր այլևս գժվար կլինի վերականգնել: Անզլիսյի արևելյան շրջաններում (անձրևները մոտ 25 դյույմ) ֆերմերները թեթև հողերը պարարտացնում են լավ քայքայված գոմաղբը, վորովհետեւ չոր շրջաններում գոմաղբը և կանաչ պարարտացումն այնպիսի ոգում չեն տալիս, ինչպես խոնավ յերկրներում:

Թիմիկոսները մեծ ուշադրություն են դարձրել քայքայման պրոցեսների վրա, սակայն պետք ե ասել, վոր պրոբլեմի լուծումը շատ գժվար ե: Առդամաստեղի կազմակերպման ժամանակ 1843 թ. հայտնի եյին քայքայման յերեք տիպ՝


1. Նիտրատների արտադրությունը,
2. Սև, անստրուկտուր հնումուսի առաջանալը,
3. Լրիվ քայքայում, վոր տալիս և CO₂ և պարզ ֆուֆատի, կալցիումի, մագնեզիումի, կալիումի և այլն միություններ:

Որդանական նյութերի հողի մեջ քայքայվելով նիտրատներ առաջանալը լավ ուսումնասիրված եր 19-րդ դարում յեվրոպական յերկրների զինվորական վարչությունների կողմից, վորովհետև այդ վառողի արտադրության համար զործածվող նիտրատների գլխավոր աղբյուրն եր (պատկ. 16): Սակայն յերկար ժամանակ հայտնի չերազոտի և հողի բերքատվության մեջ յեղած կապը, մինչև լոռողը և ջիլբերտը ցույց տվին այն եյական նշանակությունը, վոր ունի աղոտը հացի բերքի համար: Առաջին անգամ բուսսենդոն 1855 թվին ցույց տվեց պարարտանյութերի և մունիցիբայի մեջ յեղած կապը, վորն ընդգծվեց մանավանդ 1918 թվից հետո, յերբ Յեվրոպայի խոշորագույն գործարանները վերածվեցին պարարտանյութերի գործարանների, ժամանակակից լեզվով արտահայտելով այն առածը, թիւ սուսերը դարձրին գութան»: Հին քիմիկոսները լավ եյին գիտակցել հումուսի առաջանալու կարենությունը: Լիրիիսը լրիվ կերպով զնահատեց և վորքան մեզ հայտնի յէ, նույնիսկ վորոշ չափով գերազնահատեց որդանական նյութերի լրիվ ոքսիդացիայի (վոր նա անվանում եր երեմակաւում—դանդաղ այրում) և անորդանական նյութեր առաջանալու հշանակությունը:

Նորագույն ուսումնասիրությունները հաստատեցին որդանական նյութի քայքայման այս յերեք տիպի նշանակությունը հողի բերքատվության համար: Սրան ավելացավ նաև քայքայման մի չորրորդ տիպ, վորի նշանակությունը գեռ լրիվ չի պարզված:

Սա բույսերի համար թունավոր, միջանկալ և այլ նյութերի քայլայումն ե, մի պրոցես, վոր ուժեղ կերպով տեղի յե ունենում պարագան հողերում: Սակայն նորագույն աշխատանքները ցույց են տվել, վոր այս փոփոխությունները տարրեր տիպերի քայլայումներ չեն, այլ այն բարդ քայլայումների տարրեր փուլերն են, վորոնց յենթակա յենքույսի բաղկացուցիչ մասերը: Հողի մեջ տեղի ունեցող այս քայլայումների ընթացքի մանրումանությունները գեռ լրիվ հայտնի չեն. ինչ վոր հայտնի յե

ԲԵՐՔԱՅԻՆ ԱՅՈՒԹՅՈՒՆ




Նկ. 17. Հողերի մեջ բուսական մնացորդների քայլայման մինչեւ այժմ
մեզ հայտնի սեման:

Հարորատորական ուսումնասիրություններից՝ ներկայացված են նկ. 17 և 18-ում:

Բույսերի սպիտակուցային նյութերը վեր են ածվում ամիսնոթթուների, վորոնք իրենց հերթին տալիս են հիգրոքսի թթուներ և ամմոնիակ: Առաջինները վերջնականապես վեր են ածվում ածխաթթվի կամ կալցիում կարբոնատի, թեև միքանի դիմացկուն միություններ, ինչպես զինիդրոստեարինային թթուն, մնում են հողի մեջ. վերջինս հողից մեկուսացը եւ Շրայները չԱՄՆ-ի զյուղատնտեսական դեպարտամենտի հողագիտական բյուրոյում: Ամմոնիակն ոքսիդանում են նիտրիտների և նիտրատ-

ների: Վորքան հայտնի յե, հումուս չի առաջանաւմ*): Այստեղ վորոշված են մի շարք կարեւոր նյութեր. այսպես՝ արոմատիկ ամինոթթունների քայլայման ժամանակ կրուտակվում են ֆենոլային միություններ: Փորձերն ուղղակի ցույց են տվել, վոր սրանք բույսերի համար թունավոր են, սակայն նույնպես նկատված ե, վոր սրանք հողի մեջ չեն գտնվում, վորովհետեւ առաջանալու դեպքում՝ անմիջապես քայլայմում են: Շաքարը և ոսկան այնպիսի արագությամբ են քայլայմում, վոր միջանկալ նյութեր չեն տա-

Ապիտակուցնը



Նկ. 18. Բույսերի մնացորդների եղում քայլայման մինչեւ այժմ մեզ
հայտնի սեման:

իս, իսկ բույսերի բջիջների ստրուկտուրային մասերն ավելի դանդաղ են քայլայմում. սրանք ավելի հետաքրքրական են վորակես հումուսի աղբյուրներ, վոր, ըստ յերեսույթին, նշանաբեկի չափերով ավելանում ե արոմատիկ շարքի նյութերով լիգնին և

*.) Shn Gortner, R. A., Soil-Science, vol. 3, լիր. 1—8 (1917).

այլն: Թեև ճարպային ցելյուլոզից նույնպես առաջանում են նման ֆիզիկական հատկությամբ նյութեր, սակայն սրանք տարբեր քիմիական կազմություն ունեն: Հավանորեն փուրփուրալզենիդը կամ սրա գերիվատները հանդիսանում են վորպես ցելյուլզի քայլայման միջանկյալ նյութեր: Շրայներն ալզենիդային նյութեր հաճախ ե գտել հողերի մեջ:

Հումուսի կարեռությունն այն ե, վոր նա հողի ջրային հատկությունները լավացնող և նրա մշակությունը հեշտացնող զիսավոր որդանական նյութն ե:


Նիտրատների առաջանալն ակնհայտ կարեռություն ե ներկայացնում և կապված ե մի շարք հետաքրքրական և բարդ պրոցեսների հետ: Նիտրատները հեշտությամբ չքանում են հողից կամ բույսերի կողմից անմիջապես կլանվելու կամ ջրի հետ հեռացվելու և կամ քայլայման միջոցով, այնպես վոր նիտրատներ առաջանալը վորոշ չափով կարելի յե վորպես ազոտի կորուստ դիտել: Ազոտի վոչ մի ուրիշ միություն կորուստների յենթակա չե: Բույսերով չծածկված հողը յեղանակի ազդեցության տակ հեշտությամբ ազոտ ե կորցնում. Խողամստեղի լիզիմետրների միջով (9 դյույմ խորությամբ) 1870 թվից մինչև 1916-ը մեկ հեկտարից անցել ե 1124 ֆունտ ազոտ: 9 դյույմ խորությամբ հողի միջի սկզբնական 0.146 տոկոս ազոտն իջել ե 0.099 տոկոսի: Միացյալ Նահանգների և Կանադայի պրեֆերները նույնպես բավականին ազոտ են կորցրել՝ ավելի շատ, քան հողից վերցրել են բերքի հետ: Ազոտի ել ավելի մեծ կորուստներ են տեղի ունենում ուժեղ պարարտացրած և ինտենսիվ մշակության յենթակա ջերմոցների հողերից (նկ. 19): Սակայն բնության մեջ անմշակ թողած կամ ձմակալած հողերի ազոտը մնում է անփոփոխ, թեև մանրամասն ուսումնասիրությունները ցույց են տվել, վոր նրանց միջով անցնող դրենաժի ջուրն իր մեջ պարունակում է նիտրատներ: Իսկ յեթե այս պրոցեսները խոնավ յերկրներում տեղի յեն ունենում մշտապես, հապա ինչպես ե, վոր այդ հողերի մեջ մնում ե վորոշ քանակությամբ ազոտ:

Այս հարցը դրել եր քրանացի մեծ քիմիկոս Բերթելոն և ինքն պատասխանել: Հստ նրա գատողության, ազոտի կորուստը պետք է վերականգնվերի հաշիվ ողի գաղային ազոտի, և նա պլատումներ սկսեց ազոտ կապող գործոնները գտնելու համար: Ֆերմերները գիտեյին արդեն, վոր պատիճապոր բույսերն ընդունակ են մեծ չափերով բարձրացնելու հողի բերքատվությունը, և քիմի-

կուներն ել ցույց տվին, վոր նրանք հողը հարստացնում են առաջական գոտով:

Այսպիսով քիմիկուները հանգել են հետեւյալ յեղակացություններին:


ա. Բուսական մնացորդներն եյական նշանակություն ունեն հողի բերքատվության համար խոնավ կլիմայական պայմաններում, սակայն միայն այն դեպքում, յեթե նրանք քայլայվում են հողի մեջ:



Կորուստ
Նորոգում



Եքստենսիվ
մշակություն



Պրեբիաների
հողերը մշակ
կության
սկզբնական
տարիներին



Ինտենսիվ
մշակություն


Նկ. 19. Ազոտի կորուստները մշակության ընթացքում:

բ. Բերքատվության համար ամենակարևոր ռեակցիաները հետեւյալներն են.

1. Նիտրատների արտադրությունը,
2. Ազոտի ֆիկսացիան, մշակության հետևանքով առաջած կորուստները լրացնելու համար,
3. Հումուսի առաջանալը,
4. Բույսերի համար վասակար նյութերի քայքայումը, վորոնք կամ միջանկյալ նյութեր են, կամ առաջանում են այլ ճանապարհներով:


Այս փոփոխություններն առաջացնող մեխանիզմները յերկար ժամանակ անհայտ եյին և դարձել եյին մեծ վիճարանությունների առարկա:

Հարցի լուծումը յեկավ հանկարծակի և բոլորովին անսպասելի կողմից: Գիտության պատմության մեջ շատ ե պատաճել, յերբ վորեն զուտ տեխնիկական ուսումնասիրություն հանդիսացել ե վորպիս զուտ գիտական պրոբեմի լուծման բանալի և այս հանգամանքը միմիթարություն ե բերել այն գիտնականներին, վորոնք ստիպված են յեղել զբաղվել զուտ տեխնիկական և եմպիրիկ հարցերով: Պասայորը 1850-ական թվականներին խմբումներն ուսումնասիրելիս հայտնաբերեց, վոր միկրոռգանիզմները շատ կարևոր քիմիական փոփոխություններ, հատկապես ոքսիդացիաներ են առաջացնում. սակայն այս գյուտը վոչ վոք չկերպարեց հողերի նկատմամբ: 1887 թ. Փարիզի մունիցիալիտետը խնդրել եր Շլյողինգին և Մյունցին ուսումնասիրել կոյուղու ողտոտությունը մաքրելու միջոցները: Այս աշխատանքների ընթացքում նրանք գտան, վոր այստեղ տեղի յե ունենում նիտրիֆիկացիա: Յերբ կոյուղու հեղուկն անցնում ե կավիճի միջով, ոգի ներկայությամբ, սկզբում վոչ մի փոփոխություն տեղի չի ունենում, սակայն միքանի որից հետո սկսվում ե նիտրիֆիկացիան և աղտոտության մաքրումը: Խսկական հետազոտողն ոգուտ ե ստանում ամեն մի դատարկ բանից և Շլյողինգն ու Մյունցը նկատելով նիտրիֆիկացիայի այդ ուշ սկսվելը՝ յեղակացը ին, վոր գա կարող ե բիոլոգիական պրոցես լինել, վորովհետև յեթե գա ֆիզիկո-քիմիական լինել՝ պրոցեսը պետք ե անմիջապես սկսվել: Ապա նրանք քլորոֆորմի գոլորշիներ փչեցին կավիճի միջով և գտան, վոր այդպիսով պրոցեսը բոլորովին դադարում ե: Հետո նրանք հեռացրին քլորը լրմը և ավելացնելով հողի մի քէ եկացարակտ տեսան, վոր նէտրիֆիկացիան նորից ե սկսվում, հետեւ



ՊԱՏԿՐՈ 14. ԲՈՒՅՈՒՐԻ ԿՈՂՄՈՒՄ ԱՄԱՋՈՒՆԵՐԻ ԱԳՐԵՑՑՈՒՅԻՆԸ ԲՈՐԳԱՆՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ
անոր 3—հող 5—միայն մակարդակ, անոր 6—հող յիշելու մակարդակ, անոր 7—յիշելու մակարդակ, անոր 8—հող յիշելու մակարդակ, անոր 9—հող յիշելու մակարդակ:

վաղես նրանք ընդունեցին, վոր այս պլոցեսը կախված է կենդանի ֆերմենտից (Նկ. 20): Շլյոգինդը շարունակեց այս գյուղի ուսումնասիրությունը, չափելով հողի շնչառությունը (գաղափոխանակությունը) և այնտեղ նկատելի կենսական ակտիվություն գտավ: Իր Ecole d'application des manufactures de l'Etat-ում կարդացած հետաքրքրական դասախոսության մեջ՝




Նկ. 20. Շլյոգինդի յեկ Մյունիցի փորձը 1877. կոյուղու կեղտի նիտրիֆիկացիան:

Շլյոգինդը զարգացրեց այն միտքը, թե հողի մեջ որգանական նյութերի քայլայումը տեղի յեւ ունենում այնտեղ ապրող մանր որգանիզմների ազդեցության տակ և այդ քայլայումներից մեծ չափով կախված է հողի բերքատվությունը: Բակտերիոլոգները հետաքրքրեցին այս խնդրով և թեև այն ժամանակ այդ գիտությունը նոր եր առաջացել և նրա աշխատանքի տեխնիկան շատ կոպիտ եր, բայց և այնպես նրանց հաջողվեց հողի մեջ գտնել բակտերիաների միքանի տեսակներ, վորոնք ընդունակ են հողի մեջ քայլայելու ազոտ պարունակող նյութերը: Գտան նաև բակտերիաները հաշվելու կոպիտ մեթոդներ:

Բնականաբար մեծ ուշադրություն դարձրին հատկապես նիտրիֆիկացիայի բակտերիաների գտնելու վրա, սակայն յերկար տարիներ այդ աշխատանքները հաջողություն չունեցան*): Վորը ինդանն այդ պրոբլեմին նվիրեց տասը տարի՝ ամենայն խնամ-

*) 1878—1890. Մանկամասնությունները տես E. J. Russell and others, Microorganisms of soil (1923).

քով և համբերությամբ գործազրելով բոլոր ստանդարտ մեթոդները, բայց նույնպես առանց հաջողության: Հիսաթափությունը հասել եր իր գագաթնակետին, յերբ պրոբելմը լուծեց և բակտերիաներին մեկուսացրեց յերիտասարդ ոռուս բակտերիոլոգ վիճուգրադակին, վորն այդ ժամանակ աշխատում եր ֆարմակում: Նա դեն շարտեց ստանդարտ մեթոդները և ընդունված պրակտիկան ու համարձակուեն զարգացրեց իր սեփական մեթոդները: Սա ցույց է տալիս, թե վորքան վտանգավոր և գիտական աշխատանքի գերկազմակերպումը. պաշտոնական գիտնականները յերկար տարիներ աշխատեցին առանց վորունքի: Հայտնի գարձավ, վոր գաղային աղոտի ֆիկսացիան, վորի շնորհիվ վերականգնվում և հողի աղոտի պաշարը, նույնպես բակտերիաների գործն է: Հել-



Նկ. 21. Շյլագինքի յել Մյունի փոքրը, հողի շնչառությունը:
Նյուզինքի դասախոսությունից, (Երա վորդու վերաբարձրած):

Միգելը և Վիլֆարտը 1888 թ. գտան, վոր հացարույսերը (gramineae) ավաղային կուլտուրաներում առանց աղոտային սննդանյութի չեն աճում, իսկ նիտրատներ տալու դեպքում լավ են աճում և նիտրատների քանակին համապատասխան չափով ուժեղանում և նրանց աճեցողությունը: Պատիճագոր (Leguminosae) բույսերն այդ տեսակետից տարրերվում են հացարույսերից և առանց աղոտի յերբեմն աճում են, յերբեմն վոչ, իսկ նիտրատներ տալու դեպքում նրանց աճեցողությունը միշտ ել չի ուժեղանում: Սրանից նրանք հետևցրին, վոր պատիճագորների աղոտային սննդառությունն արմատապես տարրերվում ե մյուս բույսերից և նիտրատներ չպարունակող անոթների մեջ գործում ե մի ֆակտոր, վորը ստելայն յերբեմն բայակայում է: Հողի բակտերիոլոգիան ակտիվությունն այս խնդրում ակնհայտ եր, և Հելլիգելը ու Վիլֆարտն առանց տատանվելու, այդ հարցը լուսաբանելու համար դիմեցին բակտերիոլոգիական միջոցին: Նրանք դրին փորձերի մի այլ շարք, ամբողջ ավազը ստերիլիզացիայի յեն-

թարկեցին և միքանի անոթների մի քիչ պարարտ հողի եքըստրակտ ավելացնելով՝ նրանց մեջ սերմեր ցանեցին: Հետևանքները ցույց ե տալիս 17-րդ պատկերը: Մի շարք լաբորատորիաներ այնուհետև սկսեցին զբաղվել այս բակտերիաների հետազոտությամբ և այդ աշխատանքները շուտով հաջողությամբ պատվիցին:


Այժմ հայտնի յե, վոր հողի մեջ ապրող մի բակտերիա մըտնում և ազոտային սննդի պակասության հետևանքով թուլացած բույսերի արմատների մազմղուկների մեջ, այստեղ նա բազմանում է և արմատների վրա առաջացնում պալարիկներ և իր սննդունու են ենթրդիայի աղբյուրը վերցնում և բույսի նյութերից: Սա իսկական պարագիտ ե, վորը սակայն զարմանալի ընդունակություն ունի ողի աղոտը կապելու, կապված աղոտից նա արտադրում է մի շարք աղոտ պարունակող բարդ նյութեր, վորոնք այնուհետև անցնում են բույսերին:

Այստեղ հետաքրքրական ե նշել, վոր Հելլիգելի և Վիլֆարտի փորձերը կատարված են նաև լոողի, Զիլբերտի և Պոուլյի կողմից (վերջինս առաջին ամերիկացին եր, վոր աշխատել ե գյուղատնտեսական գիտությամբ Անգլիայում) դեռ 1860 թվականին, սակայն ամբողջ աշխատանքներն այնքան խնամքով են կատարվել, վոր բոլոր իրերը՝ առանց բացառության, ստերիլիզացիայի ելին յենթարկվել, առանց բակտերիաների ակտիվությունն ինկատի ունենալու: Պաստյորի աշխատանքներն այն ժամանակ կամ հայտնի չեյին Ռոդամստեղում, կամ նրանք հաշվի չեյին առնվում: Այս պայմաններում ցանած յերեքնուկը ըուլորովին չաճեց: Յեթե Ռոդամստեղի աշխատողները մի քիչ ավելի պակաս խնամքով աշխատեյին, և թույլ տային, վոր փոշու հետո ողից անոթների մեջ ընկներին նաև բակտերիաներ, հետևանքը գուցեայլ լիներ և հողի միկրոբիոլոգիայի պատմությունն ել տարրեր ընթացք ստանալ:

Բացի պալարաբակտերիաներից, գտնվեցին նաև աղոտ կապոյ յերկու այլ բակտերիաներ՝ Clostridium Վինոգրադսկու կողմից և Azotobacter Բայերինկի կողմից: Այս յերկուսն ել ընդունակ են ողի գաղային աղոտը կապելու և բարդ սպիտակուցային միություններ արտադրելու, յեթե նրանք աճում են առանց աղոտային սննդի և իրենց տրամադրության տակ ունեն ենթրդիայի մի վորեւ աղբյուր: Վորակես ենթրդիայի աղբյուրը նրանք գերազանցում են մաննիտը և հացենու, շաքարեղեգնի, նյախուրի և վո-

ըու ջրիմուների մեջ գտնվող շաքարը: Պրոցեսը վերին աստիճանի զարմանալի յի և վոչ մի քիմիկոս այդ չի կարող վերաբռնարել իր լաբորատորիայում: Սա հավանութեն քաղցի պայմանների ռեակցիա յի, վորովհետև յեթե միջավայրին քիչ քանակությամբ նիտրատներ ենք տալիս, ապա նրանց ազոտ կապելու ուժը թուլանում է, խակ նիտրատների շատության գեպքում նույն իսկ բոլորովին կանգ և առնում, այս գեպքում նույսիսկ նկատվում և աղոտի պակասում (նկ. 22):

Նիտրատների աղքեցությունը ազոտի ֆիկացիայի վրա
աղոտորակտերի միջոցով (Bonazzi)



Նկ. 22 Աղոտորակտերի ակտիվության նվազումը միջավայրին նիտրատներ պվելացնելու դեպքում (Bonazzi)

Այս արգասիքներից շատերը հետաքայում փոփոխության յինթարկվեցին և ընդհանուր դրույթները հիմնավորվեցին միմիայն 1880-ից մինչև 1890 թվականը, վորը հանդիսանում է հողագիտության պատմության ամենափայլուն տասնամյակը: Հետագա աշխատանքները ցույց տվին, վոր հողի բնակչությունն ավելի բազմազան է, ավելի բազմաթիվ և վերջ ի վերջո ավելի հրաշալի, քան սկզբում յենթադրվում եր: Սունկերը և ճառագայթառները բազմաթիվ են և հումուսի առաջացման գործում մեծ դեր են կատարում: Հագանորեն հողի որգանիզմների մի մասն

ընդունակ և ոքսիգացնելու որգանական նյութերի մի շարք պրոցուկաներ, վորոնք դեռ եներգիայի աղբյուր կարող են ծառայել և ուղիղ աղբյուր եյակների համար թունավոր են: Ամենանշանավորը հանդիսանում է գենուների քայքայումը, վորոնք, ինչպես տեսանք վերը, հողի մեջ առաջանում են նիտրատների հետ միաժամանակ և այնտեղ կուտակվելու դեպքում կարող են թունավորել բույսերին:

Որգանիզմների այլ խմբեր ևս գտնված և շատ կամ քիչ չափով ուսումնասիրված են, ինչպես՝ ջրիմուներ, նախակենդանիներ և նեմատոպներ (վորդեր): Ջրիմուները սնվում են նիտրատներով և բարձր բույսերին այս գործում մըցակից են հանդիսանում. հավանորեն նրանք ածխաջրատներ են արտադրում: Նախակենդանիներից ցիլիտների թիվը փոքր է, այլ յոթան երը սնվում են բակտերիաներով, ուստի սրանց թիվը պականցնում են: Ինչպես ցույց են տալիս պրոտոպլազմայի ուսումնասիրությունները՝ ֆլագելատներն՝ ֆլագելատներն ամենից շատ են, սակայն նրանք քիչ են ուսումնասիրված և նրանց դերը նյութերի քայքայման գործում հայտնի չեն: Լ. Ռ. Կիվելենդը*) հետաքրքրական դիտողություն ե արել վոր տերմիտները փայտը մարսում են միմիայն շնորհիվ նրանց ստամոքսի մեջ ապրող վորոշ ֆլագելատների և յեթե ֆլագելատները հանում են նրանց ստամոքսից և ապա կերակրում ստերիլ փայտով, նրանք կոտորվում են:

Հողի մեջ ապրող ազատ նեմատոպների թիվը նույնպես մեծ է, սակայն նրանց դերն ևս դեռ անհայտ է:

Որդամստեղի գաղտերի բնակչության մինչև այժմ հայտնի թիվը բերված ե 7-րդ տախտակում: Որգանիզմներն ըստ յերեվույթին ամենուրեք են: ամեն տեղ ել հողի ֆլորան և ֆաունան նույնն ե, միայն յերկու բացառությամբ՝ պալարաբակտերիաները պատահում են միայն այն բարձր բույսերի հետ, վորոնց մեջ նրանք ապրում են և մի շարք քենոլ քայքայող բակտերիաներ տարածված են միմիայն վորոշ աշխարհագրական շրջաններում, վորի պատճառները սակայն դեռ հայտնի չեն:

Այս բոլոր աշխատանքների հիմնական արգասիքն ե ցույց տալ, վոր բուսական մնացորդների հողի մեջ քայքայվելու ժամանակ տեղի ունեցող փոփոխությունների այն մեծ շարքը, վորն իր հերթին հողի բերքատվության գլխավոր պայմաններից

*) Biol. Bull. vol. 46 pp. 177—225 (1924):

մեկն և հանդիսանում՝ առաջանում ե բազմաթիվ միկրոբանիզմաների միջոցով, վորոնք ապաստարան ևն գտնում հողի մուլֆ ծովում:

Տախտ. 7. Հողի բնույթությունը, Ռոդամստեդ 1922.


(Զրիմուռների և սունկերի թիվը մոտավոր ե, ուստի ավելի փոքր արէնք ունի, քան բակտերիաների և նախակենդանիների թիվը):

	Միկրոբանիզմների թիվը 1 գրամմ հողում	Ապրող որդանիզմ. մոտավոր կշնոր 1 ակրում ֆունտերով		
	Ուժեղ զար- գացման դեպ- քում	Թույլ զար- գացման դեպ- քում	Ուժեղ զար- գացման դեպ- քում	Թույլ զար- գացման դեպ- քում
Բակտերիաներ	45,000,000	22,500,000	50	25
Նախակենդանիներ ցի- լիատներ	1,300	100		
Ամյորաներ	280,000	150,000	320	170
Ֆլագելլատներ	770,000	350,000	190	85
Զրիմուռներ (գոչ կա- պույտ-կանաչ)	[100,000]			
Սունկեր	(1,500,000)	(700,000)	1,700	800

Կապույտ-կանաչ ջրիմուռների, ճառագայթասունկերի, նեմատոդների և ու-
րից որդանիզմների թվերը հայտնի չեն:

Հողի բնակչության լնգնանուր բնույթի մասին առաջարկ-
ված են յերկու տեսակետ. ըստ առաջին, հնագույն տեսակետի՝
այդ բնակչությունը բաժանված է առանձին խմբերի, վորոնցից
յուրաքանչյուրն առաջ ե բերում քայլայման մի վորոշ մասը:
Ինչպես լավ կազմակերպված գործարանում, այստեղ ևս գոյու-
թյուն ունի աշխատանքի բաժանում և յուրաքանչյուր որդա-
նիզմ ունի աշխատանքի իր բաժինը: Որգանիզմները դիտվում են
վորպես բույսերի գլխավոր սնունդ մատակարարողներ: Մաքուր
կուլտուրաների մեթոդով նրանք կմեկուսացվեն հողից և կուտու-
նասիրվեն և այդպիսով կպարզվի նրանց կյանքը հողի մեջ: Այս
տեսակետի զարգացմանը շատ նպաստեցին մաքուր կուլտուրա-
ների մեթոդի հաջողությունները:

Ըստ յերկրորդ, նորագույն տեսակետի, այդ որդանիզմները
քայլայումն առաջացնում են սնունդ և եներգիա ստանալու հա-
մար և նրանք մի ռեակցիայով միայն չեն սահմանափակվում, այլ
կարող են տարբեր նյութեր քայլայել և մի անգամ մի փոփո-



ՊԱՏԿԵՐ 15. ՏԱՄՆՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՆԻՏՐԱՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ
Հողից յեկ բուսական հյութերից կույտ և պատրաստված յեկ դարա-
ված պահետում: Կույտը պահպան եր միշտ խօնավ, վրան գոմաղ-
րի հյութ յեկ այլն ավելացնելով: Վերցված և „Description d'une nit-
rière artificielle, Comte et Maiby“ տպագրված „Recueil de me-
moires et d'observations sur la formation et sur la fabrication
du salpêtre“. Paris, 1776.

խություն առաջացնել, մի այլ անդամ՝ ուրիշ, նայած թե վորպիսի հեշտությամբ են ստանում իրենց անհրաժեշտ սնունդը և ենելովին։ Հստ նոր տեսության միկրոռդանիզմներն այլևս չեն հանդիսանում վորպես միայն բույսերի սնունդ առաջացնողներ, այլ վորպես ինքնուրույն միավորներ, վորոնց գործունեյությունը յերբեմն նպաստում և բույսերի զարգացմանը, յերբեմն՝ վոչ։

Նախկին տեսությունը համապատասխանում եր տիեզերքի թելեոլոգիական հասկացողության, ըստ վորում յուրաքանչյուր իր մի մեծ սխեմայի մեջ ունի էր վերջնական նպատակը, մի հասկացողություն, վոր գերիշխում եր ամբողջ 18-րդ և մեծ մասմբ նաև 19-րդ դարում։ Նպատակ չունենալով վիճաբանել և այդ տեսակետը հերքել, յես ավելի նպատակահարմար եմ համարում բնության յերեսովթներն ուսումնասիրելիս նրանց մոտենալ կոմպլեքսային տեսակետից։

Որպանիզմների գերակշռող մասնագիտացման տեսակետը վերջերը վերաբարպեց վիճովապակին, մշակելով հողի ուսումնասիրության մի մեթոդ, վոր հարավորություն և տալիս դիտել միկրոորդանիզմներն անմիջապես հողի մեջ։ Այս մեթոդը հիմնվում է այն փաստի վրա, վոր վորոշ թթու ներկեր (որ. երիթրոզինը) ներկում և ապլոտ բջիջները, չներկելով սպորները և հողի մասն մասնիկները, վորոնք համարավորություն չելին տալիս անմիջապես հողի մեջ ուսումնասիրելու հողի բակտերիաները։

Կիրառելով այս մեթոդը գե հրի-կոնս Խորերտ ինստիտուտի չպարաբացրած հողերի վրա՝ նա գտավ այնտեղ քիչ տեսակների պատկանող փոքրաթիվ ակտիվ որդանիզմներ. յերեք կամ չորս տեսակի կոկկեր, միքանի ազոտորակտիսերներ, ճառագայթասունկերի մի քիչ միցելներ և մի պտտահական շաքարասունկ, բայց վոչ բացիկներ և վոչ ել բորբոսներ։ Սրանք եյին միայն կենդանի եյակները և նա այդ ամենն անվանեց հողի նորմալ ընակչություն։ Ապա նա հողին ավելացրեց տարբեր նյութեր և մի գիշեր զրեց 30° C-ի տակ—նա հատուկ նշանակություն և տալիս պահելու կարճ ժամանակամիջոցի վրա—վորպիսղի տեսնի, թե ֆլորան ի՞նչ փոփոխության և յենթարկվում։

Այնհետական հումուսն ավելացրեց որգանիզմների թիվը, սանկայն նոր տեսակներ չգարգացան, ֆլորան մնաց դարձյալ սահմանափակ, ինչպես առաջ եր։ Վորոշ ածխաջրատների և սպիտակուցների հավելում առաջ ե բերում բնակչության արագ փոփոխությունը յեկատավությունը յեկ հողի բերքատվությունը 5


խություն. պետոնի ավելացման դեսպում մի գիշերվա ընթացքում սկզբնական բնակչությունը չքանում է և նրա տեղը բռննում էն յերկու բացիներ՝ անհամար թվով: Ուղայի ավելացմանը հետեւմ ե թվի մի մեծ աճում, սակայն որդանիզմները պատկանում են միայն յերկու տեսակի՝ մի բացիլ և ճառագայթասունկերի միցեներ: Սակայն այս փոփոխությունը առաջ է շատ կարծ ժամանակ և հողի բնակչությունը նորից վեր և աճելում նորմալ տիպի: Այդ մեթոդի մասին վերջնական կարծիք հայտնելը դեռ վաղաժամ է, բայց պետք ե ասել, վոր նրա արդյունքները գուգաղիպում են Ռոդամստեղի հողին որդանական նյութեր տալու դեպում առաջացող փոփոխություններին:

Միանդամայն հավանական ե, վոր հողի բակտերիաների մի քանիսի ակտիվությունը սահմանափակ է. սա հատկապես վերաբերում ե այն որդանիզմներին, վորոնք իրենց սնունդը և եներգիան անորդանական աղբյուրներից են վերցնում, ինչպես ամմոնիակ ոքսիդացնողները, նիտրիտներ և նիտրատներ առաջացնողները, ծծումբ ոքսիդացնողները և այլն, — որդանիզմներ, վորոնք թվում ե, թե հարմարացված են յերկու զարգացման սկզբնական շրջաններին, յերբ բույսերը հողում դեռ որդանական մնացորդներ չեն առաջացրել: Սահանք իրոք կարող են հին, պրիմետիվ անորդանական պայմաններին հարմարված որդանիզմների այլամեռված սերունդները համարվել:

Սակայն ակնհայտնի յե, վոր մի շարք որդանիզմներ սնունդ և եներգիա ձեռք բերելու համար կարող են մի շարք փոփոխություններ առաջացնել: Սա վերջնականապես վորոշված և այնպիսի պարզ նյութերի նկատմամբ, ինչպես շաքարը, ուլան սպիտակուցները և այլն, վորոնք կարող են քայլայիվ բազմաթիվ որդանիզմների միջոցով: Սակայն նույնը չենք կարող ասել ավելի բարդ նյութերի նկատմամբ, ինչպես ցելուլոզան, լիգնինը, վորոնք քայլայիվում են միմիայն միքանի որդանիզմների միջոցով: Այսպես Դորիենդը ցույց տվեց, վոր տիպիկ ամմոնիակ արտադրողները՝ Bac. megatherium-ը և Bac. mycoides-ը սննդատում միջավայրում ամմոնիակ թողնում են միայն այն դեպում, յերբ նրանց եներգիա ձեռք բերելու համար կատարած ռեակցիան ավելի շատ ամմոնիակ և արտադրում, քան անհրաժեշտ և նրանց ազոտային սննդի կարիքը բավարարելու համար: Սա տեղի յե ունենում, յերբ քայլայիվում են մաքուր սպիտակուցները, իսկ յեթե միջավայրում միաժամանակ նաև շաքար և գտնվում,

դրունքները յերբեմն տարբեր են լինում և ամմոնիակ չի ստացվում: Շաքարի քանակի ավելանալը նրանց ավելի շատ եներգիա յե մատակարարում, վորի հետևանքով առաջ, և գալիս բակտերիաների ուժեղ բազմացում և ամմոնիակի ավելի մեծ չափերով առախմիկացիա, այնպես վոր ազատ ամմոնիակ բուրովին չի մնում: (Նկ. 23): Այս պայմաններում բակտերիաները հանդես են զալիս վոր թե վորպես ամմոնիակ արտադրողներ՝ այլ սպառողներ: Այս պրոցեսը տեղի յե ունենում նաև հողի մեջ: Հողին սպիտակուց-

Մաքուր կուլտուրաների միջոցով 5 դրամմ կաղենից առաջացած ամմոնիակ՝ քանակը 6 որ աճեցողությունից հետո, գեկստրոզի տարբեր քանակի ներկայությամբ:



Նկ. 23. Ավելացրած դեկտրոզի քանակը. C. J. T. Doryland, N. Dakota Agr. Exp. Sta. Bull. 116 (1916).

ներ տալն ավելացնում ե բակտերիաների քանակը, վորովհետեւ նրանք շատ եներգիա յեն մատակարարում բակտերիաներին, այդ առաջ և բերում նաև նիտրատների կուտակում, վորովհետեւ ավելի շատ ամմոնիակ և արտադրվում, քան սպառվում ե: Շաքարի հավելումը նույնպես ավելացնում ե բակտերիաների քանակը, սպիտակայն նիտրատների սպիտիլիացիան այնքան մեծ ե, վոր սպառվում ե հողի ամբողջ պաշարը: Սպիտակուցներից ավելի քիչ աղոտ պարունակող նյութերն առաջ են բերում միջանկյալ աղեղցություններ, ինչպես ավելի շատ ակտիվ նյութեր, իսկ յեթե միջավայրում միաժամանակ նաև շաքար և գտնվում,

Ուիլսոնի*) փորձերը, յերբ տարբեր քանակի ազոտ պարունակող բույսերի արմատները մտցվել են հողի մեջ և վերջնականապես քայլայվելու համար թողնվել յերեք ամիս: Այսուհետև վորոշվել են նիտրատների քանակը: Թեև բոլոր դեպքերում ել ազոտի քանակությունը նույնն է յեղել՝ նիտրատների քանակը խիստ տարբեր է, ամենից շատ նիտրատներ ստացվել են չոր արյան մտցնելու դեպքում, մինչդեռ յերբ մտցրած ազոտի քանակը $1,8^0$ օրից պակաս է յեղել՝ նույնիսկ տեղի յի ունեցել հողի նիտրատների պաշարի ասսիմիլիացիա (տախտ. 8): Այս յերեսույթը զուգագիշում է այն հանրածանոթ փաստին, վոր ազոտ չպարունակող որդանական նյութերը, ինչպես ծղոտը, լավ պարարտանյութեր չեն և կարող են բերքը փոքրացնել պակասեցնելով հողի նիտրատների պաշարը:

Տախտ. 8. Մտցրած նյութերի ազոտը յով հողի մեջ
արտադրած նիտրատները (Լայն, Բիգել յով Ուիլսոն)

Ն յ ո ւ թ ե թ ը	Ազոտը 0/0%	Մտցրած արմատների կշիռը գրամմաներով	Լվացման ջրի ազոտի քանակը միլիլիտով
Կոնտրոլ	—	—	946.6
Վալսակի արմատներ . . .	0.45	133.3	207.3
Տիմոֆեի խոտի արմատներ	0.62	96.8	398.4
Յեղիպտացրենի արմատ.	0.79	75.9	510.6
Յերենուկի արմատներ .	1.71	35.1	924.4
Չորացրած արյուն . . .	10.71	5.6	1751.1

(28 ֆունտ հողին ավելացրած է 0.6 գրամմ ազոտ և թողնված է յերեք ամիս):

Տախտ. 9. Աջլատին-ազոտի հարաբերությունը հողի մեջ:

Բրոդովկի ցորենի գաշտը. Առողամատեղ	9.6
Ամեն տարի գոմաղբով պարարտացրած 11.1	
Ուորուբնի հողերը	10.0
Այովա (Բրաուն և Ոնել)	12.13
Տեխաս (Ֆրազեր)	9.0
Սուդան	15.0

*) Jour. Am. Soc. Agronomy, pp. 457—467 (1923).


Նիտրատների պաշարը վերջանալուց հետո տեղի յին ունենում այլ փոփոխություններ: Ազոտ կապող բակտերիաներ՝ Azotobacter-ը և Clostridium-ը (վորոնք, ինչպես վերջն ասացինք, միայն նիտրատների բացակայության դեպքում են ազոտ կապում) այժմ կարող են գործել և ավելացնել կապված ազոտի պաշարն ամեն մի միավոր կապված ազոտի հանդեպ ոքսիգացնելով 20 միավոր ածխածին:

Այս յերկու գործողությունների հետևանքը լինում է ածխածինի և ազոտի սկզբնական հարաբերության պահպանումը, յերբ վերջինս խախտվում է շատ ազոտ ավելացնելու հետևանքով՝ ավելորդը վեր և ածխում նիտրատների և այսպիսով յենթակա յև գառնում կորստի, իսկ յեթե հարաբերությունը խախտվում է ազոտ չպարունակող որգանական նյութեր ավելացնելու հետևանքով՝ նիտրատներն ասսիմիլիացիայի յին յենթարկվում և վեր են ածխում սպիտակուցների և այդպիսով ազոտը պաշտպանում են կորստից: Համեմատաբար շատ ածխածնի ներկայության հետևանքով կարող է տեղի ունենալ նաև ազատ ազոտի ֆիկսացիա: Այսպիս ուրիշն, անկախ հողը մտցրած նյութի բնույթից, լինի զա ցելուլոզա, ուլա, շաքար, սպիտակուց, գոմաղբը՝ նրանք արագորեն այնպես են քայլայվում, վոր վերջում C/N հարաբերությունը մնում է նույնը, ինչ վոր սկզբում: Զարմանալիորեն շատ հաճախ, խոնավ կլիմայական պայմաններում այդ հարաբերությունը հավասար է 10-ի. այս հարաբերությունը նույնն է թե Բրոդրուկի 1839 թվից չպարարտացրած հողակտորում և թե նրա կողքի 1843 թվականից, տարեկան 12 տոնն գոմաղբով պարարտացրած հողամասում. այդ մոտավորապես միենանույն մեծության և նաև թե Ուորուբնի ավազում հողերում և թե Տեխասում և Այովայում: Միայն, յերբ պայմանները արմատապես փոփոխվում են, ինչպես Սուդան Սուդանում՝ տարեկան թյունը նկատելի յետ գառնում*) (տախտակ 9):

Մանից հետևում են մի շարք հետաքրքրական դրույթներ. առաջին, ամենահետաքրքր ականն այն է, վոր հողի ազոտի քանակը չի կարելի ավելացնել, առանց միաժամանակ նրա ածխածնի քանակը 10—12 անգամ ավելացնելու, նույնպես ըստ յերեսույթին անկարելի յետ պակսեցնել ազոտի քանակը, առանց ածխածնի քանակը 10—12 անգամ պակսեցնելու: Յերկրորդ հետաքրքրական դրույթների ականն այն է, վոր որգանական

(*) Այս հետաքրքրական յերեսույթի նկարագրությունը տես Waksman, S. A. Jour. Agr. Science, vol. 14, p. 555 (1924):

պարարտանյութերի եֆֆեկտը մեծ չափերով վորոշվում է նրանց մեջ գտնվող ազոտ չպարունակող նյութերով։ Յեթե նրանք մեծ քանակությամբ հետաքայլող, եներգիայով հարուստ նյութեր են պարունակում, վորոնք միկրոռդանիզմներին արագ բազմաւալու հնարավորություն են տալիս և նրանց կարիքները լրիվ բարարելու համար անհրաժեշտ քանակությամբ ազոտ չեն պարունակում, այնպես վոր միկրոռդանիզմներն ավելի շատ ամու-



Նկ. 24. Ծովական ազդեցությունը ցորենի բերքի վրա, թրոքրովի դաշտ. 12 տարիք 1868—1879 (Խողամասեր 8, 11, 12 յի 14 ավելի շատ ազոտ են ստացել ամենիում տուլֆատի ձեվով, բայց ամերաժեշտ եր բույսերին, մյուսներ՝ պակա):

նիսկ են կլանում, քան թե արտադրում են, —այդպիսի պարարտանյութն եֆֆեկտ չի տա, վորովհետեւ նա կպակսեցնի բույսերն արագադրվելիք նիտրատների քանակը: Խոկ յեթե նա անբավարար քանակով ե պարունակում անազոտ նյութեր՝ միկրոռդանիզմներն ստիպած կլինեն քայլայել ազոտ պարունակող նյութերը և ավելի շատ ամենիսկ կարտադրեն, քան նրանց հարկա-

վոր ե. այս գեպերում որդանական պարարտանյութերն եֆֆեկտ կտան: Լավ քայլայված ծղոտն եֆֆեկտավոր, խոկ չքայլայվածն անեֆֆեկտ պարարտանյութերի որինակ կարող ե ծառայել: Վերջինս միայն այն գեպերում եֆֆեկտավական կտա, յեթե հողն ազոտով ապահովվի այլ պարարտանյութերի միջոցով (Նկ. 24):

Յերրորդ հետևությունը գործնական մեծ նշանակություն ունի: Հողի այդ հավասարակշռությունը խախտող պարարտանյութերի քայլայումը կարող ե այնպես արագ ընթանալ, վոր բույսերը չկարողանան ոգտագործել առաջացած ամերող նիտրատը, վորի հետևանքով կարող ե տեղի ունենալ ազոտի դգալի կորուստներ: Յերբ «կայուն հավասարակշռություն» ե առաջանում, այն ժամանակ քայլայումները նկատելիորեն դանդաղում են և նիտրատների առաջանալու արագությունը չի անցնում բույսերի կլանելու (ասսիմիլացիայի) արագությունից, հետեւ պես կորուստներն ավելի պակաս են լինում: Այսպիսո՞ւ թրողովի չպարարտացրած հողակտորներից ազոտի կորուստ տեղի չի ունենում, գոմաղբով պարարտացրածից կորչում ե յուրաքանչյուր ակրից տարեկան 108 ֆունտ, չհաշված ազոտի այն քանակը, վոր հողից վերցնում ե բերքը (տախտ. 10):

Դանդաղ քայլայման «կայուն հավասարակշռություն» ըստ յերեսութին ազգով տարբեր ուժերի միշտուն հավասարակշռություն ե: Զպարարտացրած հողերից նիտրատների գանդաղ, անընդհատ և ըստ յերեսութին անվերջ հեռացումը կարելի յե հասկանալ, յեթե ընդունենք, վոր առաջացած նիտրատները նորից յուրացվում են միկրոռդանիզմների կողմից և այդպիսով լվացումից պաշտպանվում: Սրանց մենակուց հետո ազոտը նորից և փոփոխության յենթարկվում: Այսպիսով այս պրոցեսը հանդիսանում և մարող մեծությունների մի անվերջ շարք: Տեղուկան ասսիմիլացիայի համար անհրաժեշտ հներգիան կարող են պալ մեծ քանակությամբ հողի մեջ առաջնական ջրիմունքը: Ինչ ել վոր լինի զրա պատճառը՝ նիտրատների հեռացումը հողից յերբեք չի վերջանում, ինչպիսի գիշատիչ մշակության ել նրան յենթարկենք: Հիսուն և չորս տարի վոչ մի պարարտացում չստացած և վոչ մի բույս չցանած Ռոգամատեղի զրենաժավոր հողերում նիտրիֆիկացիայի պրոցեսները տեղի յեն ունենում և նրանք մինչև այժմ ել ընդունակ են տարեկան 10 բուշել ցորենի բերք արտադրելու, իլրինում ենք՝ այն դաշտերը, վորոնք 1839 թվականից մինչև այժմ վոչ մի պարարտացում չեն ստացել: Թեև հողերի հյուծվածու-

թյունը, վորքան այդ աղոտին, և վերաբերում, տեղի յէ ունենում շատ դանդաղ, սակայն այդ հողերը կարող են այնպիսի զրության հասնել, վոր նրանց մշակությունն անոգուտ կլինի:

Տախտ. 10. Բրոդրուկի ցորենի դաշտը.

Աղոտի բալանսի թերթիկ, 1865—1914, փունտ չափից,
9 դրում խորությամբ:

	Գոմաղը տարեկան	Զարարաց- րած 1839 թ.	Լրիվ արհես- տական պա- րատացում
Հողի աղոտը 1914 թ.	6278	2454	3132
1865 թ.	4260	2760	3054
Հողի աղոտի հայելում կամ կորուսու	2018 (հավ.)	313 (կորուսու)	78 (հավ.)
Մացված և պարարտացման, սերմերի և անձրեների միջոցով	9800	343	4557
Վերցված և բերքի միջոցով	2466	704	2154
Մնացել և հողի մեջ	2018—4484	313—391	78—2232
Ծախքի չվորոշված աղբու բներ	5316	48	2325
Ֆունտ տարեկան	108 (կորուսու)	1 (հավելում)	47.5 (կորուսու)

Վերը բերած դատողությունները ցույց են տալիս, վոր եներգիա պարունակող նյութերի փոխարարելությունները վորոշում են հողի մեջ միկրոռդանիզմների միջոցով կատարվող ունակցիան սերի բնույթը. նրանց կարևորությունը հետզհետե կարառվի հողագետների կողմից: Հողի բնակչության եներգիայի աղբյուր, ինչպես և սնունդ են հանդիսանում բույսերի արտադրած որդանական նյութերը: Ընդհակառակ՝ հողի բնակչության միջոցով տեղի ունեցող քայլայումները կարևոր են բույսերին սննդանութերով ապահովելու համար, միաժամանակ բարելավում են հողի ջուր պահելու ընդունակությունը և հեշտացնում են նրա մշակությունը, հատկություններ, վորոնք յեթե վոչ եյական, գոնս շատ ոգակար են: Ուրեմն այս հատկությունները ևս առաջանում են հողի արտադրանքից և յիթե սրանք մեծ չափերով կուտակվեն, կարող են վնասակար աղղեցություն անել բույսի կյանքի վրա: Հետևապես խոնավ կլիմայական պայմաններում հողի միկրոռդանիզմները մենք պետք եղիտենք բույսերի համար նույնքան անհրաժեշտ, վորքան կանաչ բույսերը միկրոռդանիզմների համար: Այսպիսով

ամբողջ պրոցեսը հանդիսանում եւ վորպես կյանքի մի մեծ շրջան: Մի կողմից կանաչ բույսերը վերցնելով ողից ածխաթթու և հողից հասարակ անորդանական աղեր՝ վերափոխում են բարդ, եներգիայով հարուստ որդանական նյութերի: այս պրոցեսի համար անհրաժեշտ եներգիան նրանք վերցնում են արեկի լույսից, սպասագրելով իրենց քլորոֆիլի ապարատը վորպես վերափոխիչ (յեթե ի նկատի ունենանք քլորոպլաստների գործող մակերեսը՝ նրանք այդ վերափոխությունը կատարում են մեծ չափերով): Մյուս կողմից հողի միկրոռդանիզմները քայլայում են բարդ որդանական նյութերն անհրաժեշտ եներգիա և սնունդ ստանալու համար և այդ գործն այնպիս անթերի յեն կատարում,


Տախտ. 11. Եներգիայի տարեկան հափոխորյացները հողի մեջ. Բրոդրուկ.

Միլիոն կելոգրամմ կալորիա տարեկան ակրում.

	Պարարտաց- րած	Զարարաց- րած
Ավելացրած և պարարտացմամբ .	14	...
Ավելացրած և խոզանի միջոցով .	2	0.3
Հնդամենն ավելացրած և .	16	0.3
Վերցրած և հողից	0.5—1
Թողնված և հողի մեջ	0.5—1	...
Անհայտանում և հողից տարեկան միլիոն կելոգրամմ կալորիա .	15	1
Որական կալորիա	41000	2700
Համապատասխանում և մարդկանց ուժի	12 մարդու	3/4 մարդու
Արտադրած սնունդը բավական ե	2 մարդու	1/2 մարդու


վոր ստացվում են եներգիայից զուրկ պարզ նյութեր, վորոնց բույսերը նորից ոգտագործում են վորպես սնունդ: Ծողամստեղի յերկու դաշտերի եներգիայի փոփոխությունների քանակը տըրված ե № 11 տախտակում: Գոմաղը լավ պարարտացըրած հողը տարեկան ծախսում ե 15 միլիոն կելոգրամմ կալորիա եներգիա, իսկ աղքատ և չպարարտացըրած հողը՝ 1 միլիոն կալորիա: Այս քանակն ավելի մեծ ե, քան մարդկանց համար արտադրած սննդի քանակը, այնպես վոր թվում ե, թե մեր բույսը ագրիկուլտուր ձեռնարկումներից հողի միկրոռդանիզմներն ավելի մեծ եֆեկտ են ստանում, քան թե մենք՝ ինքներս:

Կյանքի բնորոշ հատկությունը նրա փոփոխականությունն է, և հողի որգանիզմների վերջին ուսումնասիրությունները ցույց են տվել փոփոխությունների մի ակնառու հետևողականություն, վորի պայմանները և նշանակությունը բույսերի համար դեռևս բոլորովին անհայտ է: Որգանիզմներն ուսումնասիրված են Ռոդամստեղում բնական հողի մեջ, մեթոդը հիմնված է որգանիզմների թվի և նիտրատների արտադրության հաճախակի և համաչափական հաշվառման վրա: Մեթոդիկայի տեխնիկան մշակվել է բազմակտերիաների և դիմաստիգայորաների թիվը Բանկֆելդի հողում:



Նկ. 25. Հողի որգանիզմների թվի սեզոնային փոփոխությունները.
(Cutler, Crump and Sandon)

մաթիվ նախնական հետազոտությունների միջոցով: Շնորհիվ այն համագամանքի, վոր Ռոդամստեղի հողերը յերկար ժամանակ մշակվում են, ցույց են տալիս ավելի քիչ փոփոխություններ, քան այլ հողեր, և ընդունված վիճակագրական մեթոդի՝ հաշվառման հավանական սխալները հեշտությամբ վերացվում են: Աշխատանքները կատարվել են, ինչպես այդ ընդունված և Ռոդամստեղում, մի խումբ աշխատակիցների կողմից, ուստի և հնարավոր եր տարեկան 366 միկրորդանիզմների ամենորյա դիտումներ կա-



Նկ. 26. Հողի ողի CO_2 -ի տոկոսները ցույց տվող կորագիծ. Բրոդբոկի չպարարտացրած հողամաս, հողի միջին ջերմատիեզաների տակ:


տարեկ, իսկ վորոշ գեպքերում նաև 30 կամ 40 բակտերիաների թվի և նիտրատների համար՝ ամեն 2 ժամը մի անգամ: Այս դիտումներն այնպես են կատարվել, վոր հնարավոր լինի պարզե-

նրանց վիճակագրական արժեքը: Հետևանքները ցույց են տվել, վոր բակտերիաների թիվը մնայուն չե, այլ անընդհատ փոփոխությունների յե յենթարկվում:

Նկատվում են տարվա յեղանակներին համապատասխանող փոփոխություններ՝ բակտերիաների թվի և ակտիվության աճում՝ գարնանը և աշնանը և անկում՝ ամառը և ձմեռը, փոփոխությունների մի տիպ, վոր նկատվում է նաև լճերի և ծովերի պլանկտոնի վերաբերմամբ (նկ. 25 և 26), գեռաւ հայտնի չե, թե թվերի աճումն որգանիզմների բոլոր ձևերին և վերաբերում, թե միայն միքանի տեսակների:


Բացի այդ, հետաքրքրական են նաև որական տատանումները, ըստ վորում բակտերիաների քանակն ավելանում է, յերբ ամյոբաները պակասում են և ընդհակառակը (նկ. 27). սա կախված է նրանից, վոր ամյոբաները սնվում են բակտերիաներով*):

Բակտերիաների և պրոտոզոաների թիվը. Բուդքոնկ



Նկ. 27. Որական փոփոխությունները (Cutler, Crump and Sandon)

*). Այդ վորոշվել ե ստերիլ հողի մեջ բակտերիաներ և ամյոբաներ մացնելով: Բակտերիաների թիվը խիստ պակասել ե. նրանց քչության գեպքում տատանումները նույն են, ինչ վոր նորմալ հողի մեջ: Առանց ամյոբաների նրանց թիվը բարձր եր և անփոփոխ. (Cutler, D. W. Ann. Applied Biology, vol. 10, pp. 137—141, 1923). Որական տատանութեանը վորոշել են Կուտլերը, Կոռումպը և Սանդոնը (Phil. Trans. vol. 211 pp. 317—350, 1922).




ՊԱՏԿԵՐ 16. ԶԵԼԼՐԻԳԵԼԻ ՅԵՎ ՎԻԼՖԱՐՏԻ ՓՈՐՁԸ ՎՈԼՈՈՒ ՅԵՏ Բոլորն ել անել են ստերիլ ավազում, սակայն մեջ ընդ մեջ տեղափոխած չորս անորմերը, ուր բույսերն ուժեղ անել են, սատացի են պարտեզի հողի եխտրական: (Zeitschr. des Vereins f. d. Rübenzucker-Industrie, 1888).

Սակայն ամյորաների թվի տատանումները չի կարելի բացատրել սրանք ջերմության, խոնավության և անձրևների հետ անմիջական կազմ չունեն: Նախակենդանիներից մեկը՝ Oicomomas-ը ցույց է տալիս մի կատարյալ պարբերականություն, վորը նույնպես չի կարելի բացատրել:

Ցերկմամյա դիտումները նույնպես նկատելի տատանումներ են ցույց տալիս, բայց այստեղ վորոշված են միայն բակտերիաները և նիտրատները (նկ. 28 և 29). Նիտրատները փոփոխվում

Բակտերիաների թվի փոփոխությունները ըստ ժամերի հողում 26.6.24




Նկ. 28.

են որեցոր և նույնիսկ ամեն ժամ (թեև սա վերջնականապես չի հաստատված) նաև անձրևների և բուսականության բացակայության դեպքում: Հստ յերկույթին նիտրատների արտադրությունը և կլանումը տեղի յեւ ունենում միաժամանակ և յերբեմն մեկն է դերակառում, յերբեմն՝ մյուսը:

Հստ յերկույթին բույսերը հարմարվել են այս անընդհատ փոփոխություններին և նրանց սննդառությունը բնության մեջ նույնպես տատանվող յերկույթ է:

Նիտրատների տատանումները կախված են հողերի հիմքերի՝ կալցիումի և գուցե մյուսների փոփոխություններից և իրենց

հերթին շարունակ ազդում են հողի տարբեր լուծույթների վրա: Թե ինչ նշանակություն ունեն այս տատանումները և փոփոխությունները՝ գեռաս հայտնի չեն:



Նկ. 29. Հավասար հողակտորից վերցրած հողի նիտրատների փոփոխությունները (անգրելից ազատ որ. Pages and Thornton).

Հավասար հողակտորից վերցրած հողի նիտրատների փոփոխությունները (անգրելից ազատ որ. Pages and Thornton).

ԳԼՈՒԽ ԶՈՐՈՐՈԴ

ՀՈՂԻ ՄԻԿՐՈՈՐԴԱՆԻԶՄՆԵՐԸ

ԿԱՐԵԼԻ ՅԵ ԱՐԴՅՈՒՔ ԱԶԴԵԼ ՆՐԱՆՑ ՎՐԱ ՅԵՎ
ՈԳՏԱԳՈՐԾԵԼ ՆՐԱՆՑ

Յերբ պարզվեց միկրոօրդանիզմների գերը հողի բերքատվության համար՝ փորձեր արվեցին ղեկավարելու նրանց աշխատանքը: Այս փորձերից վոչ մեկն ել գործնական կիրառում չունեցավ և չնայած դրան, թեև աշխատանքը գեռ նոր և սկսվել այդ ասպարիգում մեծ առաջադիմություն ունենք:

Այս ուղղությամբ գործադրվել են յերկք հիմնական մոթողներ:

1. Հատուկ նպատակների համար անհրաժեշտ միկրոօրդանիզմներ հողը մտցնելը,
2. Հողի պայմանների այնպիսի փոփոխություններ առաջացնել, վորը նպաստի վորոշ միկրոօրդանիզմների գարգացմանը, կամ արգելք հանդիսանա դրան,
3. Վնասակար միկրոօրդանիզմներին վոչնչացնել.

Ամենահին փորձերը կատարվել են առաջին ուղղությամբ, գլխավորապես պատիճավորների մշակության առնչությամբ: 1888 թվականի Հելտիգելի և Վելֆարդի համոզեցուցիչ փորձերը հավանական դարձրին պալարաբակտիբիաների գործածությունն այնպիսի հողերում, ուր պատիճավորները չափ չեն աճում և 1896 թ. նորքին և Հելտները մի շարք փորձեր դրին Մյունիենի մոտի ավազային հողերում: Այս փորձերը հրաշալի հաջողություն ունեցան և աղքատ ավազային հողերը վարակելուց հետո սկսեցին յերեքնուկի, վիկի և այլ պատիճավորների մեծ բերք տալ: Այս մեթոդն ուրիշ տեղեր ել կիրառվեց, սակայն շատ սահմանափակ հաջողությամբ: Անգլիայում նա այնքան քիչ սգուտ բերեց, վոր գյուղատնտեսական պրակտիկայում առանձնապես գործածության մեջ չմտավ: Սակայն այս մեթոդի առողջ սկզբունքներն ընդունվեցին ամենքի կողմից, իսկ անհաջողությունները վերագրեցին անդական պայմաններին անծանոթ լինելուն, ուստի,


չնայած այդ անհաջողություններին, լարուատորական աշխատանքներն այդ ուղղությամբ շարունակվեցին:

Անգլիայում հատկապես յերեքնուրկի և վոլոռի փորձերի անհաջողության պայմաններից մեկն ել այն եր, վոր այդ որպանիզմները հողում արդեն կային, սակայն մի շարք հողային պայմաններ խոչընդուռ ելին հանդիսանում այդ բույսերի զարգացմանը, այնպես վոր վարակման միջոցով բակտերիաների թիվն ավելացնելն անողուտ եր: Փորձեր արվեցին այնպիսի բակտերիաներ մեկուսացնելու, վորոնք ավելի ակտիվ լինեն, քան հողի մեջ ապրողները, հենվելով Պաստյորի կենդանիների հիվանդություններ առաջացնող միկրոօրգանիզմների վիրուենության փոփոխության մասին կատարած կլասիկ աշխատանքների վրա: Մինչև այժմ թեև դեռ հաջողություն չունենք, սակայն վերջերս արդեն ցուցմունքներ կան, վոր մի պատիճակորի մշակությունն ուժիգացնում ե հետայրի վարակումը պալարաբակտերիայով, այսպես՝ առվույտի վարակումն ուժեղանում ե այն դեպքում, յերբ դրանից առաջ ցանում են *Melilotus alba*, և ապա վարում ուժոցնում հողի մեջ:

Բակտերիաներով հող վարակելն ավելի մեծ հաջողություն ե ունեցել այն դեպքում, յերբ տվյալ շրջանում վորեե պատիճակուանացին անգամ են մշակում: Միկրոօրգանիզմները հատուկ են այս կամ այն պատիճակորի կամ նրանց խմբերի համար: Հողի միկրոօրգանիզմների մեծ մասը տարածված են ամենուրեք, իսկ պալարաբակտերիաները բացառություն են կազմում. նրանք պատահում են միմիայն վորոշ բույսերի հետ միասին: Հետազոտողներն առայժմ թողել են այն բույսերի վարակման խնդիրը, վորցանվում ե տվյալ յերկրում, և ավելի ուշադրություն են դարձնում նոր մուծվող պատիճակուների վրա, մի խնդիր, վոր ավելի մեծ կարևորություն ունի: Վերջին տարիների գյուղատնտեսական պայմաններն առաջադրեցին առվույտի խնդիրը, մի կուլտուրա, վոր արդեն վազուց հայտնի յեւ նա Փոքր Ասիայում մշակում եր հին հույների կողմից, իսպանիայում՝ մավրերի կողմից, իսկ Ֆրանսիայում և Անգլիայում դրա մշակությունն արդեն միքանի հայրուրամյակի պատմություն ունի, սակայն նայստեղ այնքան ել լայն չափերով չի տարածված: Բակտերիուրգները մեծ ուշադրություն դարձրին այս բույսի վրա և վարակման հաջող արդյունքներ ստացան, և այս ուղղությամբ աշխատանքները դեռ շարունակվում են: Այս պրոցեսի պատճու-

Առանց շաքարի

շաքարով



ՊԱՏԿԵՐ 17. ԿՈԽԻ ՓՈՐՁԸ:

Ազոտի ֆիկսացիայի ուժեղացումը հողամ, շաքար ավելացնելու հետևանքով
(Journ. f. Landw. vol. 55, pp. 355—416, 1907):

թյունը դժվարություններն աստիճանաբար հաղթահարելու ճիգերի մի շարան ե, ճիգեր, վորոնք վերջի վերջո հաղթանակով պսակվեցին: Առաջին դժվարությունը՝ որգանիզմների ակտիվության պահպանելն ե: Տնտեսություններն ուղարկվող կուլտուրաները տեղ եյին հասնում մեծ մասամբ կամ արդեն մեռած, կամ մինչև հողը մտցնելը մեռնում եյին: Այս պլրոբեմն ուսումնասիրվել ե Սկանդինավիայում և այնուղի ել հաջողությամբ լուծվել: Շվեդական բակտերիոլոգ Բարթելը դաել ե, վոր հողի բակտերիաները ստերիլ հողում ավելի լավ են աճում, քան սովորաբար գործածվող ագարի միջավայրում նա իր կուլտուրաները պահում եր ստերիլ հողում և ագարի վրա փոխազդում միայն ուղարկելուց առաջ. տնտեսություն հասնելիս այս կուլտուրաներն ավելի ակտիվ են լինում, քան նախկինները: Նրանց խառնում եյին ջրի հետ և զրանով թրջում սերմերը: Բազմաթիվ հաջողությունների հետ միատեղ ստացվել են նաև բավական շատ անհաջողություններ, վորոնց պատճառն այն ե, վոր մինչև սերմերի ծելը բակտերիաները մեռնում են: Այս դժվարությունները հաղթահարեց Հարուդ Քրիստենզենը Կոպենհագենից, վորը սերմերը վարակելու համար գործածվող ջրի փոխարեն կաթ վերցրեց, այսինքն՝ սուածարկեց տնտեսության մեջ ստացվող կուլտուրան խառնել կաթի հետ և ապա զրանով սերմերը թրջել: Նույնը կատարում եյին Հիլտները և Շայորմերը 1904 թ., սակայն այդ լայն գործազրություն չեր գտել:

Միաժամանակ Հյուշինսոնը և Բյուլեյն ուսումնասիրեցին այս որգանիզմների կենսական ցիկլերը և գտան, վոր այդ ցիկլը շատ բարդ ե և ընդգրկում է իր մեջ շարժուն և անշարժ ձևեր. միմիայն շարժուն ձևերը կարող են վարակել բույսերի արմատները: Ֆունֆատները կարող են անշարժ ձևերը վեր ածել շարժվողների: Թողրնունը մողամստեղում ձևափոխեց վերը հիշած մեթոդը, կաթին ավելացնելով ֆոսֆուտներ. վերջինս, կուլտուրաները հողը մտցնելուց հետո, արագացնում է բակտերիաների շարժուն ձևեր սուածարկելու: Գործածվող մեթոդի հիմունքները հետևյալն են:

1. Կուլտուրաները պահել ստերիլ հողի մեջ նրանց կենսունակությունը պահպանելու համար և ագարի վրա տեղափոխել կարճ ժամանակով՝ միմիայն տնտեսություն հասցնելու նպատակով:

2. Վորպես վարակման հեղուկ գործ ածել կաթը:

3. Կաթին գոռքատներ ավելացնել, անշարժ ձևից շարժունակին անցնելու արագացնելու համար:

Վարակումները լայն չափերով տարածվեցին Դանիայում, վորտեղ հաջողությամբ ընդարձակվեց առվույտի մշակությունը, մի կուլտուրա, վոր գանիստիցիների համար խիստ կարևոր է: Դանիան վորպիս խոզի միս և կաթնամթերքներ արտադրող կարևոր յերկիր մեծ կարիք ունի բերքառատ և միաժամանակ աննդատու նյութերով հարուստ կերպույտների: Առվույտն այդ նպատակի համար շատ հարմար բույս է: Առվույտը Դանիայի համար նոր բույս չեր, նա մուծված եր այնտեղ գեռ տասնեռութերորդ դարում, սակայն առանց առանձին հաջողությունների, այդ պատճառով ել նա այնտեղ տասնեւններորդ դարում լայն տարածում չստացավ: Հետագա փորձերը ցույց տվին, վոր նա հաջողություն կունենա, յեթե անհրաժեշտ բակտերիաներ մտցվեն հողի մեջ: Սակայն պիրուեմի լուծումն այնքան ել հասարակ չեր, և պարզվեց, վոր միմիայն վարակումը, վորպիս այդպիսին, բերքը չի առվեցնում: Վորոշ հողեր թթու յեն, ուստի առվույտի հաջող մշակության համար անհրաժեշտ ե հողի թթվությունը չեղոքացնել:

Վորովհետեւ վոչ մի փերմեր չի ցանկանա բանեցնել ավելի կեր, քան այդ անհրաժեշտ ե, ուստի ցանկալի յեր մի մեթոդ մշակել, վորն անալիտիկներին հնարավորություն կտար ճշտությամբ վորոշելու անհրաժեշտ կրի քանակը: Քրիստենզենը մշակեց հողի թթվությունը վորոշելու մի բիոլոգիական մեթոդ, վոր հնարավոր և դարձնում փերմերներին ցույց տալու կրի անհրաժեշտ քանակը: Կրի գործածության հետեւանքները մեծ հաջողություն ունեցան: Փորձնական կայանների գիտահետազոտական աշխատանքները տևեցին 1905-ից մինչև 1910 թ.: 1923 թվին 25000-ից ավելի գանիացի փերմերներ ոգտագործում եյին վարակման մեթոդը՝ ստանալով բերքի 20—500% հավելում, համեմատած չվարակվածի հետ: Վարակման մեթոդի ոգտագործում մի ուրիշ որինակ ել հանդիսանում է որիսիդեաների մշակությունը: Այս բույսն աճում է հաջող, յեթե նա վարակված է իրեն հատուկ միկրոբայով: Որիսիդեայի հաջող մշակության մեթոդներից մեկն ել այդ սունկը հողի մեջ մտցնելը և զարգացնելն ե:

Յերկու գեպքում ել, թե պատիճաճակորների և թե որիսիդեաների, միկրոբայնիզմները հողն են մտցվում մաքուր կուլտուրաների ձևով: Խառն միկրոբայնիզմներով վարակելը տեղի յե ունենում միմիայն վորոշ գեպքերում: Հոլլանդիայում և Բելգիա-

յում նոր մշակվող հողերը սովորաբար պարաբռացվում են գումազրի և հողի խառնություն պատրաստած կոմպոստով: Մը ճշշգրիտ պարաբռանումը բացակայում է, սակայն լավ հետևանքների պարզ բացարությունն այն է, վոր սըա հետևանքով արագությամբ ակախիվանում է հողի նորմալ ֆլորան:

Հողի լնակչության աշխատանքը կանոնավորելու մի յերկրորդ մեթոդն ել այն է, վոր փոփոխելով հողի պայմանները, մենք այդ պայմանները նպաստավոր կամ անսպաստ ենք զարձնում առանձին միկրոբայնիզմների կամ նրանց վորոշ խմբերի համար և այդպիսով նպաստում ենք նրանց զարգացմանը. կամ ընդհակառակը: Վորպիս որինակ կարող է ծառայել հողի ունակցիան կարող է կիր ավելացնելով հիմքային դասնալ, կամ թթու հողի մեջ մտցնելով ծառայմբ, շիր, յերկաթարշասպ և այլ աղեր: Ծեակցիայի տարբեր սատինաները չափում են ջրածին յոների կոնցենտրացիայի վորոշմամբ և արտահայտվում են ըստ Զյորենսենի րH-ով: Ծեակցիայի վորոշ աստիճաններ նպաստավոր են վորոշ որգանիզմների համար և անսպաստ՝ ուրիշների համար: Սովորական պատիճաճակորների բակտերիաները հաջողությամբ են զարգանում, յեթե թթվությունը րH=6-ից պակաս չե: Հետեւապես, յեթե թթվությունը սրանից ավելի յե՝ այդ բակտերիաների զարգացումը կանգ և առնում, իսկ յեթե ունակցիան մոտենում և չեղոքին, այն ժամանակ նրանց զարգացումն ուժեղանում է:


Մի ուրիշ որինակ հանդիսանում է կարտոֆիլի սովորական քոսը (spongospora subterranea): Այս սունկը չի կարողանում զարգանալ, յեթե հողի թթվությունը րH 5,2-ից բարձր է: Մը հետեւանքով ել Զ. Գ. Լիպմանը և նրա աշխատակիցները հաջողությամբ կռվում են այս հիվանդության գեմ, հողի թթվությունը պահելով այս սատիճանի վրա: Կարտոֆիլը՝ ինքն ավելի զիմացկուն է և կարող է ավելի թթու հողերում աճել, իսկ ախտածին սունկը՝ վոչ:

Միկրոբայնիզմների վրա նույնպիս ազդում են ջերմության տատանումները և այս հանգամանքն ոգտագործվում է ջերմոցներում հիվանդությունների գեմ պայքարելու նպատակով: Անգլիայում ապակյա ծածկոցի տակ՝ բանող տոմատը տուժում է Verticillium սունկից, սակայն ջերմաստիճանի մի փոքրիկ փոփոխությունն արգեն իջեցնում է այդ միկրոբայնիզմի ակտիվությունը: Պայքարի այս մեթոդները մասնակի բնույթ ունեն, վո-

բովհետև հողի մեջ որդանիզմների կայունությունը կախված է միշտաք ֆակտորներից և հաղվագյուտ գեղքերում և միայն մեկով պայմանավորվում:

Բավականին հաջող փորձեր են արված նաև հողի մեջ ազատապող ազոտ կապող բակտերիաների (Azotobacter և Clostridium) գործունեյությունը դեկավարելու և առանց գոմազբի ու պատիճավորների մշակության հողի ազոտի պաշարն ավելացնելու համար: Առաջող ե վորոշ գեղքերում ոգտակար լինել, յեթե ինչ-ինչ պատճառներով ցանկալի չե ցանքաշրջանառությունը փոփոխության յենթարկել: Գործադրով սկզբունքն այն ե, վոր հողի ազոտ չպարունակող որդանական նյութերի քանակն ավելացնում և այդպիսով հեշտացնում են այն միկրոօրգանիզմների զարգացումը, վորոնք հողի ազոտից անկախ են և իրենց ազոտի կարիքը բավարարում են ողից: Այս փորձը կատարել ե Ալֆրեդ Կոխը^{*)} 1907 թվին Գյոտտինգենում: Նա խոնավ և լավ աերացիայի յենթարկվող հողին ավելացրել և մեծ քանակությամբ խաղողաքար և պահել և 20° C-ի տակ ու գտել, վոր հողի ազոտի տոկոսն ավելացել ե: Անոթների փորձերը ցույց են տվել, վոր կապված ազոտն արագությամբ փոփոխության և յենթարկվում, մատչելի դառնում ըստ յուրին և այդպիսով բարձրացնում հողի բերքատվությունը (պատկ. 18): Թեև այս մեթոդն առաջին հայացքից անհույս ե յերեսում, սակայն փաստն այն ե, վոր վորոշ գեղքերում ստ վոչ միայն հնարավոր ե, այլ նույնիսկ համեմատաբար հեշտ ե, ինչպիս որինակ այն շաքարի գործարաններում, վորոնք այնպես են դասավորված, վոր նրանց մելասսան ավելի մեծ ոգուածով ուրիշ նպատակների համար գործադրել չի կարելի: Շաքարի այս թափուկով կարելի յե հողը պարարտացնել, յեթե ջերմային պայմանները համեմատաբար նպաստավոր են (բարձր են): Մեծ հաջողությամբ այս տեղի յե ունենում Մառերիցիուսում, մր. Իբբելի կալվածքում:

Հետագա հետազոտողները հաշվի առան այն դժվարությունները, վոր չեցին նկատել Կոխը և իբրեւը և վորոնց մասին խոսեցինք նախորդ գլխում: այդ այն ե, վոր եներգիա պարունակող նյութերի հողի մեջ մացնելու գեղքում զարգանում են վոչ միշտաքորդում այն ազոտ կապող բակտերիաները, այլև ուրիշները: Բակտերիաների բազմացումն այնքան արտգ ե տեղի ունենում, վոր նրանք ոգտագործում են նաև հողի միջի նիտրատները, վորի հետևան-



ՊԱՏԿԵՐ 18. ՄԻԿՐՈՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԾԼՈՏԻՑ ԳՈՄԱՐԱ-
ՏԵԼՆ ԱՌԱՑ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ

*) Jour. f. Landw. vol. 55. p. 355 (1907).

քով առաջ և գալիս բերքի անկում: Կոխի մեթոդը փորձեցին Պի-
կը Հավայի իում և Հարրիսոնը Բրիտանական Գվիանայում, սա-
կայն յերկուսն ել առանց դրական արդյունքի:

Այս դժվարությունները կարելի յե հաղթահարել, ընտրելով
այդ նյութերի հողը մտցնելու ճիշտ ժամանակը: Վորպիս առաջին
եֆֆեկտ հանդիսանում է վարոշ բակտերիաների բազմացումը և
նիտրատների կլանումը նրանց կողմից: Սա սկզբում վնասակար
և հողի բերքատվության համար, սակայն շուտով նա ոգտակար
և դառնում, վորովհետև Azotobacter-ը շատ նիտրատների ներ-
կայութամբ ազոտ կապել չի կարողանում, իսկ նիտրատներն այլ
բակտերիաների կողմից կլանվելուց հետո ազոտի կապվելու այս
խոչնորոշ վերանում է: Եներգիայի աղբյուրներն ուրիշն պետք ե-
շատ շուտ մտցնել, վորպեսզի ցանքի ժամանակ այդ պրոցես-
ներն արգեն վերջացած լինեն:

Սրա կարենությունը յերկում է Ռոդամսեղի Հուզի դաշ-
տի փորձից, շաքարը կամ ոսլան ցանքից անմիջապես առաջ գար-
նանը հողի մեջ մտցնելը վնասակար հետեւանք ունեցավ, մինչ-
դեռ ցանքից միքանի ամիս առաջ, աշնանը մտցնելը՝ ոգտակար:

Տախտակ 12. Հուզի դաշտը, գարի.

Շաքարի (կամ ոսլայի) ազգեցությունը բերքի վրա, հողամաս 4.0.

Լրիվ հանքալին պարաբռանյութեր


	Շաքար ալիւացնե- լու ժամանակը	Հնդկանուր բերքը, փունս ակրից	
		Առանց շաքարի	Շաքարով
1906.....	Գարուն	2485	—
1907.....	Գարուն	3578	3249
1908.....	Գարուն	1820	1404
1909.....	Գարուն	3148	2261
1910.....	Աշնան	2082	2502
1911.....	Աշնան	1244	1915

Անհրաժեշտ և միջոցներ գտնել այս փաստը դյուղատնտեսու-
թյան մեջ կիրառելու համար: Ներկայումս ազոտ պարունակող որ-
դանական պարաբռանյութերի գործածությունն ավելի աժան ե,
քան ազատ ազլրող բակտերիաների միջոցով ազոտ կապելը, սա-
կայն այդ միջտ ել այսպես չպետք ել լինի:

Մինչև այժմ որդանական նյութեր քայլքայող բակտերիանե-

րի գործունեյությունը ղեկավարելու առանձին փորձեր չեն արված, թեև պետք է ընդունել, վոր հողի մշակությունը, կանաչ պարաբռացումը և գոմաղբը նպաստում են այդ բակտերիաների զարգացմանը:

Հաջող փորձեր են արված նաև ծղոտի քայքայման ասպարիգում: Թե գերմերների և թե գիտնականների փորձերից հայտնի յի վոր ծղոտը, վորպես պարաբռանյութ բոլորովին անպետք, կամ նույնիսկ վնասակար ե վոչ պատիճապոր բույսերի համար, սակայն քայքայվելուց հետո նա հանդիսանում ե վորպես արժեքավոր պարաբռանյութ: Սրա պատճանները բացատրված են եջ 70- և 71-ում (տես նաև նկ. 30): Գյուղատնտեսական պրակտիկայում ծղոտի քայքայումը տեղի յե ունենում իրքն ցամքար գործելու դեպքում, յերբ ծղոտը լավ խանդիպում ե կենդանիների ելլուկրեմնաների հետ: Գոմաղբի հավաքման և պահպանման ժամա-



Նկ. 30. Ծղոտից պատրաստած արհեստական գոմաղբի պարաբռացուցիչ արժեքը
E. H. Richards. կարտոֆիլ, 1922:

նաև տեղի ունեցող փոփոխությունների ուսումնասիրությունը ցույց ե տվել, վոր կարելի յե ծղոտից նույն արդյունքներն ստանալ նաև առանց կենդանիների: Ֆերմերներին քաջ հայտնի յե, վոր ծղոտի քայքայումը կամ, ինչպես տեխնիկայում անվանում են

«արտադրությունը», քուսպեր և այլ խտացրած կեր ստացող կենդանիների աղբի մեջ ավելի հեշտ և տեղի ունենում, քան վատորակ կեր ստացող անասունների աղբի մեջ: Քիմիկոսները ցույց տվեն, վոր «հարուստ» աղբն իրեն մեջ ավելի շատ ամմոնիումի աղբը և պարունակում, քան «աղքատ» աղբը և վոր այդ աղոտի մի նկատելի մասը գոմաղբի արտադրության ժամանակ վեր և ածվում ավելի բարդ միությունների: Այստեղից յեզրակացվում եր, վոր միկրոռգանիզմներն իրենց անհրաժեշտ եներգիայի կարիքը հեշտությամբ բավարարում են ծղոտի միջի հեշտ լրացվող անաղոտ նյութերից, վորը նրանց հնարավորությունն և տակիս աղատորեն բազմանալու. իսկ մնադառության համար անհրաժեշտ աղոտը նրանք վերցնում են կենդանիների հեղուկ եկակերմնաներից: Այս յեզրակացությունը լիովին համապատասխանում և դիտված փորձերին:

Ողղամատեղի աշխատողները հետազոտեցին ծղոտի քայքայման հնարավորությունները, առանց կենդանիների աղբը վորպես միկրոռգանիզմների սնունդ ողղագործելու: Ծղոտը խուավացնելուց հետո նրան ավելացրին ամմոնիում կարբոնատ: Տեղի ունեցած քայքայման հետևանքով ստացվեց սև գույնի ամորֆ նյութ, վոր իր տեսքով նմանվում եր գոմաղբին (պատկ. 19): Իրոք այս պրոցեսն իր բոլոր մանրամասնություններով նմանվում է գոմաղբի արտադրությանը, միայն այն տարբերությամբ, վոր վորպես միկրոռգանիզմների սնունդ տրված ե վոչ թե կենդանիների եկակերմնատ, այլ ամմոնիումի աղ:

Այս մեթոդը մեծ հետաքրքրություն առաջացրեց այն գերմերների մեջ, վորոնք շատ ծղոտ ունեն, սակայն այդ ծղոտը գումաղբ զարձնելու համար բավարար թվով անասուններ չունեն: Քայքայումն այն ժամանակ ե ավելի մեծ հաջողությամբ տեղի ունենում, յերբ 100 մաս ծղոտին ավելացնում են 0,7 մաս աղոտ (այսինքն 3,5 մաս ամմոնիում սուլֆատ կամ կիրապոտ): Աղոտն արագությամբ յուրացվում ե և ծղոտի չոր նյութերի $20^0/0$ կորչում ե: Քայքայումն այսուհետեւ դանդաղորեն առաջ ե գնում, մինչև չոր նյութերի $50^0/0$ կորուսար, վորից հետո արդեն շատ չնչին փոփոխություններ են տեղի ունենում, և վորպես վերջնական պրոցես ստացվում են ըստ յերեսութիւն միքանի քիմիկական միություններ, վորովհետեւ տարբեր ծագում ունեցող նյութեր միանման՝ $2-2,5^0/0$ աղոտ պարունակող պրոլուկտներ են տալիս: Փաստորեն աղոտի կորուսար տեղի չի ունենում, սակայն ամրող ամմոնիումը վեր և ածվում բարդ նյութերի:


Գոմաղբը յենթարկվում է նույնանման փոփոխությունների և քայլայվում են մինչև միենույն աստիճանը: Մեկ տօնն ծղոտը*) կարող է ոգտագործել 100 փունտ մարզվող կերի սպիտակուցների համար: «Արտադրությունն ակզրում արագ և գնում, հետո դադարում է: Չոր նյութերի մինչև 50% կորչում է, սովորյած թե գոմաղբն անձրեկից և քամուց պաշտպանվում է, ազոտի կորուստները քիչ են լինում, իսկ ամժամկումի մեծ մասը վեր և ածվում բարդապիտակուցային նյութերի: «Բնական» և «արհեստական» գոմաղբի մեջ գոյություն ունի մի լիսկատար պարագելիում:

Այս գյուտաի շահագործումը հանձնվեց „Adco“ ընկերությանը, վորը պարտավորություն ստանձնեց իր ներկրած կապիտալի միայն $\frac{5}{12}$ %-ը վերցնել իրեն, իսկ մնացած յեկամուտը հատկացնել գյուղատնտեսական գիտահետազոտական հիմնարկներին: Յերկրագնդի յերեսին այժմ այս մեթոդով հազարավոր տոնն ծղոտ և այլ բռնական մնացորդներ են վերամշակվում և վեր են ածվում արժեքավոր պարարտանյութի (պատկ. 19): Հետագայում այս մեթոդի մեջ արժեքավոր բարեփոխումներ մացրին, վորոնցից մեկն ել բակտերիաների ակտիվությունն ուժեղացնելու համար փոսֆատներ ավելացնելն են: Ավելացվող ազոտի և փոսֆատի քանակը կարելի յե այնպես հաշվել, վոր այդ նյութերի ավելորդ կորուստ տեղի չունենա: Ինչպես առաջներում ել յեղել ե, նոր պլրոցեսի գործնական կյանքում կիրառելն առաջ բերեց մի շարք նոր պրոբլեմներ, վորոնցից ծղոտի քայլայժման վերաբերող մի քանիսն այժմ մի շարք լաբորատորիաներում ուսումնասիրության ևն յենթարկվում:

Հողի միկրոօրգանիզմների գորնունեյությունը դեկավարելու մի մեթոդ ել, վոր վերաբերում ե անցանկալի որդանիզմների վոչընչացմանը, զարգացել ե նորմամստեղում հողի մասնակի ստերիլիզացիայի կապակցությամբ: Ինչպես այդ հաճախ տեղի յե ունենում, այս յերեսույթը դիտել ե մի գործնական մարդ՝ ելզացի այգեգործ Որերենը: Նա նկատել ե, վոր Փիլլոքսերայի գեմ պայքարելու նպատակով այդիների հողերի ծամբածխածնով մշակելու գեպօռմ ուժեղանում և բույսերի աճեցողությունը: Բույսերի

*) Ծղոտի այս քանակությունն ոգտագործելիս անհրաժեշտ է գոմաղբին չուր ավելացնել, վորովհետեւ եկալիքեմնեների խոնավությունը ծղոտը թրջելու համար բավական չե, մանավանդ վոր չուր շխառած մեղի կոնցենտրացիան կարող ե ուժեղ լինել և միկրոօրգանիզմների զարգացմանը խանգարել համենայն դեպքու քանի դեռ ամժամկան մի մասը չի ցնելել:

զարգացման վրա նկատած այս ազգեցությունը նմանվում է ազոտային պարարտանյութերի ազգեցության: Մի շարք գիտական հետազոտություններ այնունեան ցույց տվին, վար վորոշ ցնդող թույներ կամ տաքությունը, ավելացնում են հողի բակտերիաների թիվը և ամմոնիակի արտադրությունը, վորն իրեն հերթին ուժեղացնում ե բույսերի աճեցողությունը: Այս ազգեցությունը շատ բարդ է, այստեղ ազգում են բազմաթիվ ֆակտորներ, իսկ նորմամստեղի հետազոտությունները ցույց տվին, վոր ֆակտորներից մեկն ել բակտերիաներ վոչընչացնող ամյուրաների սպանելն է: Բակտերիաների ակտիվությունն ուժեղացնելու այս միջոցը գժվար թե ձեռնոտու լինի ժամանակակից գյուղատնտեսության:



Նկ. 31. Տնկարան № 1. Տոմատի փորձ, 1919—1922 թ. Խողի մասնակի ստերիլիզացիան. 4 տարվա միջինը.

պայմաններում, սակայն սա մեծ արժեք է ձեռք բերում հատկապես ջերմոցային տնտեսության մեջ, ուր շատ անգամ անհրաժեշտ է լինում վոչընչացնել ախտածին միկրոօրգանիզմներին: Գործնական ֆերմերներն այս նպատակի համար մի շարք միջոց-


ներ են մշակել, վորոնցից միքանիսը տնտեսապես ձեռնտու յեն (պատկ. 20 և նկ. 31): Այս մեթոդն ուսումնասիրել է Ստուր Մասաչուսետում: Պետք է ասել, վոր գոլորշիով հող մշակելը թանգ և նստում, որ Անգլիայում մեկ ակրի ստերիլիզացիան նստում է 80—300 ֆունտ ստերիլինդ, ընդունելով բանվորի մի ժամկի աշխատանքի վարձը մեկ շիլինդ (հունիս, 1924) և մի տոնն ածուխը 2 ֆունտ ստերինդ: մի ակրի համար անհրաժեշտ է 16 տոնն ածուխ և վոչ պակաս 600 բանվորական որ: Էարեբախտաբարքի հավելումը նույնպես շատ մեծ է, առմատի մի ակրի բերքը ավելանում է 5—20 տոննով, վորը շուկայում գնահատվում է տոննը 50 ֆունտ ստերինդ: Գոլորշու արժեքը՝ վորպիս արմատի վերդը (նեմատողը) վոչնչացնելով միջոց, ցույց է տալիս պատկեր 20 ը:

Այս առարկայի մասին գիտական աշխատանքներն արդեն տվել են պարզ պատկերացում և այժմ նորամստեղում աշխատում են այս նպատակին համար ավելի եժան դնով: Քիմիական արդյունաբերության թափուկներն այս նպատակի համար անպետք զտնվեցին շնորհիվ այն փոփոխությունների, վորոնց յենթարկվում են սրանք հողի մեջ: Առաջիկա աշխատանքների նպատակն է հայտնաբերել որդանիզմներ և նրանց վրա սիստեմատիկաբար փորձել զանազան քիմիական միություններ, այդ նյութերի քիմիական կազմության և նրանց արդյունավետության մեջ յեղած կապը պարզելու համար: Եյութի անհրաժեշտ քանակությունը և նրա գործածության ձևն ու ժամանակը պետք է պարզել անմիջական փորձի միջոցով, իսկ անմիջական ազդեցության մանրամասնությունները՝ լաբորատորական ուսումնասիրության միջոցով: Այս հետազոտությունները տվել են շատ հետաքրքրական արդյունքներ. որինակ՝ այնպիսի որգանական նյութերի չնչին քանակություններ, ինչպես կրեպոլ, ավելի լավ՝ գիրորկրեպուները, ել ափելի լավ՝ քլորնիտրոմիությունները՝ ինչպես քլորոպիկրինը և քլորդինիտրորենցենը, ընդունակ են բերքն զգալի չափերով ավելացնելու, յերբ անհրաժեշտ քանակով մրացնում են հողի մեջ, սակայն մենչեւ այժմ գենես պարզված չե, թե վոր չափ են աղդում բերքի վրա վնասատուների վոչնչացնելու և վոր չափով անմիջական նիտրիֆիկացիայի ուժեղացման կամ բույսերի ստիմուլացիայի շնորհիվ (նկ. 32):

Այս նյութերից վորեն մեկի չնչին քանակությամբ հողի մեջ մտցնելու դեպքում (ակրին 2 ցենտներ), առմատի բերքն ավե-

լանում և վոչ պակաս, քան հինգ տոննով, վորը վաճառվում է 250—300 ֆունտ ստերլինգով: Ճիշտ է, այժմ այդ նյութերը դուռդատնեսուկան կամ այգեգործական շուկայում չկան, սակայն նրանց արտադրությունը նույնական է կարելի յե, վորովհետեւ որդանական քիմիայի հնարավորություններն անսահման են:

Տոմատի բերքը, տոնն ակրից, 1921—1922 (յորկու մարդի միջինը)




Նկ. 32. Հաղի մասնակի ստիմուլացիայի միջոցի հարմար չափ գոտելու փոքր:

Քիմիական արդյունաբերությունը, ինչպես որինակ՝ ներկերի արդյունաբերությունը, վորպիս հողի մասնակի ստերիլիզացիայի


միջանկյալ արտադրանք, կարող ե տալ միջատներին և սունկերին վշչացնելու անհրաժեշտ նյութեր: Այստեղ տեխնիկական քիչ միային համար աշխատանքի լայն ասպարեզ ե բացվում: Մենք այստեղ վստահորեն կարող ենք ասել, վոր միկրոռդրանիդների զործունեյության ղեկավարման գործի կարևոր պրոցեսի սկիզբն արդեն դրված է, թեև պետք ե խոստովանել, վոր որա գործնական կիրառմանը դեռ չենք հասել: Այս պրոցեսի նպատակն է հողի միկրոռդրանիդներին այնպիսի փոփոխության յենթարկել, վորը նպաստի հողի բերքատվության բարձրացմանը:

Մարդիկ արդեն վաղուց տիրապետել են յերկրագնդի յերեսի բնական բուսականությանը, և յերկրագործների ու հետազոտողների բազմաթիվ սերունդներ՝ վայրի ձեռքից առաջ են բերել այն անհամար կուտառեական ձևերը, վոր մենք այժմ ունենք: Այս փոփոխությունները տեղի յեն ունեցել շատ գոնդաղ, սակայն նըրանք այնքան մեծ են, վոր դժվար ե վորեն կապ գտնել մեզ շատ ծանոթ վերջնական ձեռքի և նրանց վայրի նախորդների միջև: Ներկա ընտանի կենդանիները նույնպես վայրիներից են առաջացել, սակայն ընտրության և բարելավման միջացով այնպես են փոփոխվել, վոր արդեն դժվար ե վորոշել նրանց ծագումը:

Հնարավայր ե արդյոք այնպես փոփոխել հողի միկրոռդրանիդները, վոր նրանք հողի բերքատվության բարձրացման գործում նույնքան գերազանցեն այժմյան տեսակներին, վորքան կուտառեական բույսերը և ընտանի կենդանիները մարդկանց համար սնունդ մատակարարելու գործում գերազանց են իրենց վայրի նախորդներին: Մենք այդ հարցին չենք կարող պատասխանել և միայն հախուռն մարդը կարող ե համաձայնվել սահման գծելու գիտության հնարավորություններին: Վերջին յերկու սերունդների համար մեկ որգա յերազը մյուս որն իրականություն ե դառնում, և շատ հեշտությամբ կարող ե պատահել, վոր գիտնականների համար նոր հայտնաբերած միկրոռդրանիդների աշխարհը նույնպիսի առատ բերք տա, ինչպես բուսականը և կենդանականը:



ՊԱՏԿԵՐ 19ա. ԶԵՐՄԱՏԱՆ ՀՈՂԻ ԳՈԼՈՐԾԻՆԵՐՈՎ ՄՇԱԿՈՒՄԸ.



ՊԱՏԿԵՐ 19բ. Heterodera-ի ՎՈՉՆՁԱՑՈՒՄԸ ԳՈԼՈՐԾԻՈՎ.

Ա. Զմշակած հող, ուժեղ վարակված: 100 Heterodera-ն վշչացած յեվ ուժեղ անեցողության: 55 Heterodera-ն վաչչացել է, սակայն անեցողությունն ուժեղ չ:

ՅՈՂԸ ՅԵՎ ԱՄՐՈՌ ԲՈՒՅԱԸ

Ութսուն տարի սրանից առաջ բույսերի սննդառության մասին գոյություն ունեցող ամենապարզ տեսակետներից, վորով սկսեցինք մեր դասախոսությունները՝ մենք յերկար ճանապարհ անցանք: Այժմ արդեն գիտենք, վոր բույսերի սննդառությունը, ինչպես և ամեն բան բնության մեջ, շատ բարդ և և կախված են բազմաթիվ ֆակտորներից: Այս առարկայի լրիվ պարզաբանումը մի մարդու ուժերից վեր և, վորովհետեւ առարկան իր մեջ ընդունելու մի շարք այլ գիտություններ, դրա համար իրոք անհրաժեշտ է զրել մի ամբողջ հանրագիտարան: Սակայն մեր դատողությունները լրիվ չելին, յեթե մենք չփորձեյինք հողի կազմության և սարուկտուրայի մասին վորոշ գաղափար կազմել, այն հողի, վորտեղ այս բոլոր փոփոխությունները տեղի յին ունենում:

Հողի բաղկացուցիչ նյութերի մեծագույն մասը ծագել են այն պինդ ապառներից, վորից կազմված և մեր յերկրի կեղել: Զանազան պատճառներից փշրվում են ապառների մակերեսը. փշրված մասերը մանրանում և հողմի կամ ջրի միջոցով ուրիշ տեղեր են տարվում, այսինքն՝ այնտեղ, ուր այժմ նրանք գտնվում են: Վորոշ չափով տեղի յին ունենում նաև քիմիական փոփոխություններ: Սրա հետևանքով ստացվում են տարբեր մեծության և ձեր ու վորոշ չափով քայլքայլած մանրուքի մի խառնուրդ (մասսա): Այս քայլքայման պըոդուկտների մի մասն ունի սոսնձանման կամ կոլլոիդ բնույթ: Սրանք կամ միանում են կարծը ապառի մանրուքի կամ միմյանց հետ և կազմում են անկախ ազդրեցատներ: Սա կազմում է հողի կմախքը, վորը դեռևս հող չե: Մեծ փոփոխություններ են տեղի ունենում, յերբ հանդես են դալիս բույսերը:

Իրենց կյանքի ընթացքում բույսերը հողից վերցնում են լուծված աղեր, իսկ ողից՝ ածխաթթու և նրանցից կազմում են բարդ նյութեր: Այս պըոդուկտը բավական նշանակալից են, սակայն մեր տեսակետից ամենահիմնական փոփոխությունն այն փաստն

և, վոր այս նյութերն իրենց մեջ պարունակում են արելից ստացած եներգիա: Յերբ բույսերը մեռնում են, նրանց մաքարդինները նորից ընկնում են հողմահարված ապառների մեջ, վերադարձնելով իրենց վերցրած սննդանյութերը, ավելացնելով նաև եներգիա պարունակող որդանական նյութեր, վորոնք առաջ չկային: Առանով և «հողը» տարրերվում՝ «քայքայված միներալներից»: Բնությունն այքան առատաձեռն է հողով, վոր նաև ամենուրեք ստեղծում է, ուր պայմանները թույլ են տալիս: Եներգիա պարունակող նյութերի հետ միասին գտնվում են նաև միկրոռդաշնիքներ, վորոնք եներգիա և սննդանյութերի հետևյալ սերնդի համար սննդանյութերի համար պարզ նյութեր են արտադրում: Սա արդեն ամբողջացնում է «հող» հասկացողությունը:

Այսպիսով հողի բաղկացած են յերկու մասից՝ միներալական մաս, վոր առաջացել են ապառների փշրվելուց և քայքայվելուց և որդանական կամ եներգետիկ մաս, վորն առաջացել են նախորդի վրա ապրող բույսերի մնացորդներից: Այս յերկու մասերը հասրավորություն են տալիս ապրող միկրոռդաշնիքների զարգացմանը, վորը մենք պետք են ամարենք վորպես հողի բնորոշ հատկություններից մեջը:

Ակնհայտ են, վոր հողի միներալական մասի կազմությունը կախված է ապառներից: Սակայն հողի թե միներալական և թե որդանական նյութերը գտնվում են կլիմայի ուժեղ ազդեցության տակ: Խոնավ, ցուրտ պայմաններում սիլիկատները քայքայվում են տալով սիլիցիում ոքսիդով (SiO_2) հարուստ հողեր, սիլիկատների միջի հիմքերի մի մասը լիցացվում է հողից: Խոնավ արովիկական պայմաններում սիլիցիումոքսիդը լուծվում է (ըստ յերկույթին ջուրն այնտեղ հիմքային ե) և հեռացվում, մնում են միայն յերկաթը և ալյումինիումոքսիդը, մինչեւ ավելի խոնավ կլիմայական պայմաններում այսումինիումոքսիդը նույնպես հեռացվում և մնում է միմիայն յերկաթոքսիդը, վոր կազմում և տրոպիկական յերկրների «լատերիտ» հողերը:

Որդանական նյութերի բնույթը կախված է այն բույսերից, վորոնցից նրանք առաջանում են և այն քայքայութիւնը, վորոնց նրանք յենթակա յեն հողի մեջ, այս յերկուսն ել իրենց հերթին կախված են դարձյալ կլիմայից*): Այսպիսս ուրեմն կարելի են ասել,

*) Վորպես լազ որինակ ծառայում են Յավայի և Սումատրայի հողերը, վոր վերջերս ուսումնակիրել են Մորը (De Grond von Java en Sumatra, Amsterdam, 1922): Յեթի հողի ջերմաստիճանը 20⁰ C-ի մոտ են, հումուսը շատա-

վոր հողը կլիմայի դավակն եւ և ինչպես Ս. Բ. Լիպմանը և Դ. Դ. Ռեյնիկելը*) ցույց են տվել, յեթե հողը տեղափոխվում է մի ուշ տեղ, նրա հատկությունները ևս փոփոխվում են. յոթ տարում նրանք հպայական փոփոխություն են դառնել տեղափոխված հողերի մեջ:

Այսպիսս ուրեմն՝ հողերը բաժանվում են յերկու՝ գլխավոր մասերի՝ լատերիտներ և սիլիկատային հողեր: Սիլիկատային հողերի ստորաբաժանումները կախված են այն բանից, թե նրանք վորքան են քայքայված կամ, ուրիշ խոսքով՝ նրանց քայքայման պրոցեսները կուտակվել են հողերում, թե այնտեղից հեռացվել են: Առաջին գեպքում հողի մեջ կարող են գանվել մեծ քանակությամբ կաղամբը հողերից յերկրորդ գեպքում հողը բաշխված է գլխավոր մասերում՝ յերկրորդ գեպքում հողը բաշխված է գլխավոր մասերից:

Հողերի յերկրորդ ստորաբաժանումները պայմանավորվում են այն բանով, թե նրանք իրենց մեջ պարունակում են ակտիվ (կամ փոխանակվող) կիր, թե վոչ: Բնության յերկույթների մեջ շատ հետաքրքրական ե այն փաստը, վոր վորոշ ելեմենտներ ավելի նշանակալից են, քան մյուսները: Հավանորեն հողի եկոնոմիկայի մեջ վոչ մի ելեմենտ այնքան մեծ դեր չի կատարում, վորքան կալցիումը: Հողի վողջ ֆլորան նրա գյուղատնտեսական հարավորությունները, հետեւապես նաև նրա վրա ապրող ժողովրդի բարեկեցությունը հիմնականում կախված է այն բանից, թե հողի մեջ կամ ակտիվ կալցիում, թե վոչ:


Հողի մի յերերորդ ստորաբաժանումն ել կախված է որգանական նյութերի գրությունից: Նորմալ պայմաններում որգանական նյութերը խառնվում են հողի հետ՝ ձիգունների, մըջունների և այլ կենդանական որգանների միջոցով տեղափոխվելով հողի ներքին շերտերը, սակայն յերբ այդ գործոնները բացակայում են, որգանական նյութերը մնում են հողի յերեսին, առաջացնելով ճահճները, տորֆ և այլն:

Ժամանակի սահմանափակ լինելը մեզ հնարավորություն չի տալիս կանգ առնելու լատերիտների և ձահճային հողերի վրա:

Նույն ե, վարովհետեւ ավելի շատ հումուս և առաջանում, քան քայքայվում ե: Դաշտավայրերում, ուր հողի ջերմաստիճանը 30⁰ C-ի, որգանական նյութերի քայքայում ավելի ուժեղ և տեղի ունենում, քան նրանք առաջանում են և հողերը հումուս չեն պարունակում և 25⁰ C-ի տակ հողի հումուսը մնում է համարյա անփոփոխ:

*) Soil Science, vol. 1, pp. 5—48 (1916).

Մենք այստեղ կանգ կառնենք նկ. 33-ի սխեմայի միջին մասերի վրա, ուր քայլայման պրոդուկտները կայուն են: Այսպիսի հոգերում գտնվում են կոլորիդ նյութեր, իսկ կալցիումը կամ լիզումը ե, կամ բացակայում ե: Այս հոգերում բույսերին նախորդ սերունդներից առաջացած որպանական նյութերի քայլայումն այնպես և առաջ ընթացել, վոր նրանք հասել են կայուն դրու-



Նկ. 33. Հողի կայուն վայրի վայրերի սխեմա.


թյան: Մենք արդեն ասացինք, վոր հողի բաղկացուցիչ մասերից միքանիսը կոլորիդ հատկություն ունին: Հողի մասնիկները շրջապատված են կոլորիդ նյութերով՝ կարծես թե նրանք ընկղմված են սրանց մեջ: Հողի կոլորիդների ուսումնարիբությունը հանդիսանում է վերջին ժամանակների ամենամեծ նվաճումը և բա-

ցաւրում և մի շաբք յերկույթներ, վորոնք առաջ բռնորովին անբացարելի ելին:

Հողի ստրոկառւրան հանդիսանում է նրա կոլորիդներով պայմանավորվող ամենակարևոր հատկությունը: Ավելի հեշտ և այգում կամ գաշտում դժուել, քան թի սրա նկարագրելը: Ամենալավ ստրոկառւրան այն է, յերբ հողը մանր կնձիկային կազմություն, ունի և պետք և ձգտել սրան, վորպեսզի մատղաշ բույսը կարողանա հաջողությամբ աճել: Բաղմամյա փորձի միջոցով ֆերմերները սովորիլ են կնձիկային ստրոկառւրա առաջացնել, սակայն այդ շատ թանգ և նստում և յերկար և տեսամ: Գիտությունը մինչև այժմ չի կարողացել ոգնել այդ գործում և շատ քիչ նվաճումներ և ունեցել: Այս ասպարիգում դրությունը շատ նման է պարարտացման գործի 1830 թվականների դրությանը: Այս գործի մասին մեր գիտությունը թերի յե և ազոտ ու պրակտիկային քիչ ոգնություն և ցուցաբերում: Այժմ Ռողամստեղում և այլուր աշխատանքներ են կատարվում հողի մշակության ճշգրիտ ֆիզիկական արտահայտությունները գտնելու համար: Այս աշխատանքները հանգում են հետեւյալ խնդիրներին՝ հողի կպչունության ուսումնասիրությունը դաշտում և խոնավության ու կըպչունության ուսումնասիրությունը լաբորատորիայում: Միմիայն ապագան ցույց կտա, թի արդյոք այս ուղին կբերի մեզ հողի մշակության այնպիսի գիտական հիմնավորման, ինչպես այդ տեղի ունեցավ պարարտացման գործում, վորը հիմնվեց Բուսականությի վիճակագրական հետազոտությունների, լիբիկի ընդհանրացումների և լոռի գաշտային և վեգետացիոն փորձերի վրա: Բոլոր հին փորձերը ցույց են տվել, վոր հաջողության ամենալավ ձանապարհն ուսումնասիրվող առարկայի ճիշտ վորոշումն ու չափումն ե. ավյալ գեպքում ել հողի Փիզիկայի ուսումնասիրությունը, չնայած նրա կարծեցյալ վերացական և ակադեմիկ բնույթին, հանդիսանում և գժվարին գործնական պրոբլեմները լուծելու ամենակարծ ձանապարհը:

Հողի Փիզիկայի ուսումնասիրության առաջին հաջողությունը՝ հողի գիմալլության փոքրացման ամենապարզ միջոցի հայտնագործումն եւ Հողի կոլորիդները բացասական լիցք ունեցող միթիթեղ՝ հողի կոլորիդ մասնիկները նրանից կհեռանան և թիթեղի վրա կմա միայն ջուրը: Այդ գեպքում մենք կունենանք ջրի մի բարակ շերտ, վորը լավ յուղիչ նյութ և հանդիսանում:

Արդ, յեթե մենք գութանի խոփին բացասական լիցք հաղորդենք, այդ գեպում նա կծածկվի ջրի բարակ շերտով և լավ ու տեսականորեն յուղիչ նյութով ապահովված լինելով՝ ավելի հետությամբ կանցնի հողի միջով, քան առաջ; Ելեկտրական լիցք ստանալը դժվար չէ, դրա համար պետք է ոգտագործել գութանը քանող տրակտորը: Դեռևս անհրաժեշտություն կա հաղթահարելու գործնական մի շարք դժվարություններ, սակայն սկզբունքն արդեն պարզված է, ինչպես այդ յերեսում և նկ. 34-ից:



Նկ. 34. Ելեկտրական հոռամեքի ազդեցությունը հողի շիման վրա.
Crowther and Haines, Jour. Agr. Sci., Vol. 14 p. 221 (1924).

Հողի մի շարք կարեոր հատկություններ նույնպես կախված են կոլոֆոններից: Համենայն գեպս մասամբ սրանցից և կախված հողի լուծույթներից նյութեր կլանելու հետաքրքրական հատկությունը: Ամենայն իրավամբ կարելի յե ընդունել, վոր կոլոփոն-ները վորոց գեր են կատարում բույսերի հողից սնունդ վերցնեները բույս գեր են կատարում բույսերի հողից սնունդ վերցնելու պրոցեսում: Այս պրոցեսն այժմ ուսումնասիրվում է կալիֆորնիայի համալսարանում, և պարզվել է, վոր այս պրոցեսը, բույսերի որից ածխաթթու կլանելու պրոցեսի նման, նույնպես պահանջում է եներգիա:

Հիմք կա ընդունելու, վոր հողի կոլոփոնները հիմնական աղբեցություն են անում հողի միկրոռգանիզմների կյանքի վրա: Վաղուց արդեն հայտնի յե, վոր հողը փելտրում և նրա միջով

անցնող ջրի բակտերիաները: Կուտակերը ցույց է տվել, վոր հողը մինչև մի կորոշ աստիճան կլանում և բոլոր պրոտոզոններին, ապա հագենալուց հետո այս յերեսույթն այլա տեղի չի ունենում: Կանված պրոտոզոնների թիվը հողի մակերեսի հետ համեմատած այնքան մեծ չե այսպես՝ մինչ, ինարկե, շատ կոպիտ հաշվիներով, մեկ գրամմ հողի մակերեսույթը 2500 ք. սմ. ե՝ կլանված ամյուրաների և ֆլագելատների մակերեսույթը միմիայն 4 ք. սմ. ե: Բայց յերեսույթին այս գործողությանը մասնակցում է հողի միայն մի փոքրիկ մասը և պարզ դատողությունը ցույց է տալիս, վոր դա հենց կոլոփոններն են: Այս անսակետից կարելի յե ընդունել, վոր հողի միկրոռգանիզմները, մանավանդ մեծերը, ապաբում և շարժվում են կոլոփոնների մակերեսույթի վրա: Միկրոռգանիզմներին դժվար ե պոկել կոլոփոնների վրայից, և սրանով ել բացատրվում ե նրանց անմիջական միկրոսկոպիական ուսումնասիրության ժամանակ տեղի ունեցող սխալները:

Կոմքերն առաջարկեց այն հետաքրքրական իդեան, ըստ վորի կոլոփոնները բույսերի սննդառության գործում անմիջական դեր են կատարում: Նա յենթագրում է, վոր բույսերի արմատիկների կոլոփոնաթական մեջ խանճում և հողի մասնիկների կոլոփոնիալ թաղանթի հետ, վորոնք պարունակում են կլանված նյութեր: Այս ձևով փոսփատները, կարեոր և այլ կարեոր սննդառությունները կարող են կլանվել բույսերի կողմից առանց լուծվելու: Այս յենթագրությունն արժանի յե ամենալուրջ ուշազրության, վորովհետև այդ կարեոր և հողի լուծույթի ուսումնասիրության և հողի անալիզի համար:

Քիմիկոսները մեծ ջանքեր են թափել սոսնձանման այս նշանակալից նյութերի ուսումնասիրության համար: Ուսումնասիրությունները շատ դժվար են և ըստ յերեսույթին նրանք բույր հողերում ել նույն կազմությունը չունեն: Հողի սիլիցիում ոքսիդի (SiO_2) և ալյումինիում ոքսիդի (Al_2O_3) հարաբերությունը տատանվում է տարբեր հողերի մեջ և հիմք կա յենթագրելու, վոր այդ տատանում ների հետ միաժամանակ փոփոխվում են նաև հողի ֆիզիկական հատկությունները և նրա բերրիությունը (տախտ. 13): Արենստականորեն կոլոփոն սիլիցիումը, այսումինիումը և յերկաթոքսիդը ձիւտ հարաբերությամբ խառնելով հողի կոլոփոններ սահանալու համար, թեև անհաջող անցավ Բըթիդֆելդի փորձը, սակայն ցուցմունքներ կան, վոր հողի բնական

կոլլորիդներն իրենցից ներկայացնում են ալյումո-սիլիկատների կոմպլեքս*):

Քիմիական ուսումնասիրության դժվարությունները մեծանում են շնորհիվ այն փաստի, վոր հողի մեջ մի շարք ակտիվ նյութեր են գտնվում, վորոնք կլանում կամ նստեցնում են զանազան յոններ. այդ նյութերի կոլլորիդ լինելը կամ չլինելը դեռևս պարզված չէ: Այս նյութերի վրա 1852 թ. ուշադրություն դարձրեց Ուեն, անգլիացի ամենամեծ ագրոքիմիկոսներից մեկը, վորոնք բաղկում եր մի քիմիական պատրաստություն ունեցող դրծնական գյուղատնտեսիչ Հ. Սումպոնի կատարած դիտողության ուսումնասիրությամբ: Տոմսոնը ցանկանում եր ուսումնասիրել հողի՝ գոմաղբից և գոմից դուրս յեկող հեղուկից (մեղից) ամմոնիակի կորուսար դադարեցնելու հնարավորությունները, ուստի նա համոզեց իր բարեկամ քիմիկոս Ջոն Սպենսին ուսումնասիրել հողի ամմոնիակ կլանելու ընդունակությունը: Փորձը լրիվ հաջողություն ունեցավ: Ուեն խմանալով այդ արդյունքների մասին, այդ վերագրեց կրկնակի սիլիկատներին, վորոնք նրա կարծիքով գտնվում են հողի մեջ և ամմոնիումի աղերի հետ առաջացնում են սովորական կրկնակի փոխանակական ռեակցիա:

Տախտ. 13. Կավի («ուտրա կավի») կազմությունը յել երա հատկությունը

SiO_2 -ի հատկությունը
Al_2O_3
Անգլիայի հողերը
Բերրի 2.5
Պակաս բերրի 1.6
Շատ կպչուն 3.9—4.8
Պակաս կպչուն 2.8
Վոչ կպչուն (կառլինիտ և չի-նական կավ) 2.0

Այս տեսակետը գերիշխում եր մոտ քառասուն տարի մինչեւ ֆան Բեմմելնը՝ առաջին հոչակավոր հոլանդացի ագրոքիմիկոսը, վոր աշխատում եր Յավայում, 1888 թվին վերջնականապես հայտնաբերեց, վոր այդ նյութերը հասարակ կլանող կոմպլեքսներ են, բաղկացած սելիցիտաթթվից, յերկաթոքսիդից:

* Bradfield: Missouri Agr. Exp. Sta., Res. Bull. 60, 1923.

ալյումինիում ոքսիդից և այլն: Սրանք բոլորն ել թույլ են կլանված և վերջնական միություններ չեն կազմում: Բրեդֆելդի, Կելեյի Հիսախինկի և ուրիշների ուսումնասիրած հիմքերի փոխանակության փաստերը ցույց են տալիս, վոր այստեղ մենք ունենք քիմիական կոմքինացիաների միտեսակ, ուր ակտիվ մարմինների ազդեցության տակ տեղի ունեցող արարքցիայի կամ նստվածքներ ստանալու ժամանակ ազատվում են համապատասխան եկվիվալենտ քանակությամբ հիմքեր, ճիշտ այնպես, ինչպես սովորական փոխանակական ռեակցիաների ժամանակ: Այս փաստերին համապատասխանող յեղրակացությունն այն ե, վոր հողի ակտիվ նյութերը այսումսիլիկաթթուների միություններ. են և վոր սրանք կազմում են հողի կոլլորիդների մեծ մասը:

Կիր պարունակող ակտիվ նյութը (վոր մենք անվանում ենք կալցիտումի կոմպլեքս), վորպեսզի չպնդենք այն չապացուցված տեսակետը, թե դա կալցիտում ալյումոսիլիկատ ե) հողի բերքատվության համար հիմնական հշանակություն ունի: Հստ յերեւլույթին նրանից են կախված հողի հեշտ կամ դժվար մշակելի ինքնակություն հատկությունները: Նա հեշտությամբ տեղակալվում ե նատրիումի կոմպլեքսով, յեթե հողը շարունակ լվացվում ե նատրիում քրորիդով կամ նատրիում նիտրատով: Այդ դեպքում հողի բնույթը հիմնավորապես փոխվում ե՝ մանր կամ խոշոր ավազային հողերը պնդանում են, իսկ կավայինները վեր են ածվում ունիուսալի կարծը մասսայի: Յեթե վորեւ կատաստրոֆի հետեւ գանգում հողից հեռացվեր ամբողջ կալցիտմը, յերկը տեսքը բուրովին կփոխվեր:


Այսպիսի հիմնական փոփոխությունն անհավանական ե, սակայն մանր փոփոխություններ սովորաբար տեղի յեն ունենում: Հողերի ծովի ջրով վողողվելը կարող է նրանց զգալիորեն փչացնել՝ ազդելով աղերի միջոցով կալցիտմի կոմպլեքսի վրա: Նատրիումի աղեր պարունակող ջրի ոգտագործումը վոռոգման նպատակով (մի սովորական յերեսույթ) այն հետևանքն ե ունենում, վոր նատրիում փոխանակում ե կալցիտմին: Սրան ուղեկցում ե հողի հատկությունների վատացումը. մի յերեսույթ, վորի հետ լավ ծանոթ են վոռոգվող շրջանների բնակիչները: Նատրիումի կոմպլեքսը շատ ավելի վատ ե, վորովհետև սա հանդիսանալով շատ թույլ թթվի աղ՝ մեծ հակում ունի հեղողիկի յենթարկվելու և նատրիում կարբոնատի քանակն ավելացնելու, մի հանգամանք, վոր առաջացնում ե սև ալկալի հողեր», բոլոր տեսակի հողերից թերևս ամենավատը: Սրանց լավացնելու միջոցը

նատրիումի նորից վաճելն ու կալցիումի կոմպլեքս ստեղծելն և, սակայն հաճախ սա մնում է վորակես կատարելազործված խորհուրդ, վորը ներկա պայմաններում անկարելի յեւ ի բաղործել:

Խոնավ պայմաններում ել տեղի յեւ ունենում մի այլ փոփոխությունն է: Հիդրոլիզի յենթարկվող կալցիում կոմպլեքսը հետրդնետե քայլայվում և առատ ոնձրեների ջրի և ածխաթթվի մեջ, առաջացնելով ջրածին կոմպլեքս և կալցիում բիկարբոնատ. վերջինս ել լվացվում և հեռանում է հողից: Ցեթեւ այժմ հողի մեջ նատրիումի կամ կալցիումի մի վորես ուժեղ թթվի աղ (աղաթթվի կամ ծծմբաթթվի աղ) մտցնենք, այն ժամանակ կրկնակի ունակցիա տեղի կուտածի կոմպլեքսի հետ, տեղակալելով ջրածին յոնին և կտա կալիումի կոմպլեքս. թթու ուղիկալը կմիանա ալյումինիում ոքսիդի հետ և կտա լուծվող ալյումինիում քլորիդ կամ ալյումինիում սուլֆատ: Նախ ալյումինիումի լուծվող աղերը թունավոր են բույսերի համար և ապա մի սխտեմ, վոր ավելի շատ ջրածին յոներ և պարունակում, քան հիդրօքսիլ յոներ՝ թթուն ե: Հետևապես այսպիսի պայմաններում առաջանում են թթու հողեր ջրածին յոների այնպիսի քանակությամբ, վոր թունավոր և բույսերի համար և հեշտությամբ կարելի յեւ վորոշել: Մա հայտնի յեւ «թթու» հող անունով և սովորական յերեսույթ ե բարեխառն խոնավ կամ ցուրտ գոտու համար: Ֆերմերի համար այս հողերը նույնքան վասակար են, վորքան տաք ու չոր յերկրների ալկալի հողերը (նկ. 35): Բարեբախտաբար սրանց լավացնելն ավելի հեշտ ե. զրա համար պետք է հողի մեջ այնքան կրի մտցնել, վոր նա նստեցնի ալյումինիումի աղերը և ջրածին յոների կոնցենտրացիան այնքան փոքրացնի, վոր նա բույսերի համար տանելի դառնա: Կրի անհրաժեշտ քանակը վորոշելու համար այժմ լավ կահավորված լաբորատորիաներում գործ ե ածվում ելեկտրոսմետրիկ մեթոդը: Գիտության զարգացումը հնարավորություն ե տալիս մեզ ֆերմերին ճշտորեն ցույց տալ կրի ամենանվազ անհրաժեշտ քանակը և այդպիսով նրա ծախքերը մինիմումի հասցնել, մի հանգամանք, վոր ներկա պայմաններում միանգամայն անհրաժեշտ ե: Կրի անհրաժեշտ քանակը վորոշելու համար առաջարկվել են բազմաթիվ ավելի պարզ մեթոդներ, սակայն սրանցից վոչ մեկն ել հաջողություն չունեցավ, վորովհետեւ սրանք աչքաթող եյին արել հողի բույնային հատկությունները (հողի ուսակցիայի փոփոխության ընդդիմադրելու ուժը):

Հողի կալցիում կոմպլեքսի և հողի թթվության ու ալկալիության մեջ յեղած կապի ուսումնասիրությունը մեծ չափերով պարագան և ուսւ հոչակավոր հողագետ Գեղրոյցին; վորն այդ տեսակետները զարգացվեց 1912 թ. «Ժурнал опытной агрономии» հանդեսում: Վորովհետեւ այդ լեզուն շատերը չգիտեյին, ուստի

Հողի Ռեակցիան



Ակալի հող


Նկ. 35. Հողի կոմպլեքսի լուծակցիաների արդյունքները.

Գեղրոյցի աշխատությունները շատ գիտնականների համար անհայտ մնացին: Վերջերս վակսուանը թարգմանեց այդ Միացյալ Եահանգների «Հողագիտական Բյուրոյի» համար և այդպիսով նրանք այժմ արդեն մատչելի յեն զարձել: Բայ այդ թեորիայի հողի թթվությունը և ալկալիությունը կալցիումի կոմպլեքսի

միենույն քիմիական հատկության տարբեր փուլերն են: Նախկին սերնդին այս տեսակետն անընդունելի կթվար, վորովհետև նրանք հողի այս յերկու հատկությունները՝ թթվությունը և հիմքայնությունը դիտում եյին, վորպես միմյանցից բոլորովին անկախ հատկություններ: Մեակցիաների մեջ գոյություն ունեցող այդ կազմ վերջերս շատ հասարակ կերպով ցույց են տվել Կոմմննսը և Կելլելը*), վորոնք կատարել են գյուղատնտեսության մեջ յեղած ամենապարզ և ամենաեկանա փորձը: Նրանք թթու հողը լվացել են նատրիում քլորիդով և ստացել նատրիումով հագեցած կոմպլեքս, այնուհետև այդ կոմպլեքսը լվանալով մաքուր ջրով առաջացրել են նատրիում կարբոնատ և այդպիսով թթու հողը դարձրել ալկալի հող:

Բացի այս, մեծ չափերով տեղի ունեցող փոփոխություններից կան նաև ուրիշները, վորոնք ավելի տեղական նշանակություն ունեն: Եքսպերիմենտալ մեթոդների ներկա գրությունը մեզ հնարավորություն չի տալիս հետեւելու այս փոփոխություններին, սակայն կարելի յէ սրանց բնույթը մոտավոր կերպով վռոշել, կերառելով վերը բերած տեսությունների սկզբունքները: Արդեն ապացուցված է, վոր հողի միկրոռգանիզմների ածխաթթու, նիտրատներ և այլ նյութեր արտադրելու ակտիվությունը փոփոխվում է որեց-որ և ժամ առ ժամ: Նիտրատների քանակի փոփոխության հետևանքով տեղի յն ունենում կրի և այլ հիմքերի վերադասավորություն: Ապա, բույսերի արմատներն ամեն որ հողից նիտրատներ են կլանում: սակայն նրանք այդ աղերն ամբողջությամբ չեն վերցնում, հիմքերի մի մասը մնում է առանց ոգտագործման, մի մասն ել նորից դուրս ե դալիս բույսերի արձատից: Ածխաթթվի արտադրությունն ըստ յերևույթին կախված է տեղական պայմաններից, հետեւապես նրա կոնցենտրացիան և հիմքերի վրա արած ազդեցությունը փոփոխվում է նույնպես ըստ տեղական պայմանների: Այս ուեակցիաներն ազդում են հիմքերի վրա և մշտական փոփոխության յինթարկում նրանց խմբավորումները:

Հողի կոմպլեքսի ուսումնասիրությունը հանդիսանում է ապագա աշխատանքների ամենագրավիչ պրոբլեմը: Հիմքերի փոխականության ներկա ուսումնասիրությունները շատ բան կարող են տալ, սակայն Փիդիկական մեթոդների կերառման վրա



ՊԱՏԿԵՐ 20ա. ԲՈՒՅՈՒՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՀՈՂԻ ԾԱԿՈՏԻՆԵՐԻ ԶԱՓԵ
(Hall, Branchley and Underwood. Phil. Trans. vol. 204, pp. 179-200, 1913.



ՊԱՏԿԵՐ 20բ. ՎՈՉԽԱՐԵՐԻ ԱՐԱՄԵԼԸ ԴԱՇՏՈՒՄ
հողին որգանական նյութ ավելացնելու մի ոգուակար մերոդ.

*) California Tech. Paper, № 3 (1923)

ավելի մեծ հույսեր են դրվում: Հավանական է, վոր Խ—ճառապայթների կիրառումը հողի ուսումնասիրության գործում նույնական է հաջողություններ կտա, ինչ նա տվեց ուրեմնի կամքացի և նրա վորդու ձեռքում՝ բյուրեղների ուսումնասիրության գործում:

Արդեն ցույց տվինք, վոր հողի մասնիկներն անկանոն ձեռք ունեն և ֆերմերի աշխատանքի շնորհիվ կարող են վորոշ խմբավորումներ ստանալ՝ կնձկային ստրուկտուրա: Հողն ամբողջությամբ պինդ նյութերից չի կազմված, այլ ունի նաև բազմաթիվ ծակոտիներ: Այդ ծակոտիները դատարակ չեն, այլ լցված են ողով և մասամբ՝ ջրով: Վերջինների ծավալը Ոռղամստեղում հետեւյալն է.

Ոդի, ջրի յեկ որգանական նյութերի ծավալը.

Ոռղամստեղի հոդի 100 ծավալի մեջ

	Գլուխյութեր		Ծակոտիներ ծագալի մեջ	Ծակոտիների ծագալի մեջ	
	Անորդանական	Որդանական		Զանգաներ	Զանգաներ
Մշակվող հող առանց պարարտացման	62	4	34	23	11
Մշակվող հող, վորին տարեկան 10 տոնն զոմազր և որդում	51	11	38	30	8
Արտաստեղի	41	12	47	40	7

Գաղերի դիմուգիան շատ մեծ է և գուցե զարմանալի չե, վոր հողի մթնոլորտ համարյա նույնն է, ինչ մենք ենք շնչում: Բերենք միքանի տիպիկ անալիզների հետևանքներ.

	Ծավալային տոկոսը		
	Թթվածին	Ածխաթթու	Աղոտ
Մշակվող հող առանց պարարտացման	20.4	0.2	79.4
Գոմաղլով պարարտացրած	20.3	0.4	79.3
Մարդագետին	18.4	1.6	80.0
Մթնոլորտի ողը	20.9	0.03	79.1

Սովորաբար թթվածնի քանակը նույնն է, ինչ վոր մերմթնոլորտինը, սակայն ածխաթթուն տասից քսան անդամ ավելի յէ: Բույսերի արմատները տարրեր ճեղվ են պղփում ածխաթթվից, մի քանիսը դիմանում են ավելի մեծ քանակի ածխաթթվի, քան մյուսները: Ածխաթթուն սովորաբար հանդիսանում է վորպես բույսերի լինելը վորոշող ֆակտոր և հավանորին մեծ դեր է կատարում կավային հողերի ֆլորայի սահմանափակության գործում: Զօրվ հազեցած հողերում ողը կամ բոլորովին դուրս ե վանված կամ նրա դիմքուզիան շատ և փոքրացրած: Թթվածնի քանակը կարող է խիստ պակասել, առաջացնելով մի յերկրորդական ազդեցություն՝ բույսերի արմատների խեղզվելը (ասդիկանիա): Այս պայմաններում՝ քիչ բույսեր կարող են դիմանալ:


Ողի փոխանակության արագությունը պայմանավորվում է ծակոտիների մեծությամբ, այնպես վոր նա վորոշ հողերում ավելի մեծ է, քան մյուսներում: Այս կապակցությունների մանրամասնություններն ուսումնասիրում ե ֆիզիկան: Բույսերի զարգացման վրա սրա ունեցած ազդեցությունը ցույց է տալիս պատկ. 21 ա:

Հողի մթնոլորտի կանոնավորումը կատարվում է՝ 1) զրենաժի միջոցով, վորը հեռացնում է ողի ծակոտիների միջի ջուրը և դրանով հնարավոր և դարձնում ողի ներս թափանցելը, 2) մշակության միջոցով, վորը մեծացնում է ծակոտիների ծավալը և 3) ծակոտիներ նյութեր մացնելով հողի մեջ, ինչպես Հնդկաստանի համար հովարդի առաջարկած խեցիները:

Յերկրորդ նյութը, վոր լցնում է հողի ծակոտիները, դա ջուրն է: Նա հողի մեջ պահպում է՝ յերեք տեսակ ուժերի միջոցով՝ ձգողական ուժ, մազականության և քիմիական ներքին աղղակցական ուժեր: Հարմարության համար հողի ջուրը յերբեմն բաժանում են յերեք մասի՝ գրավետացիոն ջուր, մազական ջուր և միացած ջուր, սակայն սրանք արհեստական ստորարաժանումներ են, և վորպես այդպիսին՝ ունեն այն պակասությունը, վորձգտում են ավելի շատ մթափնել հարցը, քան թե պարզաբանել այդ: Ինչպես Շուլլը փորձել է, ջուրը խիստ կնրառվ չի բաժանվում տարրեր գրությունների, այլ հաջորդաբար տեղի յե ունենում մի աննկատելի անցում գերազանցապես զբավետացիոն ջրից գեպի միացած ջուրը (նկ. 36): Բնական բերքատվության պայմաններում ջրի մի խոշոր մասը հողի մեջ պահվում է այնպիսի ուժով, վորը մոտ 1000 անգամ գերազացնում է ձգողական

ուժին (մոտ 1 ատմոսֆեր), և այսպիսի պայմաններում ըստյուրը ջուր ողտագործելիս դժվարության չեն հանդիպում: Հողի մշակության միջոցով հնարավոր և շատացնել հողի ծակոտիները և պահպող ջրի քանակը:

Բույսերին ջուր մատակարարելը գործնականում կանոնավորվում է տարրեր ուղիներով. 1) վերերկրյա և ստորերկրյա վրանոգման միջոցով ջուր ավելացնելով, 2) ջրի կորուստը պակասեցնելով՝ մոլախոտերը վոչչացնելու, կոլորդալ նյութերի քա-




Նկ. 36. Հողի մեջ ջուր պահելու ուժը փոփոխված և խոնավության քանակի փոփոխման հետ. Shull, Bot. Gazette, vol. 62 p. 1, (1916).

նակն ավելացնելով՝ գործնականում որգանական նյութեր ավելացնելու միջոցով (պատկ. 21 բ.) և կոլորդալ հատկությունների հնարավոր փոփոխության միջոցով: Ինչպես ամենուրեք տեղի ունի՝ ֆերմերները ձտգում են հողի խոնավությունը կանոնավորելու համար ոգտագործել յերբորդ մեթոդը՝ այն և կիրառել բույսերի այնպիսի հաջորդականություն կամ ցանքաշրջանառություն, վոր համապատասխանում է տվյալ պայմաններին:

Վերջին յերեսությը, վոր մենք պետք ե ուսումնասիրենք՝ կապված և այն հանգամանքի հետ, վոր հողի ջուրը յերեք մաքուր չե, պարունակում է իր մեջ հողի միջի լուծվող նյութերի փորոշ մասը: Նրա կոնցենտրացիան ցանված հողերում սովորաբար լինում է 0.1—1.0%, և ավելի շատ՝ ցանվածներում: Հողի

զուծույթի նշանակության վրա, վորպես աճող բույսերի սննդառության միջավայրի՝ ամենից առաջ մատնացույց արեց Միլառն Ռեխանելը և հողի լուծույթի մասին մեր ունեցած տեղեկությունների համար մենք ամենից շատ պարտական ենք ամերիկացի հետազոտողներին, վորոնցից առաջնորդ յեղել և ֆ. Դ. Կամերոնը. այժմ այդ խնդրով զրազվում են Կալիֆորնիայի համալսարանի աշխատակիցները. Սկզբնական հետազոտողները հողի լուծույթի մասին այն կարծիքն ունեյին, վոր նա հագեցած և հողի բաղկացուցիչ միներալներով, և վորովհետև վերջինները մեծ տարածությունների հողերի մեջ առանձնապես միջանցից չեն տարբերվում, ուստի նրանք յենթագրում ենին, վոր կարելի յէ ընդհանրապես լուծույթի կազմության միորինակություն գտնել: Այժմ արդեն գիտենք, վոր այդ պարզ կարծիքը ճիշտ չե: Հողի լուծույթի կազմը խիստ փոփոխվում և շնորհիվ միկրոսպանիդմների գործունեյության, սիլիկատների ազդեցության ու կոլլոիդների և աճող բույսերի կողմից կանվելուն: Կալիֆորնիայի աշխատողները՝ Զարլ Լիպմանը, Հոգլանդը, Բյորգը, Ստյուարտը, Մարտենը, Շարպը և ուրիշներն ուսումնասիրում են հողի լուծույթի կազմության փոփոխությունները. Նրանք ցույց են տվել, թե ինչպես և փոփոխվում նա ժամանակի ընթացքում և թե ինչ ազդեցություն են անում նրանց վրա աճող բույսերը (նկ. 37): Յեթե հնարավոր լիներ կապել այդ փոփոխությունները հողի միկրոսպանիդմների գործունեյության ուսումնասիրության հետ, մենք այն ժամանակ ավելի լրիվ պատկեր կունենայինք, քան թե այն, վոր մենք ստուցել ենք հողի մեջ տեղի ունեցող բոլոր փոփոխություններից: Յերեսույթների մանրամասն ուսումնասիրության համար մենք գենես կարիք ունենք միկրոսմեթոդների, վորովհետև փոփոխությունները տեղի յեն ունենում վոչ թե հողի ամբողջ մասսայի մեջ միակերպ, այլ նրանք հավանորեն կենարունացած են կոլլոիդ մակերեսույթի վրա կամ որգանական նյութերի մեջ: Սակայն մենք գենես չունենք հարթած ճանապարհ, վորով կարողանայինք ընթանալ, թեև պետք է ասել, վոր այժմյան մեթոդներից իլ շատ բան ունենք սովորելու: Յեթե մենք ընդունում ենք, վոր հողի լուծույթն առաջնակարգ նշանակություն ունի բույսերի սննդառության համար (այժմյան տեսակետն այդ է), ապա պարարտացման նպատակն է միշտ, ուղտիմալ զրության մեջ պահպանել հողի լուծույթի կոնցենտրացիան, և այդ նպատակին հասնելը չի կարելի անկարելի համարել:

Այժմ մենք կարող ենք կազմել մեր բոլոր ասածների հանրագումարը: Բույսերի սննդանյութերը բաժանվում են յերկու մեծ խմբի, ածխաթթվի, վորն ստացվում և ողից և հասարակ աղերի, վորոնք ստացվում են հողից: Այս աղերի ելեմենտները նույնպես յերկու խմբի յեն բաժանվում մեծ քանակությամբ պահանջվողներ, վորոնք վողներ, վորոնք կազմում են բույսի մարմինը (աղոտ, գոսփոր, կալիում և այլն) և քիչ քանակությամբ պահանջվողներ, վորոնք ըստ յերեսույթին կատալիզատորի կամ ստիմուլանտի և կամ բույ-



Շաբաթներ ցանելուց հետո.

Նկ. 37. Հողի լուծույթի կանցենտրացիան տիպմային կավային հողում, հնած յիլ չենած. Hoagland, Martin and Stewart, Jour. Agr. Res. vol. 20, p. 381. 1921 (T. S. = 1: 5 ջրային եկտրական կետի իջեցումը. Խոնավությունը = 22 տոկոս):

սի կյանքը կանոնավորող գեր են կատարում (մանգան, բոր և այլն, հավանորեն նաև վորոշ որգանական նյութեր): Այս սննդանյութերի քանակական փոփոխություններին բույսը պատասխանում է վոչ միայն իր բնդհանուր աճեցողությամբ, այլ նաև բջիջի հյութի կազմության փոփոխությամբ, սրա հետ նաև աճեցողության, տերմիների, արմատային սիստեմի, հասունացման արագության, սննդառու արժեքի և վնասատուներին ու հիվանդություններին դիմադրելու ուժի փոփոխությամբ: Այս փոփոխու-

թյունների չափը և վորոշ սահմաններում նաև դրանց բնույթը կախված է հողային և կլիմայական պայմաններից: Բույսը, հողը և կլիման այնքան սերտորեն են կապված միմյանց հետ, վորանձառությունն է դրանց մասին մտածել՝ միմյանցից անկախ: Մնադանյութեր մատակարարելու փոփոխության կանոնավորման գործն այժմ գտնվում է ֆերմերի ձեռքին շնորհիվ այն բաղմաթիվ արհեստական պարաբռանյութերի, վորայժմ մեր տրամադրության տակ ունենք:

Բնության մեջ, ինչպես նաև լայն չափերով գործնական գյուղատնտեսության մեջ բույսերը՝ սննդով բավարարվելու տեսակետից, կախված են հողից: Մնադանյութերը հողի մեջ գտնվում են քիչ քանակով, սակայն նրանք անընդհատ առաջանում են քիչ քանակով, սակայն նրանք անընդհատ առաջանում են քիչ քանակով: Վորակես վերջիններիս հումույթ հանդիսանում են բույսերի նախկին սերունդների մնացորդները, իսկ վորակես այդ նյութերի փոփոխության գործոններ՝ հողի մեջ ապրող անհամար միկրոօրգանիզմները: Այսակեղեւ յետնում մի զարմանալի շրջանառություն, բույսն առնում է ողից ածխաթթու և հողից իր սննդառության համար անհրաժեշտ պարզ աղեր կլանելով: Մրանցից նու կազմում է այն բոլոր բարդ նյութերը, վորից կազմված ե բույսի մարմինը: Այս պրոցեսի համար պահանջվող մեծ քանակությամբ եներգիան գալիս ե արեկի լույսից, վորը կարողանում են ոգտագործել բույսերը—մի գործ, վորին վոչ մի ժամանակակից ինժեներ ընդորինակել չի կարող: Յերբ բույսը մեռնում է՝ նրա մնացորդները խառնվում են հողի հետ: Այդ մնացորդներն իրենց մեջ պարունակում են թե վորոշ քանակությամբ եներգիա և թե բույսերի սննդառությամբ ենեմենտներ: Այս մնացորդները ծառայում են վորակես սննդում և եներգիայի աղբյուր հողի միկրոօրգանիզմների համար, վորոնք այնքան բաղմապիսի բնույթ ունեն, վոր ըստ յերեւյթին նրանց վորոշ անդամները կարող են ոգտագործել ամենաշեշտ եներգիան: Այս պրոցեսի ժամանակ նրանք արտադրում են բույսերի նոր սերնդին անհրաժեշտ սննդանյութերը, ուրեմն սրանք հողը մաքրում են որգանական մնացորդներից, վորոնք կուտակվելու գեպքում կարող են բույսերի համար վնասակար լինել: Այսպիսով բույսերը և միկրոօրգանիզմները փոխադարձ կախումն ունեն միմյանցից՝ բույսերը ֆիկսում են միկրոօրգանիզմների համար անհրաժեշտ եներգիան, իսկ միկրոօրգանիզմներն արտադրում են բույսերի սննդուղ կազմող նիտրատներ և այլ պարզ աղեր:

Բույսերի սննդի արտադրությունն անընդհատ, բայց վոչ միտոպաղուղ պրոցես է: Միկրոօրգանիզմների ակտիվությունը տատանվում է որեց որ և ժամ առ ժամ, սրա հետևանքը լինում է այն, վոր բույսերի արմատներին տրամադրվող նիտրատների քանակին անընդհատ փոփոխում է: Թե ինչպես են հարմարվել բույսերն այդ փոփոխություններին, մինչչե այժմ գեռ հայտնի չե:

Այս բոլոր փոփոխությունները տեղի յեն ունենում հողի մեջ: Սակայն հողը մի չեղոք միջավայր չե, այլ նա ակտիվ մասնակցություն է հայտնաբերում: Բայտ քաշի, հողի մեծագույն մասնակիցների մանրացրած մասնիկները, վորոնք համեմատաբար իներա են, սակայն հողն իր մեջ պարունակում է նաև կոլոֆոն նյութեր, վորոնք, ինչպես կարելի յե յենթագրել, ծածկում են ատառների մասնիկները և պայմանավորում են նրա կլանող հատկությունը, կնձիկներ առաջացնելը և բույսերի անեցողության համար անհրաժեշտ այլ հատկությունները: Նա պարունակում է իր մեջ աղերի հետ փոխանակական ռեակցիաներ ավող նյութեր, վորոնք, նայած պայմաններին, կարող են առաջացնել ալիքալիություն կամ թթվագություն: Կոլիզիկներ են արդյոք վերջին նյութերը, թե՞ վոչ,—մինչչե այժմ դեռ վերջնականապես պարզված չե, սակայն փաստն այն է, վոր կալցիումի կոմպլեքսը, հավանողեն կալցիում-այլումուլիկաները, շատ կարևոր գերեւ են կատարում, վորովհետև յերբ կալցիումը փոխանակվում է նատրիումով կամ ալլ հիմքով, այն ժամանակ հողը, վորպես բույսերի սննդառության միջավայր, վատանում է: Այսպիսով կալցիումն իր առանձնահատկություններով տարբերվում է մյուս ելեմենտներից, վորովհետև մենք արդեն գիտենք, վոր նրա բացակայության հետ միաժամանակ չքանում ե նաև հողի բերքատվությունը:

Բույսերի անեցողությունը դաշտում հանդիսանում է վորպես այս բաղմաղան փոփոխությունների արգասիքը: Հավանողեն մարդու կարողությունից վեր և հաշվի առնել այս բոլորը և նախագուշակել արգասիքը: Սակայն հետազոտությունները հայտնաբերել են այդ փակառները և մեծ քանակությամբ գիտելիքներ են տվել հողի և բույսերի աճեցողության մասին: Մրանցից շատերն արդեն կիրառվում են գյուղատնտեսության հիմնական պրոբլեմների լուսաբանության և հողի բերքատվության բարձրացման համար: Սակայն սրանց արժեքն այդ նյութական ոգութից այն կողմն ե անցնում: Նա զինում է ուստիցին այնպիսի:

սկզբունքներով և փաստերով, վոր նա հնարավորություն եւստանում առողջ սիստեմ մշակել գյուղական յերիտասարդության կրթության համար, միաժամակ նա գյուղացիներին բացատրում և այն հրաշքները, վոր նրանք ամեն որ դիտում են: Անցյալը լի յեղուտերի հրճվանքներով և հաղթանակի որերով, սակայն նա ցույց եւ տվել նաև, վոր կիրառական գիտությունների գյուտերը միշտ հետևում են մաքուր զիտությունների զարգացմանը: Մեր զյուղատնտեսության բարելավման ամենահիմնական ուղին հողի, բույսի և կենդանու մասին դիտելիքներ կուտակելն եւ Եմսիրիկ մեթոդը, ճիշտ եւ անցյալում մեծ առաջադիմություններ և յերկան բերել սակայն այդ ուղին դանդաղ և անապահով եւ կախված է պատահականություններից: Առաջադիմության միակ ճիշտ ուղին հեկակտ դիտությունն եւ, ուստի անհրաժեշտ և խրախուսել նըրանց, ովքեր բռնել են այդ ուղին: Նրանց գործը դանդաղաքայլ եւ, դժվարին և հաճախ հուսախարիչ: Բնության նույնիսկ ամենահասարակ բաների մասին ամեն ինչ իմանալը մարդկանց համար անհասանելի յեւ, սակայն դիտությունը մեղ մոտավոր ճշմարտության եւ բերում, վորին մարդիկ լիովին հասնել չեն կարող: Այս դիտնականները, մեծ գործ են կատարում: մարդկային բնության մեջ դրված եւ հետազոտելու մշտական ձգտումը, չբավարարվել դիտեցածով՝ միշտ համարձակորեն անցնել գեղի անհայտի ուսումնասիրությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

b2

Հեղինակի առաջարանը հայերեն հրատարակության
առթիվ 5

b3

ԳԼՈՒԽ ԱՐԱՋԻՆ
Բույների սննդի ուսումնասիրությունը 9

b4

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ
Դրական դիտությունը և ճշգրիտ ապացույցները 33

b5


ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ
Որդանական նյութերի քայքայումը և կենդանի բույսը 52

b6

ԳԼՈՒԽ ՅՈՐՈՌՈՐԴ
Հողի միկրոօրդանիզմները ՀԵՂԲԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
Գու. Պող. Եկամուտուն
Հողը և աղբող բույսը 79

b7

ԳԼՈՒԽ ՀԵՆԳԵՐՈՐԴ
Հողը և աղբող բույսը 92



Հողը և աղբող բույսը 92

Ա. ՄԱԿԱՐԵՆՈՎԻ ԱՆՁՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԺԱՅՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԱՐ

Հայկական մասնակիութեան պահանջանքները

Հայկական պահանջանքները

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՆՔՆԵՐԸ

Հայկական պահանջանքները

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՆՔՆԵՐԸ



Տպագրվել է Պյուդերատի տպարանում: Տպարանի վարիչ՝ Մ.
Քեշյան: Գրաշաբական ցեխի վարիչ՝ Ա. Գոշյան: Շարել և գրաշար
Գ. Խաչատրյան: Տպագրի և Ա. Մկրտչյան: Կազմարարական աշխա-
տանքը դեկանալու և Ա. Մոսյան: Սրբագրիչ՝ Սու Հակոբյան: Տպարանի
պատվեր № 539: Գլավիլու № 8861: Հանձնվել է արտադրույթան
1933 թ. դեկտեմբերի 1-ին: Ատորագրված և տպագրվու 1934 թ.
Խումանի 15-ին: Թուղթը՝ վեցինստիլի փորման 61×93 սմ., մեկ տպա-
գրական թերթում՝ 76,800 տպ. 62, 71/8 մամուլ+20, եզ (պատկերներ):

209

ՀՀ Ազգային գրադարան



NL0276950

15350